



Բնագր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Դ. ՏԱՐԻ 1965
ՓԵՏՐՈՒՄ 2

باكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارليك فزانجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

ԲԱԿԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՐԹԻՇՏՈՒ

ՎԱՐԻՋ ԽԱՐԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽԱՐԱԳԻՐՆԵՐ
 ԵՂ. ՊՕՏԱԳԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԴ
 Յ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Վ. ՅԵԱԿԱՆ

ԽԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԷ
 ED. BOYADJIAN
 B.P. 1153, BEYROUTH - LIBAN
 Հեռագրային քիւ 252786/14

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ա. ՆՈՒՐԵԱՆ
 Ն. ՊԵՏԻԿԹԱՇԼԵԱՆ
 Վ. ԳԵՈՐԳԵԱՆ
 Ն. ՕՏԱՃԵԱՆ
 Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ
 Յ. ՇԻՐԱԶ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 Ա. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ
 Ն. ՎԻՐԱՊԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Յ. ԳԵՂԱՐԴ
 Լ. ՄԿՐՏՁԵԱՆ
 Ժ. ԿԵՕՎԵՐԶԻՆԵԱՆ
 Բ. Փ.
 Յ. Գ.
 Յ. Ք.

 ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԼՈՒՐԵՐ

Բագրու

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Դ. ՅԱՐԻ, ԹԻՒ Յ

ՓԵՏՐՈՒԱՐ 1965

ԳԼԵՐՈՒԹ

ԲՈՑԻՆ ՄԷՋ ԿԱՐՕՏԻ

Ի՞նչ բացարարաւ հայրենիքի բազմ, երբ ամէն գիշեր,
Անոյն երգիս չարցող ճիւղերէն մէկ բանի կտոր
Կը նետեմ գգուշ, քու լուս կարօտիդ տկաւթին անտէր,
Որ միշտ վա՛ն մնաս ու ամէն օր նօր երգ դառնաս բռնոր:

Անհուն կապոյտէդ կախուած Դեղամայ ծովուն ծվանքէն
Երբ ամէն առտու կ'արթննամ տենդով՝ ալիքի աղի
Արցունք կը կաթի ու արշալոյսի ուղեւորին մէջէն՝
Ի գուր կը փնտռեմ ա՛լ երազ դարձած ձուկն իմ իշխանի:

Քու լոյսը մուրի՛ն անեցաւ միայն, եղաւ բայց վեհաւ,
Նժան ռվէտնի խաւարին իջնող արեւի շողին,
Ի՛րան գգուանքէն շիթեր արցունքի կ'ըլլան մարգարիտ - .
Հրապոյրք սիրոյ կարծես կենսատերս՝ յոյսի արգանքին:

Մեզմէ անիւ արծող էութեանդ հասնելու տենչով,
Գաղտնի սէրերու բազում առուակներ կը բխին սրտէս
Այգաբացի մեզմ լուսազանգերու անուշ կարկաչով,
Որ Ծաղկաձորէդ՝ սրտակներ բոյրի անոնց մէջ փշրես:

Ու կեանքն այստեղ՝ քաղցրամայ քեզմով եւ մեր հոգիի
Մթին խորշերուն ծորի արփառառ նեկտարն անունիդ,
Որպէսզի յանկարծ երբ երաւէրիդ լոյսը չծագի՝
Պատրա՛նքը դարձին գէթ մեղրահասի կարօտի գուռիդ:

ԱՇՈՏ ՆՈՒՐԵԱՆ

Ն. ՊԵՇԻԿՅԱՆԵԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ԳԻՐՔԵՐՈՒՆ ՎԻՇՏԸ

Բարեկամի մը մատենասենեակին մէջ նստած էի առանձին, սեղանի մը առջեւ, ու կը կարդայի Հին, Հագուստագիտ Հատոր մը, երբ, յանկարծ, լսեցի խորհրդաւոր շուկներ ու լսողութիւնս լարեցի:

Դէմի դարակին երրորդ շարքին մէջ գտնուող երկու գիրքեր կը խօսակցէին: Ահա թէ ինչէ՛ր լսեցի.

— ...Որովհետեւ ես նորեկ մըն եմ այս մատենասենեակին մէջ, ու չեմ ճանչնար այստեղ գտնուող գիրքերը: Քանի որ դուն իմ դրացիս ես ու արթուն ես, կը խնդրեմ որ ինծի տեղեկութիւններ տաս:

— Սիրով, հաճոյքով: Սակայն, նաեւ դուն ըսէ թէ ի՞նչպէս կը կոչուիս եւ ուրկէ՞ կու գաս:

— Անունս է «Մանանայ»: Իմ բուն տէրս, որ կը կոչուէր Տակմուր Կողմոսեան, շատոնց մեռած է: Անոր մահէն ետքը, Էդայ իր զաւկինը, ապա՝ տիրոջ թոռանը, որ արդ եօթանասնամեայ է: Հիմակ ալ տէր ու տուն փոխեցի:

— Մեր տէրը գնե՞ց քեզ...

— Ձգնեց, գողցաւ:

— Այստեղ գտնուող գիրքերուն կէտէն աւելին գողցուած են մեր տիրոջ կողմէ:

— Մեր գրասէր գող տէրը ի՞նչպէս կը կոչուի:

— Կը կոչուէր Արամ Տէվէեռտանեան. Հիմա կը կոչուի Արման տիգի:

— Իրապէս գրասէ՞ր է:

— Վերջին գրասէրն է, բայց անվերջ փլեթքաման է:

— Գրասէրները գո՞ղ կ'ըլլան

— Գրասէրներն ալ, գրողներն ալ, դրամաճառներն ալ գող կ'ըլլան ընդհանրապէս:

— Բայց չէ՞ որ գիրքերը բարոյական ունին, խելք ու խիղճ ունին: Ի՞նչպէս կ'ըլլայ որ գիրքի հետ գործ ունեցողները կը դառնան գող:

— Բարոյականը մեր մէջ, այսինքն գիրքերու մէջ մնացած է ու սեղմուելով խեղդուած է: Գիրքերը եթէ կարենային բարոյական ներարկել, այսօր, մարդկութեան ընթերցող զաւակարգերը վերածուած պիտի ըլլային հոյ ի հոյլ հրեշտակաց: Գիրք կարդացողները անգամ չկրցան բարեփոխուիլ. ա՛յ կրնաս երեւակայել որ երբ Հիմա մարդիկ կարդալէ դադարած են, դարձած են քանիսն անուղղայ:

— Լա՛ւ: Բայց արդ հաճէ՞իր պատասխանել Հարցումներու:

— Պատրաստ եմ պատասխանի:

— Սա մեծափոր գիրքերը, որոնք դեմացի դարակին առաջին շարքին մէջ են, ո՞վ են, ի՞նչ են...

— Անոնք բառարաններ են: Հեղինակաւոր ու յաւակնոտ մատենաներ են: Շաբաթը քանի մը անգամ կը յայտարարեն՝ թէ մեր մէջ, բացի սուտերէ, կան սխալներ բառական, նոյնիսկ քերականական:

— Ճիշդ է իրենց ըսածը...

— Յաւալի է որ ճշմարիտ է, ճշմարիտ է որ ցաւալի է:

— Ի՞նչ կը պատասխանուի անոնց:

— Մենէ՛ր ոմանք, աղիճ գիրքերը, կը պատասխանեն. «Սուտ ենք կամ սխալ»:

բայց լի ենք դեղեցիկ խօսքերով, աղ-
ուոր պատմութիւններով: Իսկ դուք ի՞նչ
էք. բառե՛ր, միայն բառեր, անկեանք
բառեր: Մինչդեռ մեր մէջ բառերը շունչ
ունին, շնորհ ունին եւ շատ անգամ դոր-
ծածուած են տաղանդով ու տեղին:

— Բառարանները ի՞նչ կ'ըսեն...

— Օ՛ր, վէճը վախճան չունի, մարդ-
կային յամառութեան պէս: Աշխարհի
մէջ, ինքզինքը չպաշտպանող, ինքզինքը
քննադատող, ինքզինքը ամբաստանող
կարելի՞ է գտնել, բացի սովետական եր-
կիրներու բնակիչներէն: Թէեւ անոնց
ինքնաբաւարարութիւնն ալ՝ տեսակ մը
ինքնապաշտպանութիւն է:

— Բայց ըսէ՛ր թէ՛ սա «աղիւն» կոչ-
ուող գիրքերը որո՞նք են...

— Գիտական աշխատութեանց պատ-
կանող գիրքերը արժամարձանք ունին
հանդէպ գրական գիրքերու, եւ զանոնք
անուանած են «աղիւն»: Բայց պէտք է ը-
սել որ անարդար արտայայտութիւն մըն
է: Գրական դործերը եթէ նոյնիսկ տղիճ
են, տակաւին անոնց մէջ կան պերճադի-
ւեր, որոնք մեծ դեր կատարած են յո-
ղուտ մարդկութեան, ինչպէս կարգ մը
չքնադադող պերճադիւններ՝ պատմու-
թեան ընթացքին:

— Պատմութեան գիրքեր ալ կա՞ն
աշտեղ:

— Ուրածիդ չափ: Սա գէ՛մի սեւ կա-
շեկագմ հաստափորը ընդհանուր ազգաց
քննական պատմութեան մատեան մըն է
պատկառելի:

— Պատմութեամբ շատ կը շահագոր-
դուուի: Կը փափաքիմ բաներ մը գիտ-
նալ. օրինակի համար. ո՞ր ժողովուրդն
է հնագոյնը:

— Կրնամ ըսել քեզի. ամէնէն աւելի
հնագոյնը Թուրքն է, քանի որ, ըստ
թուրք պատմագէտներու, յաւիտենակա-
նութենէն առաջ, Աստուծոյ ստեղծած
տիեզերքէն առաջ, երբ խուար էր ա-
մէնուրեք, Թուրքերը կ'ապրէին արդէն
խաւարին մէջ, խաւարը ուտելով: Թէ՛
Թուրքերուն, թէ՛ անոնց տարտարոսեան
տիրապետութեան տակ արորուած ժողո-
վուրդներուն մեծ զժախտութիւնը ա՛յն

է որ նախապէս քառասունակ եղած Թուր-
քերը ծծած ու իրենց ծուծերուն մէջ ան-
ցուցած խաւարը վանել չկրցան իրենց
մէջէն: Ձահողութեան լոյսով: Ընդհա-
կառակն ըլլալ ուղեցին ու յաջողեցան ըը-
լալ լուսաստան:

— Միթէ լոյսը սպաննել կարելի՞ է...

— Այդ սեւ հրաշքը քանի մը ժողո-
վուրդներ միայն կրցած են կատարել:
Այդ յոռի հրաշքով՝ իրենց սեւութեամբ
փայլած նե վանտալները եւ Թուրքերը:

— Իսկ քառսը ո՞վ ստեղծած էր:

— Ինչ որ Աստուծոյ ստեղծագործու-
թիւնը չէ, ստեղծագործութիւնն է Ձի-
ներուն, որոնք հին գիւտարարներ են:

— Ուրեմն Ձիներն են հնագոյն ու մե-
ծագոյն ժողովուրդը:

— Ձիներն են, որոնք Ռուսերուն ըս-
տեղծած համայնավարական նոր քառսը
կը քննադատեն, ու իրենք կ'ուզեն վե-
րըստեղծել կատարելագործուած քառսը:

— Ամենայն դէպս, Ռուսերն ալ, Ձի-
ներն ալ մեծ են ու երկայնամիտ:

— Իրենց մեծութեան երկարութեամբ
չինտծ են պատեր, պարիտպներ, վարա-
գոյրներ ու վարտիքներ:

— Ի՞նչերու կը ծառայեն ասոնք...

— Պատը պարտութեան նշան է, պա-
րիսպը՝ պաշտպանութեան ու պաշարու-
մի, վարագոյրը կ'ապացուցանէ թէ՛ ող-
բերութեան մը, թէ՛ կատակերգութեան
մը գոյութիւնները, իսկ վարտիքը կը
ծածկէ խայտառակութիւնը եւ կը փրկէ
կոչուելէ անվարտի: Բայց, ոխիւի Մա-
նանայ, մեր խօսակցութիւնով հաւանա-
բար կը խանդարենք սեղանին առջեւ նըս-
տած կարդացող պարոնը, որ թէեւ կէս
մը խուլ է, սակայն երբեմն խուլերը չը-
չուկներն ու մրմունջները անդամ կը լը-
սեն, երբ գտնեն շահեկան:

— Բայց պարոնը ունկնդիրի վիճակ
չունի. խորասուզուած է ընթերցանու-
թեան մէջ:

— Ձեռ ճանչնար զինքը, ու կը խա-
ուիս երեւոյթէն: Այս պարոնը կրնայ թէ՛
կարդալ, թէ՛ տեսնել եւ թէ լսել: Սա-
տանայ մըն է, բայց չար չէ, հակառակ
համբաւին: Գրող կարդացող մըն է: Կար-

դացող ըլլալով՝ դրողները մնացած են:

— Յաւալի է որ յոյժ պահած են ընթերցողները:

— Գիրքերս որքան ալ ունենանք սուտեր ու սխալներ, բայց կը ձգտինք ճշմարտութեան, ուղղութեան: Գիրք ու թերթ չկարդացողները ասուն անասուններ են:

— Մեր գրոյցը վերջացնելէ առաջ, ճշգրտ մը, Հայերէն թերթ ու գիրք կարդացողները ծարդ են, եթէ չեն կարդար գողնալով կամ փոխ առնելով: Ես ծարդ անձր կ'ըսեմ, որ կը կարդայ վճարելով:

— Հայոց մէջ, բացառութիւնները յարգելով, վճարողները չեն կարդար, կարդացողներն ալ չեն վճարեր:

— Ես՝ քառասունըջինը տարի է որ չեմ կարդացուած:

— Ատիկա բան մը չէ: Ես հարիւրմէկ տարի է որ լոյս աշխարհ եկած եմ ու մէկ անգամ չեմ կարդացուած տակաւին:

— Ի՞նչ կ'ըսես... Ի՞նչպէս կը կոչուես...

— «Հաւաքածոյ Հայկական Առաջուածոց»: Քնանա՞նք, քնանանք, նման գրաստեցներուն:

— Բարի քուն: Դուն քնացիր, ծոցը մտած մեր քնացող բախտին: Վիշտը արդէք է քունի:

— Մի՛ մոռնար որ աւելի դժբախտները կան մենք: Միտթարուէ՛ մտածելով որ մաս կը կազմեն մատենադարանի, եւ ոչ մասանի, ինչպէս շատերը Հայերէն գիրքերէն, դատապարտուած դառնալու մոլեկերու կեր:

— Բայց երբ կը մտածեմ ժեր ապադային ժառին...

— Մի՛ մտածեր այդ մասին: Դուն քեզ մի՛ թունաւորեր: Ամէն ինչի ապադան մասն է. երկրագունդին ալ, արեւուն ալ: Բացառութիւն չկայ: Դո՞ւն պիտի խուսափիս Օրէնքէն, Վիշտը անվատակ է, վիշտը վնասակար է: Քնացի՛ր. ժամանակաւոր քունը՝ կարճ բայց զգալի երջանկութիւն մըն է: Յաւիտենական քունը՝ անվերջ ու անզոյս երջանկութիւնն է: Քնացի՛ր, որպէսզի արթննալու ինչուութիւնը ունենաս: Քուն բարի:

Տ՜

Հետեւեալ օր, դարձեալ կը գտնուէի մատենասենեակը, խորասուզուած չին հանդէսի մը հաւաքածոյին մէջ, երբ կրկին սկսան խօսիլ երկու գիրքերը:

Մանանան ինծի համար հարցուց.

— Բայց այս գրողը ինչու՞ կը գրէ քանի որ...

«Հաւաքածոյ Հայկական Առաջուածոց»ը ընդմիջելով պատասխանեց.

— Կը գրէ թէ՛ ապրելու, թէ՛ ապրելու համար:

— Գրքունակ մի՛ խօսիր: Եղի՛ր պարզ ու պարզաբան:

— Լա՛ւ, լա՛ւ: Կը գրէ ապրելու համար, որովհետեւ եթէ չգրէ՝ կը մեռնի: Կը գրէ նաեւ ապրելու, այսինքն ազդուաւոր ապահովելու համար: Կարգալը ու գրելը իր մոլութիւնն է. այդ մոլութիւնով է որ հացը կը շահի:

— Տարօրինակ բան: Ուրիշները իրենց մոլութեան պատճառով դրամ կը ծախեն, իսկ այս մարդը իր մոլութեամբ է որ դրամ կը շահի: Գինեմոլները, կնամոլները, խաղամոլները, հաշիւամոլները ահագին դրամ կը մսին մոլութեան համար: Ուրեմն այս մարդը երանելի է:

— Նահաւանքներ երանելի են: Հայոց մէջ, հրաշքի հաւատար երեւոյթ է՝ միայն գրելով կարենալ ապրելու: Բայց ինչ ապրիլ. առաւելագէտ տառապիլ ու տրորութիլ: Այս մարդը քանի անգամ պարտաբերու եւ պարտականութիւններու մէջ թաղուած ու յարուսթիւն է առած: Քանի քանի անգամ ալ դառնուած է անել լարիւրինթոններու մէջ ու համբարձած է: Մարդ մըն է որ աղէտէ մը ուրիշ աղէտի մը մէջ կը մտնէ, ճակատագրին տնօրինութեամբ: Մինչդեռ ուրիշներ աղիտահար կ'ըլլան, ան ընդհակառակն աղիտներէն կեանք կ'ընդունի: Ու ժիշտ, ամէն օր կը գրէ, որպէսզի չհիւանդանայ. իսկ երբ հիւանդանայ, կը գրէ որ առողջանայ:

— Գրելէ դատ ի՞նչ կ'ընէ...

— Կը գրէ ու կը քնանայ երազելով: Կը փափաքի քալել ալ, բայց ժամանակ ու կարողութիւն չունի:

— Կը ճաշէ անշուշտ։

— Բանջարակեր, սակաւակեր ու պարզակեր է։ Շատ ուտել չկարենալը՝ մէկ ողորմութիւնն է Աստուծոյ, հայ գորոգին համար։ Բայց ծխող է ու կ'ըմպէ մէկ-երկու բաժակ զինի։

— Գրած ատեհ՞ը կը ճաշէ, թէ ճաշած ատենը կը գրէ...

— Ո՛չ մէկը, ո՛չ միւսը։ Իրեն համար կ'ըսեն թէ գրած ատենը միւսը կ'ուտէ մարդոց, հակառակ բանջարակեր ըլլալուն։ Թէեւ բաւական մարդ կերած է, սակայն կերած է այնպիսի անձեր, որոնք մտեղէն չեն, այլ բանջարեղէն, ինչպէս կանկառ, կաղամբ կամ դդում։ Բայց իր միւսը ուտողները համբանք չունին։ Անգուցի կը կարծուի, բայց հաւ մը մորթած չէ, մըջիւնի մը վրայ կոխած չէ, նոյնիսկ պտուղ մը կեղուած կամ կտրած չէ։

— Կ'երեւի շատ կը վախնայ Աստուծո՞մէ։

— Բայց ունի խաղաղ խիղճ։

— Ուրիշ ի՞նչ բանէ կը վախնայ...

— Միշտ վախցած է Մահէն։ Հիմա Կեանքէն ալ կը վախնայ։ Ո՛չ մեռնիլ կ'ուզէ, ոչ ալ իր կեանքին պէս կեանք մը շարունակել։ Եւ երբորդ ճամբայ դուրս թիւն չունի։

— Բայց ինչո՞ւ կը վախնայ Կեանքէն ալ...

— Ինք հետզհետէ կը ծերանայ ու Կեանքը կը խտանայ, կը շարանայ։ Կը վախնայ թշուառութեան արջառպէն։ Սակայն, միշտ քաջ է խօսելու եւ գրելու համար ճշմարտութիւնը։

— Թէ՛ վախկոտ, թէ՛ քաջ ըլլալը կ'ըսես։ Ի՞նչպէս կ'ըլլայ...

— Տխմար է ա՛յն՝ որ ո՛չ մէկ բանէ կը վախնայ։ Ճաշագար է ա՛յն՝ որ ամէն բանէ կը վախնայ։

— Իր վախին ու անվախութեան մէջ, ի՞նչ ունի իրեւ միտքարանք կամ ոգեւորութիւն։

— Իր աղօթքը, իր երեւակայութիւնը եւ զուարթամտութիւնը։

— Առաւելապէս ներահայեաց է թէ արտաքսահայեաց...

— Ատոնցմէ ամէն մէկը թէեւ արտախորութիւն մըն է, բայց մէկ արտախորութիւնը միւսին բացակայութիւնով՝ կը դառնայ թերութիւն։ Այս մարդը ամենահայեաց է։ Թէ՛ լուսնին մէջ է, թէ՛ երկրի վրայ։ Հողին ներկայ է լուսնին մէջ, միտքը երկրէն բացակայ չէ, իսկ մարմինը մնացած է օդառկած։ Լուսնին ալ իր մէջ է։

— Հողի ըսածդ մարդուս ո՞ր մասին մէջ կը գտնուի...

— Մարդէն կախում ունի։ Մարդ կայ՝ որուն հողին գլխուն մէջ է։ Մարդ ալ կայ՝ որուն հողին կուրծքին տակն է։ Հողին ստամոքսին մէջ աքորած ու հոն բանտարկած՝ մարդիկ ալ կան։ Նոյնիսկ կան մարդիկ՝ որոնց հողին կը գտնուի իրենց նստատեղիին մէջ։ Կրնաս երեւակայել՝ հէք հողին որքան տրորուած ու ապակցած ըլլալը։ Տակաւին կան այնպիսի մարդիկ, որոնց հողին իրենց վարի մասերուն մէջ տեղաւորուած է։ Այդ կարգի մարդոցմէ ոմանք սակայն, յաջողած են իրենց հողին բարձրացնել՝ դրնելով իրենց դրամապանակին մէջ։

— Ի՞նչ տխուր բարձրութիւն։ Թէեւ դուն բաւական բան գիտես, բայց ունեցածդ ցաւալի դիտութիւն է։

— Ամէն գիտութիւն ցաւալի է։ Մանաւոր հայ կեանքին գիտութիւնը։

— Հայ կեանքին մէջ ամէնէն ցաւալին՝ չգոյութիւնն է գրասիրութեան։

— Այդ պատճառով կոյս մնացած եմ։

— Ի՞նչ տխուր կուտութիւն։ Բայց դուն ի՞նչպէս տեղեակ ես բազմաթիւ հարցերու...

— Որովհետեւ այստեղ երբեմն կը հաւաքուին քանի մը գրողներ ու կը խօսին, իսկ ես կ'ունկնդրեմ։ Քու հոս գալէդ քանի մը օր առաջ, պարոնին մէկը, այստեղ նստած գրողին ըսաւ՝ թէ համաձայն վերջին վիճակագրութեան մը, որուն մէջ նկատի առնուած են աւելի քան եօթանասուն ազգեր, ամէնէն շատ թարգմանուած ու սպառած գիրքերը հեղինակութիւններն են Լենինին, Միլանին, Ժիւլ Վէրնին, Ժորժ Միսընոնին, Ակաթա Քրիստիին։ Թէ անոնցմէ ետքը

կու գան Պալլաքը, Թոլյութուն ու Շէյքըս-
բիրը: Գրողն ալ պատասխանեց.— «Ու-
րեմն մարդկութիւնը չի կրնար պարծե-
նալ գեղարուեստական գրականութեան
ընթերցումով, քանի որ առաւելապէս կը
կարգայ ընկերային, քաղաքական, ու-
տիկանական հասոյթներ: Իսկ Հայերս
կրնանք պարծենալ իրողութեամբ մը, որ
հազուադէպ է, դրամով ժողովուրդներու
մէջ անգամ: Մեր մէջ կը սպառին բա-
նաստեղծութեան գիրքերը: Մեր տան-
տէրը ապահար հարցուց թէ ճամբի՞ս
է ըսածը: Գրողը աւելցուց.— «Ճամբիտ
ըլլալը ճամբիտ է, բայց քննութեան չի
գիտնար այդ ճամբորդութիւնը, որով-
հետեւ մեր քերթողները երեւոյթիւրէն
հինգհարիւր հատ կը տպեն իրենց գիր-
քերը եւ կը սպառեն ասոր անոր նուէր
տալով: Սրինակի համար Պրն. Լարունի
իւր ոտանաւորներու գրքովը սպառած է,
մոռնալով իրեն համար իսկ հատ մը պտ-
հել: Դիմած է իւր բարեկամներուն, ա-
նոնցմէ մէկէն ետ առնելու համար իւր
ընծայած գիրքը, սակայն չէ գտած, ո-
րովհետեւ անոնց քովն ալ սպառած է,
պատուելով ու աղքատն նետուելով:
Եւ ահա թէ ի՞նչպէս կը սպառի բանաս-
տեղծութիւնը մեր մէջ: Մեր տէրը ծի-
ծաղեցաւ ու ըսաւ.— «Ես պահած եմ այդ
անպիտանին գիրքը, պահած եմ, օր մը
կարդալու եւ խնդալու համար իւր տըխ-
մարութեան եւ տափակութեան վրայ»: Ու
անկիւնէ մը մէջտեղ հանեց գիրքը,
որուն էջերը դեռ չէին կարուած: Գրողը
յայտարարեց.— «Քեզ Հրեայ կը կարծէի,
բայց կատարեալ հայ քրիստոնեայ ես ե-

ղեր. դանակ դպրուցած չեա բանաստեղ-
ծութեան»:

— Տխո՛ւր, շա՛տ տխուր բաներ կ'ը-
սես:

— Կ'ուզե՞ս որ ուրախ լուր մըն ալ
տամ. աւետիս մը:

— Ո՛վ գիտէ ի՞նչ գոյժ մըն է...

— Եթէ ուրիշ ազդեցու մէջ գիրքերը
կը սպառին, մեր մէջ ալ գրողները կը
սպառին: Նախ՝ հայ գրողը անձնապէս
կը սպառի: Երկրորդ՝ դրական ասպա-
րէզին մէջ ալ հայ գրող կոչուող անձե-
րը պիտի սպառին ու չքանան:

— Հետեւանք ի՞նչ պիտի ըլլայ...

— Եթէ այսպէս շարունակուի, հայ
ժողովուրդն ալ պիտի սպառի: Հայերը
թէ՛ ողոսական արտասահմանի, թէ՛ մի-
ջազգային արտասահմանի մէջ, իբրեւ
սպառուողներ՝ կը մնան անդերազանցե-
լի: Գիրքի սպառումը ի՞նչ է որ... Զգա-
յացունցը Հայոց սպառումն է: Եւ օր մը,
արտասահմանեան վերջին Հայը պիտի
պոռայ միւս ժողովուրդներուն.— «Դուք
դեռ հո՞ս էք, դեռ մնացա՞ծ էք, դեռ
կեցա՞ծ էք, տնվահառուի սպրանքի նը-
ման: Մեզի նայեցէք, սպառեցանք ծխիկ-
ներու պէս...»

— Այս պայմաններուն մէջ, ուրեմն
բնաւ յոյս չկայ որ կը կարդացուիք...

— Տխմարօրէն չտխրինք: Այդ յոյսը
սողօթադիրքերը միայն ունին. յոյս առ-
ժամանակեայ: Գիտե՞ս թէ ի՞նչպէս կը
կարդացուին. ընդհանրապէս լպպելով,
լպտելով:

ՆՇԱՆ ՊԷՇԻԿՍԻՍԻԱՆ

ՊԱՀԱԿՆԵՐԸ

Արշալոյսներն ահա շողով կը լինան,
Հորիզանէն կը բարձրանայ ռսկեման
Հայրենի վառ արեգակը յաղթական:

Կռիւն եղաւ անհատաւոր ու դժխեմ,
Ինկան անոնք, — պահակները մեր ամէն,
Հակառակը բռնութեան դէմ համօրէն:

Ինկան հպարտ, ինկան որպէսզի ապրի
Հայ միտքն երկնոյ, ստեղծագործ, բազմաբի,
Լուսաւորէ չորս կողմն Հայոց աշխարհի:

Անոնց հեռիէն այժմ կ'ըմբանան երազում
Նոր պահակներ երիտասարդ, զուարթուն,
Անհունօրէն հպարտ, աչքերն աստղերուն...

ՎԱՐԴԱՆ ԳԵՈՐԳԵԱՆ

Պոէէնոս Այբէս, 19-1-63

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒՆ

Ինչպէս մանկիկը իր մօր հարազատ,
Թախշ ցրկին մէջ՝ ճոռաղում, զուարթ,
Եւ ինչպէս աստղերն երկնակամարին,
Բամպակ ամպերու մէջը մարմնըին...
Նաեւ Արեւը, ամբի՛ւ դարերով՝
Հաւատարիմ ու ռսկի շողերով,
Կեանք կը պարգեւէ համար աշխարհի...:
Այնպէս ալ համո՛վ լեզուն Մերապեան
Արեւի մըման ջերմ, մեղրածորան...
Ու բազմաանգիս ջրվէժներու պէս,
Բարձրէն կը եռի... ռուբրերու սրտէն...:

Ն. ՕՏԱՃԵԱՆ

Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ՔԱՂԱՔԸ, ՈՒՐ ՆԱՐԵԿ ԶԿԱՐ

Ա.

Բժիշկը գրույթեամբ գոցեց հիւանդին դուռը:

Վահան արդէն ոտքի էր: Գլանիկը ըզայնութեամբ ճգմեց մոխրամանին մէջը, եւ բժիշկին ուղղեց անձկագին նայուածք մը: Տօքթօր ձիւման գլուխը կախ՝ դորձիքները կը տեղաւորէր պայուսակին մէջը:

– Ինչպէ՞ս դտաք հիւանդին վիճակը, հարցուց Վահան:

– Հրաշքի կը հաւատա՞ք, ըսաւ բժիշկը:

– Հրա՛շք, ի՞նչ է հրաշքը: Եթէ օգտակար կրնայ ըլլալ կնոջ առողջութիւնը վերահաստատելու, կը հաւատամ հրաշքի:

– Գիտութիւնը անկարող է որեւէ բան ընելու կնոջ առողջութեան համար: Գիտութեան սահմանը անցնող ուժերուն հրաշք կ'ըսեն: Միայն հրաշք մը կրնայ փրկել ձեր կիները:

– Դուք հրաշքի կը հաւատա՞ք, Տօքթօր:

– Ո՛չ, ես գիտութեան մարգ մըն եմ եւ չեմ կրնար հրաշքի հաւատալ: Ո՛չ, հրաշք գոյութիւն չի կրնար ունենալ...

– Ուրե՞մն, որեւէ յոյս չկա՞յ...

– Յո՛յս, միշտ կայ տկար մարդ էակին համար: Նոյնիսկ գերեզմանի փոսին առջեւ մարդը կը յուսայ յաւիտենական կեանք: Կը կարծեմ թէ հրաշքը բան մը յուսալու մէջ կը կայանայ, երբ ամէն ինչ մարդոյ կը մղէ յուսահատութեան:

– Ի՞նչ է ձեր վերջնական կարծիքը:

– Միշտ հիմա հիւանդը ցաւ չէ ըզգացած: Քանոնը նենդ հիւանդութիւն մըն է. կը յայտնուի միայն երբ պատրաստ է աւլու մահացու հարուածը:

Քանի մը ժամէն կը սկսին ցաւերը, անտանելի, ճզմո՛ղ ցաւեր: Սակայն կրնանք զանոնք մեղմացնել, կրնանք նոյնիսկ ջնջել. անոր դեղը ունինք, կ'երթաս քիչ յետոյ կը զնեա դեղարանէ մը: Գալով մահուան, արդէն ճամբայ ելած է, եւ ոչ մէկ ուժ կրնայ կասեցնել անոր ընթացքը:

Բժիշկը մեկնեցաւ դեղագիր մը ձեռքով սեղանին վրայ, առանց մոռնալու նաեւ մանրամասն ֆաքթիւր մը:

Վահան աչքերը ուղղեց դէպի կնոջ սենեակին դուռը, եւ սկսաւ փոփոխել: Տակաւին իր եւ կատարուող ողբերգութեան միջեւ կար տախտակէ այս բարակ պատճառը: Դադարեանքն ալ շինուած են տախտակէ եւ կը նմանին դոյ գոններու:

Ինչպէ՞ս պիտի նայէր Սօնայի այլափոխուած դէմքին, երբ ան հանդէ՛ր դադարի ճերմակ սնդուակն վրայ: Այդքա՛ն կը սիրէր Սօնան, այդքա՛ն կապերով կապուած էր անոր, հիւսուած երջանիկ ու տխուր օրերու յիշատակներով: Կապուած էր մարմնական, հոգեկան եւ մտային կապերով: Եղած էին իսկապէս մէկ հոգի եւ մէկ մարմին: Եւ ահա անտեսանելի եւ անգուր ուժ մը պիտի անջատէր իրմէ իր մարմնին եւ հոգիին կէտը:

Ձեռք մը հանդիպաւ ուսին: Մեր մայրը իրեն այսպէս ըսաւ.

– Պղտիկները կը քնացնէի, երբ լսեցի բժիշկին ըսածները: Տղա՛ս, ես կը հաւատամ հրաշքի: Զիշդ է, մեր հասկըցած ձեռով կատարուած հրաշքները հաղուադիւտ են: Աստուծոյ ուղղակի միջամտութիւնը պէտք է անոր համար: Սակայն կայ առօրեայ հրաշքը, որ մէկ կէն ի մէկ չի յայտնուիր, այլ կը գործէ բնութեան օրէնքներուն համընթացօրէն:

Բայց պէտք է հաւատալ, որպէսզի հը-
րաշքը կատարուի:

— Ես պիտի հաւատամ այդ հրաշքին
որ պիտի տեսնեն Սօնային կիսանքը: Պիտի
հաւատամ այն ուժին որ կարելի պիտի
դարձնէ այդպիսի բան մը:

— Նախ, զնա՛ բեր բժշկին պատուե-
րած դեղը. վերջը կը խօսինք: Ես կը
մտնեմ Սօնային սենեակը զինք սփռփե-
լու համար:

Վահան հազաւ վերարկուն, դեղա-
գիրը դրաւ զբաւանը ու դուրս ելաւ: Փո-
ղոցը ճերմակ էր ձիւնով, եւ տեղ տեղ
ցոլակներուն լոյսը դեղնորակ սկաւա-
ռակներ կը կազմէր ճերմակ սաւանին
վրայ: Ստուերներ կ'անցնէին պատերուն
քսուելով, հոն ուր սեւ արահետներ բաց-
ուած էին ներքաններու տակ:

Ժամացոյց մը տասներեկուքը դար-
կաւ գլխուն վերերը, եւ ըստ էկեղեցի-
ներուն զանգակատուններէն, մէկիկ մէ-
կիկ վար թափեցան կէս գիշերուան հար-
ուածները, կարծես կ'ողջէին ժամանակը
բաժնէ երկուքի: Բայց գիշերը նոյնն
էր: Քնացողները կը շարունակէին քնա-
նալ, քալողները կը շարունակէին քալել,
հիւանդները միշտ կը տառապէին, իսկ
գինովները կը շարունակէին գինովնալ:

Փողոցին անկիւնի դեղարանը միշտ
բաց էր: Վահան դեղագիրը փոխանակեց
երկու սրուակ դեղերու հետ եւ աճապա-
րանքով տուն վերադարձաւ:

Մայրը դուրս ելաւ Սօնայի սենեա-
կէն, եւ աղուն ձեռքէն առաւ դեղերու
սրուակները:

— Ընդդ ժամանակին հոսար, ըսաւ:
Սօնան սկսաւ դանդաղել, ցաւերը սկը-
սան կուրծքէն: Քանի՞ դեղահաստ պէտք
է տալ մէկ անգամէն:

Վահան կարգաց սրուակին վրայ.—
երկու դեղահաստ, չորս ժամը անգամ մը:

— Դուն պատիկներուն սենեակը աչք
մը նետէ, ըսաւ մայրը, ես երթամ դե-
ղահաստը տամ Սօնային:

Վահան բացաւ դիմացի սենեակին
դուռը: Սայգալապտերը դեղնորակ լոյս
մը կը սփռէր պատերուն եւ տարկանե-
րուն վրայ: Մօտեցաւ երկու փոքրիկ

մահճակալներուն: Տիք եւ Ռօզի խաղաղ-
օրէն կը քնանային, մինչ անդին մայրե-
րին կը տուայտէր մահուան ճիրաններուն
մէջ:

Տիք եւ Ռօզի, Սօնային եւ իր մէջ
եղող ամբողջին կապերն էին:

Միւր մայրը դանոնք կը կանչէր Տիգ-
րան եւ Վարդուհի անուններով:

Համբուրեց զաւակներուն ճակատը
եւ մտաւ դահլիճ: Նստաւ թիկնաթոռի
մը վրայ ու վառեց գլանիկ մը:

Մայրը քիչ յետոյ դուրս ելաւ Սօնա-
յին սենեակէն:

— Դեղահաստերը առաւ եւ ցաւերը
սկսան նուաղել: Այնքան յոգնած էր որ
անմիջապէս քնացաւ:

Վահան մնաց լուռ, եւ գլանիկը տա-
րաւ բերանը:

— Հիմա ապահովեցիր մարմնին դե-
ղը: Ըրիր ինչ որ մարդ մը կարող է ը-
նել: Դուք բախտաւոր էք, աղաս: Կ'ապ-
րիք գիւտերու դարին մէջ: Ունիք հրա-
շադրած գեղեր. եւ այն հիւանդութիւն-
ները որ մեր օրերուն կիսանքեր կը խը-
լէին, հիմա կը չքանան քանի մը կաթիլ
զտնաւոր հեղուկի արդիւնքով: Եւ տակ:
Բայց մարդս կը շարունակէ մեռնիլ, ո-
րովհետեւ տակաւին կան անյաղթելի հի-
ւանդութիւններ:

Վահան գլանիկը բերանը տարաւ ու
նայեցաւ մօրը աչքերուն մէջ:

— Բայց մենք ունէինք դեղերու մե-
ծագոյնը, ունէինք մեր հաւատքը, ու-
նէինք մեր նարեկը: Երբ մէկը հիւանդա-
նար, քահանան կը կանչէինք, այդ
հրաշադրած գեղէն էջ մը կը կարգար հի-
ւանդին սնարին մօտ կանգնած, եւ յա-
ջորդ օրը, երբեմն այն նոյն վայրկեանին
հիւանդը կ'առողջանար:

— Մամա՛, հին հեքիաթներ մի՛ պա-
մեր. քիչ մը լուրջ եղի՛ր: Քաններորդ
դարու վերջերը կ'ապրինք. եւ հիմա
այդպիսի բան ընել ծիծաղելի է: Ինչ-
պէ՛ս կարելի է հաւատալ որ քանի մը
տող գրութիւն կրնայ հիւանդ մը բու-
սել:

— Մենք կը հաւատայինք, աղաս, եւ
կ'ըլլար:

— Այսօր շատ յոգնեցար, մամա՛, դնա, հանգիստ ըրէ՛։ Ես արթուն կը մընամ եւ եթէ բան մը պատահի քեզի լուր կ'ուտամ։

Ծեր կինը մտաւ պզտիկներուն քովի սենեակը, եւ անմիջապէս ծունկի եկաւ ու սկսաւ աղօթել։

Վահան անշարժ մնաց թիկնաթոռին վրայ։ Լուռ էր ամէն կողմ։ Հսկայ քաղաքը գանդապեցուցած էր իր շնչառութիւնը, յղփացած հրէշի մը պէս, որ կը մարսէ ցերեկուան սնունդները։ Սակայն հեռուներէն լայն ու լուսաւոր պողոտաներէն, հսկայածաւալ հրապարակներէն կը տարածուէր խուլ ու անասնական ժըխորը։ Մարդոց կիրքերը տակաւին չէին քնացած, եւ էգ ու արու ելեկտրական լամպերու սպիտակ լոյսերուն տակ կը շարունակէին սիրոյ եւ մեղքի խաղերը։ Յանկարծ դիմացի սենեակէն բարձրացաւ սուր ու անմարդկային ճիչ մը։ Ներս վազեց։ Սօնա աչքերը լայն բացած կը հետար ու երկու ձեռքերով կը ճզմէր կուրծքը։

Վահան դրպանէն հանեց երկրորդ սրնակը, ուր կար շատ ազդու բայց վըտանդաւոր դեղ մը։ Գաւաթ մը ջուրի մէջ երկու կաթիլ հոսեցուց ու բերաւ տառապող կնոջ։

— Ա՛ռ, խմէ՛ սիրելիս, ցաւերդ անմիջապէս կ'անցնին։

— Ո՛չ, Վահան, ո՛չ, այլեւս դեղ չեմ ուզեր։ ձգէ՛ որ մեռնիմ։

— Ինչո՞ւ խմել չես ուզեր։ Բժիշկը լաւ բաներ ըսաւ քիչ առաջ։ Յաւը ընդհանրապէս գէշ նշան մը չէ։ Գոնէ կ'որոշէ մարմնին հիւանդ մասը։

— Դեղը կը խմեմ ըսաւ Սօնա, քեզի հաճոյք պատճառելու համար։ Բայց պէտք է առաջ ինծի բան մը խոստանաս։

— Ինչ որ ուզես կը խոստանամ, միայն խմէ՛։

— Վահան, եթէ մեռնիմ, եւ գիտեմ որ պիտի մեռնիմ, գաւաթներս առանց մօր մի ձգեր։ Ամուսնացիր աղջկայ մը հետ որ ըլլայ պարկեշտ, եւ մանաւանդ ըլլայ հայ եւ հայերէն խօսի գաւաթներուս...

— Այդպիսի քաներու մասին մի՛ մըտածեր, ս՞ով ըսաւ որ պիտի մեռնիս։

— Թերեւս վաղուան արեւը շտեմնեմ, Վահան։ Խօսքերս մի՛ մոռնար։ Այս երկիրը մարդուս անձնականութիւնը կը սպաննէ, կը մոռնաս անցեալդ, կը դառնաս հասարակ Ամերիկացի մը, եւ ոչ թէ երեսուն դար պտտմութիւն ունեցող ազգի մը գաւաթը։

— Պէտք չկայ այդքան բծախնդիր ըլլալու։ Միտքդ մի՛ յոգնեցներ... մենք չէ որ պիտի փրկենք հայութեան խորտակուող նաւը...

— Մահը մեր հոգեկան աչքերը կը բանայ։ Կը հոսկնամ որ սխալած էի։ Վա՛յ ան մարդուն որ կ'ամէնայ իր ազգէն եւ անցեալէն... անիկա վատ մըն է, սողուն մըն է, փշրանքներ հաւաքելու համար լիբրերու առջեւ խոնարհող մը...

— Սօնա՛, հանգարտէ՛, այդ մասին վերջը կը խօսինք։

— Վերջը՝ հիմա է, Վահան։ Վերջը մեր ապրած վայրկեանն է։

Վահան դեղը լաւ մը խառնելէ ետք, ուժով մը խմեց։

— Եատ անհամ չէ, ըսաւ։

Սօնա գաւաթը առաւ, գլուխը քիչ մը բարձրացուց, ու Վահանին աչքերուն մէջ նայելով սկսաւ ծծել գունատը հեղուկը։

— Որքա՛ն անհամ է, ըսաւ։ Քեզի հաճոյք պատճառելու համար խմեցի։ Փոխարէնը քեզմէ բան մը ունիմ խնդրելիք։ Անմիջապէս որ քնանամ, ճամբայ ինկի՛ր, դնա՛ մեր հայ ծանօթներուն տունը եւ նարեկ մը դախի։ Կ'ուզեմ որ աչքերս վերջին անգամ չփակած, կրկին լսել հիանալի Սուրբին աղօթքները։

— Բայց մենք Սուրբ Գրիգ մը ունինք տունը։

— Անգլերէն է մեր ունեցածը, եւ Հայ մը պէտք չէ օտար լեզուով աղօթէ։ Եթէ Հայը հայերէն խօսի Աստուծոյ հետ, Ան դինք աւելի լաւ մտիկ կ'ընէ։

— Լաւ, սիրելի՛ս, ըսածդ կ'ընեմ։ Բայց գաղափար մը ունի՞ս թէ որուն քով կ'ընամ գոնեւ այդպիսի դիրք մը։

— Այս քաղաքին մէջ կ'ապրին հազար-

բաւոր հայ ընտանիքներ: Անպայման ա- նոնցմէ մէկը Նարեկ մը բերած կ'ըլլայ երկրէն:

— Իսկ եթէ անկարելի ըլլայ գտնել Նարեկ մը:

— Եթէ կ'ուզես զիս ողջ տեսնել վե- րադարձիչ, անպայման պտի՛ր ու բե՛ր: Կեանքս կ'ապուստ է անոր հրաշագործ բառերուն:

— Կէս գիշերը անցած է արդէն. կըր- ցածս կ'ընեմ: Գիտե՞ս որ դուրսը ձիւնով ծածկուած է, եւ անկարելի է ինքնա- շարժով ճամբորդել: Հազիւ պիտի կա բեռնամ քանի մը տուն այցելել:

— Այն ատեն, պտի՛ր մէկը որ քանի մը էջ, քանի մը ասղ գոց դիտնայ: Հետդ բեր ծեր քահանայ մը, եթէ գտնես եկե- ղեցիին ճամբան: Սիրելիս, լոյսը բաց- ուելէն առաջ պէտք է հոս ըլլաս:

Սօնա աչքերը գոցեց. ցաւերը չճա- ցած էին: Ամբողջ մարմինը թմրած էր, եւ քունը իր տառապած մարմինը գրկեց նախանձոտ ծօր մը պէս:

Բ.

Վահան դուրս ելաւ սենեակէն ու դուռը գոցեց գգուշութեամբ:

Մայրը զինք կը սպասէր դահլիճին մէջ: Իրեն երկարեց թուղթ մը որուն վրայ գլխադիր ՆԱՐԵԿ գրուած էր:

— Կրնայ ըլլալ որ գիրքը գտնես, եւ ոչ ոք կարենայ կարդալ անոր անունը. ուստի այս գիրքը կը բաղդատես կող- քին վրայ տպուած անունին հետ եւ դո՛ր- ծըդ կը դիւրանայ:

Վահան թղթիկը առաւ, նայեցաւ գիրքուն: Իրեն համար անծանօթ նը- ջաններ էին, անծանօթ լեզուի մը բա- ուր: Ձեռքերը տարաւ վերարկուն գըր- պանները ու դուրս ելաւ:

Զինը առանց բողբոջելու կրեց իր ներքանները: Մտքին մէջ ունէր անուն- ները այն հայ ընտանիքներուն որոնք կը բնակէին մօտակայ թաղերը:

Անցաւ միւս մայթին վրայ, եւ քա- լեց պատին երկայնքին բացուած սեւ ա-

րահատէն: Հովը կը փչէր մերթ մեղծ, մերթ սաստիկ: Երբ հասաւ փողոցին ծայրը, ձիւնը կրկին սկսաւ տեղալ:

Վահան տեսաւ մը անձկութիւն կը զգար այս կեղծ ամառութեան մէջ: Աշ- խարհի մեծագոյն քաղաքին մէջ կը գըտ- նուէր եւ ինքզինքը կը կարծէր անսահ- ման տափաստանի մը վրայ, ուր միայն իրեն կ'ընկերանար ողբացող քամին: Գի- տէր, պատերուն ետեւը մարդիկ կը զը- նանային. քանի մը փողոց անդին, պո- ղոտաներուն եւ հրապարակներուն վը- րայ տակաւին կեանքը կը յորդէր մեղա- ւոր հոտանքով մը: Բայց գիշերուան այս ժամուն, կեղծ էին լոյսերը, կեղծ էին յոյսերը, կեղծ էին ինքուրքը եւ երգերը: Բաւական քալելէ ետք կանգ առաւ տան մը առջեւ: Բարձրացաւ անոր հին- ցած քարէ աստիճանները եւ մատը դը- րաւ ելեկտրական կոճակին վրայ: Դուռը բացուեցաւ. իր յուսացածէն շատ աւելի կանուխ եւ իր դէմը գտաւ իր բարեկամ Ծարութիւն Դաւիթեանը. ներողութիւն՝ Հարրի Տախտարնը:

— Այս ի՛նչ լաւ անակնկալ է, ըսաւ Դաւիթեան: Եթէ հեռաձայնէի վստահ եմ որ պիտի չգայիր:

Դահլիճին մէջ կը տիրէր հաճելի տաքութիւն մը:

— Տիկինս, պզտիկները քնացնելէ ետք, բարեկամի մը հետ թատրոն գնաց: Ի՛նչ մը ուշացաւ. կ'երեւի ներկայացու- մէն ետք ընթերցու գացին: Մինչեւ որ վերադառնայ կրնաս ինծի ընկերանալ: Դաւաթ մը կ'առնե՞ս հետս:

— Ենթահակալ եմ, վայրկեան մը չու- նիմ կորսնցնելիք: Եկած էի քեզմէ բան մը ուզելու:

— Դաւաթ մը ա՛ն, եւ ըսէ ուզածդ:

— Տիկինս հիւանդ է, շատ ծանր հի- վանդ: Քանսէր է: Բժիշկը ըսաւ որ օրե- րը համրուած են: Նարեկ անունով գիրք մը ունի՞ք:

— Նարե՞կ, լսած եմ այդ անունը: Կարծեմ աղօթքի գիրք մըն է:

— Այո՛, այդպէս բան մըն է: Տիկինս կը փափաքի որ այդ գիրքէն, քանի մը էջեր բարձրաձայն կարդացուն իր սնա-

րին վրայ, եւ կը յուսայ որ պիտի առողջանայ:

— Այդ ի՞նչ տարօրինակ փափաք է:

— Այդքան աղաչեց որ ստիպուեցայ փողոցները ինչպէս:

— Ձեմ գիտեր եթէ ունինք այդ գիւղը: Տիկինը տարի մը առաջ գրադարան մը կազմեց, եւ թուր հայերէն գիրքերը վերը շտեմարանը դրաւ: Առիթի մը կը ապաստէ որպէսզի պանոնը դուրս գնէ, որովհետեւ շատ տեղ կը գրաւեն վերը: Եթէ կ'ուզես հետս վեր եկուր եւ փրկուի:

Յաճախ անկիւն մըն էր շտեմարանը, ուր խառն ի խառն նեղուած էին ամէն տեսակ հնութիւններ եւ անգործածելի առարկաներ:

Դաւթեան քանի մը հինցած թիկնաթուղի վերցուց եւ տակէն երեսան հանեց փոշեթաթի գրքեր:

— Ահաւասիկ, ասոնք են մեր ունեցած թուր հայերէն գրքերը:

Վահան կողքերուն գիրքերը բաղդատեց մօրը գրած բառին հետ:

— Ասոնց մէջ Նարեկ չկայ: Կը ներես որ անհանգիստ ըրի քեզ: Պէտք է երթամ ուրիշ տեղեր նայիմ:

— Բայց չմեկնած գաւաթ մը պարպէ՞ հետս: Գիտես դուք որքան ցուրտ է, յետոյ կը զղջաս:

Վահան նայեցաւ Դաւթեանի աչքերուն մէջ: Տաղապանք կար հոն: Ամերիկայի սանձաքձակ կեանքը չէր յաջողած սպաննել անոր մէջ հայու պատուախնդրութիւնը: Սակայն ան լուռ կը մընար, չէր ըսեր թէ որքա՞ն կ'ատէր այս կեանքը ուր կ'ինը կրնայ ազատօրէն ընտրել քարեկամ մը եւ անոր հետ անցընել հաճելի ժամեր, մինչ ամուսինը, փոքրիկները մինակ չձգելու համար, անքուն կը մնայ եւ կը ջանայ անձկութիւնը խեղդել Եւրոպայի գաւաթներուն մէջ:

— Գաւաթդ չե՞մ մերժեր, ըսաւ Վահան, ես ալ ցաւեր ունիմ:

Կը պատրաստուէին վար իջնել:

— Վահան, ըսաւ Դաւթեան, այս գիրքերը մեզի ո՛չ մէկ օգտակարութիւն ունին. եթէ մեր տունը կարգացող ու-

նիք, կրնաս բոլորն ալ հետդ տանիլ:

— Մայրս հայերէն կարդալ դիտէ, իրեն համար լաւ ժամանց կ'ըլլայ:

Գիրքերը ծրարեց հաստ թուղթի մը մէջ, ու թելին տակ առնելով փողոց իջաւ:

Հասաւ փողոցիկ հրապարակ մը, ուր տակաւին բաց խանութներ կային: Մտաւ ալ կողմի փողոցը: Պատերուն խռոչներուն մէջ կծկուած ստուերներ զինք սիրոյ կը հրաւիրէին փափուքներով: Նոյն խիստ մարմին ծախելը դժուար արհեստ մը դարձած էր կիներուն համար:

Կանգ առաւ բարձր եւ հին շէնքի մը առջեւ: Վերի յարկաբաժիններէն մէկուն մէջ կը բնակէր ուրիշ ծանօթ Հայ մը, Եղուարդ Դարբինեանը, որ իրենց ծըծընգավայրին մէջ հայերէնի ուսուցիչ եղած էր: Բարձրացաւ աստիճանները, եւ ընչապառ կանգ առաւ գրան առջեւ: Սակայն ուղղանկիւն տախտակին վրայ Եղուարդ Դարբինեան չէր գրուած այլ՝ ԷՏՎԸՐՏ ՍՄԻԹՆԷ: Տիկինը բացաւ դուռը: Բարեկամը տունը չէր:

— Էսօվրբը Հայրենակցական Միութեան կողմէ ճաշկերոյթի հրաւիրուած է, եւ Երեւոյ չեմ գիտեր երբ կը վերադառնայ:

— Հոգ չէ՛, Թերեւս դուք կարենաք դո՛ւք ուստի տալ փափաքիս: Եկած էի Եղուարդէն ուզելու ՆԱԲԵԿ անունով գիրք մը:

— Նարե՞կ. այդ ի՞նչ տարօրինակ անուն: Այդ հեղինակին անունը առաջին անգամ կը լսեմ. ի՞նչ տեսակ գրող է, վիպասա՞ն թէ թատերագիր:

— Ո՛չ, տեւիլ բանաստեղծ է: Նարեկը Սուրբ մըն էր որ կ'ապրէր ասկէ տասը դար առաջ, Հայաստանի չեմ գիտեր որ մէկ շրջանը: Գիրքը կը կոչուի իր անունով, եւ ըստ մօրս, անոր ընթերցումը կրնայ հրաշքներ գործել, նոյնիսկ ծանր հիւանդ մը բուժել:

— Տա՛նք պի Ֆանի, ըսաւ տիկինը. տակաւին այդպիսի բաներու հաւատաքող կա՞յ եղեր:

Վահան սկսած էր հաւատալ ըսածներուն, եւ դարձացաւ թէ ինչպէ՞ս իր

Հայ բարեկամին հա՛յ տիկինը կրնար ծի-
ծաղելի գտնել Նարեկին վերադրուած
կարողութիւնը:

Ճիշդ այն ատեն դուռը վարնուեցաւ.
Եղուարդն էր:

— Նարե՞կ, ա՛հ, այո՛, կը յիշեմ: Ու-
նէինք: Հայերէն շատ մը արժէքաւոր
գրքեր բերած էի արեւելքէն... Քանի մը
չարթէն տունը պիտի փոխենք եւ ըս-
տիպուած եղանք աւելորդ բաները դուրս
թափել:

— Հայերէն գրքե՞րն ալ, Նարե՞կն
ալ...

— Ո՛ւշ: Այս տունը արդիական չըլլա-
լով ժպիտ վառարանով բաղնիք մը. գըր-
քերը հոն դրած ենք եւ մաս մաս կը վա-
ռենք: Տակաւին մաս մը կը մնայ:

Վահանին մէջ յանկարծ նոր սէր մը
արթնցած էր Հայ գիրքերուն եւ մանա-
ւանդ Նարեկին հանգէպ: Ազնիւ հոգի մը
ուշէր Վահան եւ միշտ պաշտպան ուզած
էր կանգնել անարդարօրէն հաղածուած-
նորուն:

— Ո՞ւր է ձեր բաղնիքը, հարցուց:
Եղուարդ դինք առաջնորդեց նրբանց-
քէ մը մինչեւ նեղ դուռ մը:

— Ահաւաստիկ, ըսաւ:

— Կրնա՞մ այս գիրքերէն մաս մը հե-
տը տանիլ:

— Քանի հատ որ կը փափաքես. եւ
ինծի մեն ծառայութիւն մը ըրած կ'ըլ-
լաս:

Վահան դրպանէն հտեց թղթիկը
եւ լսմբին ղեղնորակ լոյսին տակ սկսաւ
գիրքերուն վերնագրերը բաղդատել ՆԱ-
ՐԵԿ բառին հետ: Նարեկը չգտաւ. ան-
պայման հրոյ ճարակ դարձած ըլլալու
էր առաջին հերթին: Հասաւ թուղթի մը
մէջ փաթթեց մնացած գիրքերը եւ երկ-
րորդ ծրարն ալ սեղմելով թեւին տակ,
հրաժեշտ առաւ իր յոգնած բարեկամէն
ու ոտք դրաւ փողոցի թանձրացող ձիւ-
նին վրայ:

Երբորդ Հայ բարեկամին տունը շատ
հեռու չէր, Բայց ի դուր գարկաւ անոր
դուռը: Վերջապէս դրացի մը արթնցաւ
եւ ըսաւ որ քանի մը ամիս առաջ անոնք

մեկնած էին ուրիշ քաղաք մը հաստատ-
ուելու համար:

Ճամբաները միշտ ամայի ու ճեղ-
ժակ՝ դինք կը դիմաւորէին իրենց ան-
վերջանալի տխրութեամբ: Զինքը անմի-
ջապէս կը ծածկէր ձգած քայլերուն հետ-
քերը, կարծես արդիւնելու համար վերա-
դարձը:

— Եթէ այսօր Նարեկ մը չգտնեմ,
Սօնան կը կորսնցնեմ, կ'ըսէր Վահան
բարձրաձայն, ամէն անգամ որ ձեռնու-
նայն վար կ'իջնէր բարեկամի մը կամ
ծանօթի մը տան աստիճաններէն:

Հառաւ քաղաքին ծայրամասերը:

Հայոց եկեղեցիին մօտերը կը գըտ-
նուէր: Նայեցաւ շուրջը: Տուները աւե-
լի ցանցառ էին, շէնքերը՝ աւելի ցած:
Զորացած ծառերու խումբեր՝ իրենց չոր-
ցած ճիւղերը դէպի երկինք կ'երկարէին
մեռած գարուններու վերադարձը երա-
զելով:

Պատիկ բարձրութեան մը վրայ նըշ-
մարեց մուկ գանգոռած մը: Միայն վե-
րի խաչը անվահեր հանդարտութեամբ
մը կը սլանար գորշ երկինքին մէջ:

Վահան այս կողմերը եկած էր քա-
նի մը անգամ, տարիներ առաջ: Փնտռեց
նեղ արահետը որ կը բարձրանար ոլոր-
ուելով մինչեւ եկեղեցիին դուռը: Քանի
մը քայլ առաւ. յանկարծ ոտքը հանդի-
պեցաւ կարծր ճիւղի մը: Փուշեւ ու առ-
տասկներ բուսած էին նեղ արահետը ան-
հետացնելու համար: Վահան մտադրեց
վերադառնալ: Ոտքերը սկսած էին ա-
րիւնիլ: Կը հեւար յոգնութենէն, ծա-
յեցաւ. քայլերուն հետքերը անհետացած
էին ձիւնին առատ փաթիլներուն տակ:
Եկեղեցին շատ հեռու չէր: Վահան շա-
րունակեց քայլել: Վերելքը կը դժուարա-
նար, Յանկարծ ոտքերը սահեցան եւ դե-
տին փոռուեցաւ, մինչ գրքերու ծրարնե-
րը կը դուրուէին մինչեւ վար:

Վահան երկար մնաց գետին: Զինքը
սկսած էր մարմինը ծածկել:

Յանկարծ եկեղեցիին փոքրիկ դան-
դակը սկսաւ հնչել, կը հնչէր անդադար,
իրեն համար: Զինք կը կանչէր:

Վահան ոտքի կանգնեցաւ ու սկսաւ

զերքի ծրարները փնտռել: Ձանոնք զըստաւ ծառի մը կոնդին կոթնած, քով քովի երկու անբաժան որբերու պէս: Ձանկը լռած էր:

Եկեղեցիին խարխաւած դուռը զոց էր: Քալեց պատի երկայնքէն եւ հասաւ առնակի մը առջեւ: Դուռը հրեց: Անկիւնի մը նշմարեց մոմի մը տկար լոյսը:

Յաժ մահաճակալի մը վրայ երկնցած էր ծեր քահանան:

— Տէր հա՛յր, Տէր հա՛յր, կանչեց Վահան ցած ձայնով:

Քահանան աչքերը բացաւ: Ծեր էր, այնքա՛ն ծեր, որ Վահան զարմացաւ թէ ինչպէս ան կրնար ոտքի ելլել ու շարժիլ: Զերմակ մօրուքը կը տարածուէր ձիւնէ խաւի մը պէս սեւ սքեմին վրայ:

Վահան կրկին կանչեց ցած ձայնով:

— Այո՛, որդի՛, ի՞նչ կ'ուզես, բաւ քահանան նստելով մահաճակալին վրայ եւ կոնակը տալով պատին:

— Տէ՛ր հա՛յր, եկած եմ քաղաքին միւս ծայրէն, որպէսզի ձեզ տեսնեմ ու բան մը խնդրեմ ձեզմէ:

— Ի՞նչ բան, որդի:

— Բոլոր Հայ ծանօթներուս եւ բարեկամներուս դուռը զարկի, բայց չզըստայ այն ինչ որ կը փնտռէի: Կինս շատ հիւանդ է, մեռնելու աստիճան. ինձմէ խնդրեց որ Նարեկ մը գտնեմ, որպէսզի մայրս քանի մը էջ կարգայ իր սնարին վերեւ:

— Գիրքերս կը գտնուին Հոն, ետեւ: Գտնուող պահարանին մէջ: Քանի տարի է ձեռքս չեմ առած գանոնք: Նարեկ մը անպայման կայ անոնց մէջ:

— Դուք շատ տկար կ'երեւիք, անհանդիստ մի ըլլաք. ես կը փնտռեմ:

— Եթէ գտնես, ինծի համար ալ քանի մը էջ կարդա:

— Կարդա՛լ. բայց ես Հայերէն կարդալ չեմ գիտեր: Նախընտրելի չէ՞ միթէ դուք կարդաք: Քահանայի մը կարդացածը աւելի ազդու կ'ըլլայ, նոյնիսկ միտքը բրած էի ձեզ հետս տանել մինչեւ ւառն, եւ դուք մխիթարէիք կինս իր վերջին վայրկեաններուն:

— Տղա՛ս, շատ սիրով պիտի ընդուն-

նէի առաջարկդ. դժբախտաբար Հայիւ կրնամ տեղէս շարժիլ. եւ աւելին՝ Հինգ տարիներէ ի վեր կոյր եմ, այնպէս որ անկարելի է ինձ սող մը խոկ կարդալ: Առտուները, ծեր կէն մը, որ կ'ապրի մօտերը, ինծի ուտելիք կը բերէ, սենեակս կարգի կը դնէ, եւ ձեռքս բռնելով զիս կը տանի մինչեւ խորանին առջեւ: Հոն մինակս կ'ընեմ ժամերգութիւնը: Կիրակի օրերը ամայի եկեղեցիին մէջ կը մատուցանեմ Սուրբ Պատարագը, զոր բարեբախտաբար զոց գիտեմ: Ինչպէ՞ս կ'ուզես որ այս պայմաններու մէջ հեռո՞ղ դամ մինչեւ քաղաքին ծայրը:

Վահան բացաւ պահարանին դուռը: Հարեւրաւոր գիրքեր դիզուած էին Հոն եւ ծածկուած տարիներու փոշիներով: Եթէ Նարեկ մը կար ասոնց մէջ, պիտի անպայման գտներ զայն: Ձեռքը տարաւ զրպանը՝ թղթիկը առնելու համար: Թղթիկը կորսնցուցած էր:

Վահան ազատ կերպով կը յիշեր թղթիկին վրայ գծուած նշանները: Մէկիկ մէկիկ սկսաւ նայիլ կողքերուն. բայց զրբերը այնքա՛ն շատ էին...

— Տէ՛ր հա՛յր, բաւ, մայրս թղթիկի մը վրայ գրած էր Նարեկ բառը, որպէսզի կարենամ բաղդառել, սակայն այդ թղթիկը կորսնցուցած եմ: Եթէ կարենայիք գոռք ալ նոյնը ընել զործս կը գիւրանար:

— Երանի թէ կարենայի գրել, այնքան ծերացած եմ որ թեւեւս կը գողգոլեմ եւ գրածս ոչ ոք կրնայ կարդալ:

— Այնպիսի համոզում ունիմ, որ եթէ կնոջ ուղածը կատարեմ, այսինքն, եթէ գլխուն քանի մը համար Նարեկ կարդացուի, անպայման կ'առողջանայ:

— Կը հիանամ Հաւատքիդ վրայ: Այս դարուս դժուար է գտնել այդպիսի բան մը. որովհետեւ մարդիկ իրենց գիւտերով այնքան շրջած են, այնքան կուրցած որ այլեւս չեն հաւատար իրենցմէ գերազանց ուժի մը գոյութեան:

— Ես ալ անոնցմէ մէկն էի: Ծամբայ էլայ մահամերձ կնոջ վերջին փափաքը կատարելու, եւ հիմա սակայն կը հասկընամ որ կատարածս առաքելութիւն

մըն է: Ծուրջիկներու անտարբերութիւնը տեսնելով Համոգուեցայ որ առանց հաւատքի մենք ոչինչ կ'արժենք եւ մեր գոյութիւնը տիեզերքի մէջ աւելի անպէտք է քան մըլիւնի մը գոյութիւնը, որովհետեւ մենք անդադար բնութեան օրէնքներուն դէմ կը դրժենք:

Քաշանան ձեռքերը միացուցած սկըսաւ ցած ձայնով աղօթել...

— Հաւատամք ի մի Աստուած... եւ ի մի Տէր Թիսուս Գրիստոս...

Վահան նոյնպէս միացուց ձեռքերը, եւ սակայն բառերը չէր դիտեր: Եւ կը մնար վարը, երկրին երեսը, մինչ քաշանան աղօթքին իւրաքանչիւր բառը թրք աստիճան գործածելով կը բարձրանար, կը բարձրանար:

— Տէ՛ր Հա՛յր, պաղատեց Վահան, դուք կարգացած էք Նարեկը բաղմաթիւ անուամներ եւ անպայման էջեր դոց գլխէք անկէ: Ձեզմէ կը խնդրեմ որ հետս յաք եւ Հիւանդ կնոջս անարին մօտ արասանէք ձեր գլխոցած տողերը:

Քաշանային շրթները կրկին սկսան շարժիլ:

— Ո՛ր ի ծագել անտուեր նշոյլից ողորմութեան ջր փառաց՝ Հային մեղք... կենդանածնին մահացեալք, բժիշկին հարուածք, ողջանան վէրք, հալածին յուսահատութիւնք...

— Երթա՛նք, երթա՛նք, կ'ըսէր Վահան:

— Ծառ քիչ բան մնացած է յիշողութեանս մէջ, որդի: Մի մոռնար որ ես ութսուն տարեկան ծերունի մըն եմ, անկարող եմ առանձինս մահիճէս մինչեւ մատուռ երթալու: Սակայն որսվհետեւ այդքան զօրաւոր է հաւատքդ, պիտի չմերժեմ առաջարկդ: Ձեմ ուզեր վերջին գիշերս դասալիք ըլլալ: Ենձ ուզեր որ Աստուած զժողո՛ւ մնայ ինձմէ:

Քաշանան ոտքի ելաւ, ուսը դրաւ սեւ վերարկու մը եւ Վահանին թեւէն բռնած, հետեւեցաւ անոր:

Երկինքի խաւարը եւ երկրին ճերմակութիւնը նախանձով կը դիտէին զիրար: Աստղերը մեռած էին եւ սպիտակ տե-

րեւներու պէս ինկած էին երկրագունդը ճերմկցնելու համար: Եւ սակայն վաղը, կամ քանի մը օր վերջ երբ ամպերը անհետանային, անոնք կրկին մէկիկ մէկիկ պիտի բարձրանային իրենց տեղը դրաւելու երկնակամարին վրայ:

Կը քայլէին հիմա դերեզմանոցի տապանաքարերուն մէջէն: Հին դերեզմանոց մըն էր, ուր Հայերը կը թաղէին իրենց մեռելները:

— Աստղերը կը մեռնին ու կը վերածնին, մտածեց Վահան, եւ սակայն սա քարերուն տակ պառկողները փոշի դարձած են: Իսկ ո՞ւր են արեւելքի առապատներուն մէջ, աւազներուն խառնուած անմեղ ու սիրուն մանուկներուն մերկ մարմինները... Ի՞նչ մտաց միլիոնաւոր նահատակներէն...

Վահան թեւերուն տակ աւելի ուղմեց դիրքերու ծրարները: Այս էր մտացած երեք հազար տարինը մարտնչող, շարշարուող ու մեռնող հայ ազգէն, այս քանի մը արհամարհուած գրքերը:

Նախ քալեցին բաւական արագ, բայց երբ հասան լայն պողոտայ մը, քահանան սկսաւ դանդաղեցնել քայլերը, եւ գլուխը դրաւ Վահանին ուսին վրայ:

— Պիտի կարենա՞մ մինչեւ վերջ, առանց ընկրկելու տանիլ այս երկու թանկագին ծանրութիւնները, մտածեց Վահան: Պիտի կարենա՞մ մինչեւ տուն հասցնել ազդի մը երկու սրբութիւնները. ազդի՛ս, ազդերա՛խա ազդի՛ս արհամարհած արժէքները:

Ծամբան որ արդէն երկար էր, աւելի եւ աւելի կ'երկնար ու կը դժուարանար կարծես: Ձիւնի խաւը կը հասնէր մինչեւ իրենց ծունկերը:

Վահան մէկ ուսէն կախուած կը կըրէր հայերէն գրքերու արցակները, միւս ուսէն՝ ծերունի քահանային ծանրութիւնը:

Հասան քաղաքի առաջին տուններուն:

— Եթէ ձիւն չըլլար, անպայման ինքնաշարժ մը կը գտնէինք, բաւե Վահան, աւելի շուտ կը հասնէինք տուն եւ այսօր քան չէինք յոգներ:

— Նոյնն է ոտքով կամ ինքնաշարժով: Ծածրու մը երկարութիւնը չի փոխուիր երբեք: Որքան ալ արագ երթանք, չենք կրնար մահէն ըտպէ մը առաջ հասնիլ:

Զիւնը ամէն տեղ կուտակուած էր, օրերու ծանրութեամբ:

Համեստ տնակի մը առջեւէն կ'անցնէին:

— Հոս կը բնակի այն կինը որ ամէն առաւօտ ինծի կ'օգնէ, ըսաւ քահանան: Եթէ յարմար կը դտնես, պահ մը մըտնենք քովը: Տարիներէ ի վեր չեմ եկած իր տունը այցելելու: Շատ միտակ է:

Զերմակ մազերով կին մը բացաւ դուռը:

— Այս ի՞նչ պատիւ, Տէ՛ր Հայր, այս ի՞նչ պատիւ: Տարիներէ ի վեր ոչ ոք անցած է այս տան սեմը: Ամբողջ գիշերը չկրցայ քնանալ. կարծեմ թէ այդչ շատ հեռու չէ:

— Հիւանդ մը այցելելու կ'երթամ: Ծամբուս վրայ ուղեցի տունդ մտնել ու զայն օրհնել վերջին անգամ:

Գինը մոմ մը վառեց ու դրաւ սեղանին վրայ:

— Այս անիծեալ երկրին մէջ կարելի չէ խունկ դտնել, ըսաւ ծեր կինը, բարեխտաբար, երեք դաշտերէն ծաղիկներ քաղեցի եւ փունջ մը կազմեցի որ խորանին վրայ դնեմ:

Քահանան սկսաւ աղօթել: Աղօթեց երկար: Վահան աչքերը դոցած կը հետեւէր քահանային աղօթքներուն: Եւ միշտ նոյն բառը կը լսէր.

— Ննջեցելոց, ... Ննջեցելոց...

Երբ աչքերը բացաւ, մոմը սպառելու վրայ էր, ծաղիկները չորցած էին, իսկ ծեր կինը չկար: Տախտակածածին վրայ հասարակ տախտակէ դադաղ մը կար: Քահանան քիչ մը աւելի կ'ըսէր:

— Մէկը չունէր այս խեղճ կինը, ըսաւ քահանան, ո՞վ պիտի թաղէ գինք, ո՞վ պիտի հողայ թաղման ծախսերը:

— Ես պէտք եղածը կ'ընեմ, ըսաւ Վահան: Վաղն իսկ կը հեռաձայնեմ ընկերութեան մը, եւ կը վճարեմ բոլոր ծախսերը:

Հայն պողոտան կրկին տարածուե-

ցաւ իրենց քայլերուն առջեւ սպիտակ անտարբերութեամբ մը: Մտնը էր Վահանին բեռը, մէկ ուտին վրայ կը կրէր ծեր քահանային ամբողջ ծանրութիւնը, միւս ուտին վրայ հայերէն գրքերու երկու ծանր տրցակները:

Պողոտային ծայրը, Վահան նշմարեց լուսաւորուած պատուհաններ:

Քառակուսի հրապարակ մըն էր, եւ չորս կողմի բարձր շէնքերուն վարի սլաքները լուսաւորուած էին: Վահան պատուհանէ մը ներս նայեցաւ: Հսկայ սրահին հազարաւոր աթոռները գրեթէ պարապ էին, միայն առջեւի շարքերուն վրայ, ճերմակ մազերով մարդիկ նստած՝ բանախօս մը կ'ուկնդրէին: Քանի մը բառեր հասան Վահանին ականջներուն: Հայերէն բառեր էին:

— Լսողութիւնը շատ տկարացած է, ըսաւ քահանան, լաւ մտիկ ըրէ եւ ինծի ըսէ թէ ինչ նիւթի մասին կը խօսին:

Բանախօսը ձեռքի լայն շարժումներ կ'ընէր, կը դառնար ալ ու ձախ, կը նայէր պարապ աթոռներուն կողմը ու եռանդով կը խօսէր: Վահան այնքան հեռու էր, որ չէր կրնար լսել նախադասութիւններուն ամբողջութիւնը, միայն հաս ու կտուր բառեր կը հասնէին ականջին:

— Աղատութիւն... Հայաստան... Իրաւունք... Հայկակա՛ն դատ...

Վահան մտնեցաւ ուրիշ սրահի մը պատուհանին, նոյն պատկերն էր: Երբորդ, չորրորդ, հինգերորդ սրահները, աւելի քիչ ներկաներ կային: Կրկին վերադարձաւ առաջին սրահին պատուհանին:

Լոյսերը տկարացած էին: Անդրախօսները անհետացած էին, եւ առաջին շարքերու ներկաներուն տեղ, քով քովի դուրսուած էին տառնեակ մը դադաղներ: Իսկ բնմին վրայ, ուրիշ բանախօսը կ'արձակէր իր բառերը, կար առանձին դադաղ մը:

Երկրորդ սրահին մէջ, բանախօսը կը շարունակէր տակաւին իր ձեռքի շարժումները, նոյն բանախօսն էր, նոյն

ներկաներն էին, եւ սակայն մազերնին ճերմկած, հոռակնին կորացած, դէմքերնին կնճռոտած, վաճանք արագորէն անցաւ միւս պատուհաններուն առջեւէն,

— Ահաւասիկ, մտածեց վաճանք մեծ եւ աղիւս ազդի մը վախճանը: Միշտ բաժնուած, միշտ կոտորակուած. հայ ազգը անհոյժի բեկորներու ամփոփում մը: Հայ ազգը որ տուած է անհամար սուրբեր եւ անթիւ դաւանանքներ:

Վաճանք ականջին մօտ լսեց մեղմ ձայն մը որ կ'ըսէր.

— Ձեռնայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, եւ տուեալ բաժանեալ յանձն՝ կործանիչ:

Դարձաւ ձայնին կողմը, փնտռեց շուրջը. ճաշանան անհետացած էր:

— Արդեօ՞ք սրահներէն մէկուն մէջ մտաւ, որպէսզի աւերի լաւ լսէ բանախօսին ըսածները:

Վաճանք ուշի ուշով նայեցաւ պատուհաններէն ներս: Լոյսերը տկարացած էին, եւ առաջին սրահին պէս, ներկաներուն եւ բանախօսին տեղ մէկական դադաղ դրուած էր առանց մոմի, խունկի եւ աղօթքի:

Վաճանք քալեց սպիտակ ձիւնին վրայ, իրեն անծանօթ փողոցին մէջ: Ձախ ուսին վրայ յետած մարդկային բեռը չկար հիմա, բայց ալ ուսին վրայ միշտ կը ծանրանային հայերէն գիրքերուն ծրարները: Փորձուեցաւ ծրարներէն մէկը թաղել ձիւնին մէջ եւ թեթեւեալ:

Ինչո՞ւ կը շալկէր այս ծանր բեռը. որո՞ւն համար: Հայերը երբեք չէին սիրած հայերէն գրքերը. նոյնիսկ չէին սիրած իրենց լեզուն: Օրինակ՝ ինք, որ անմիջապէս իր զաւակներուն հայկական անունները փոխած էր Տիգրի եւ Ռօդի:

Յաջ մըն էր որ կը կրէր վաճանք, առանց հասկնալու անոր արժէքը:

— Բայց մէկը պէտք է փրկէ բան մը մեր ազգէն: Պէտք է բան մը մնայ մեր ապիկար ու զօրախոս ազգէն: Դարերու վառտակը չի կրնար կորսուիլ ի սպառ: Հարիւրաւոր տարիներու վառտակը այս

գրքերուն մէջն է: Ոճիւր է զանոնք թաղել ձիւնին մէջ:

Եւ վաճանք շարունակեց քալել՝ հայերէն գիրքերու ծանրացող ծրարները իր ուսին: Հեռուն ձիւնի սպիտակութեան վրայ նշմարեց սեւ զանգուած մը: Մեծ քահանային դիակն էր, արդէն կարծրացած ցուրտէն: Եւ որպէսզի փողոցին ըստ սպիտակութիւնը անարատ մնայ, ձիւնը որ տեսնէ մը ի վեր դադրած էր, կրկին սկսաւ տեղալ, ծածկելու համար ծերունիին անտէր դիակը: Պէտք էր անհետանար այս սեւ բիծը, եւ վաղուան ծագող աստղերը պէտք չէր որ ամշնային տեսնելով սեւ դիակը ճերմակ տարածուած թեւն վրայ:

— Ահա՛, մտածեց վաճանք, ճակատագիրը այն մարդուն որ կը յամառէ հայ մնալ: Կը մեռնի լքուած ու աղքատ: Կը մեռնի եւ ոչ ոք տէր կ'ուզէ կանգնիլ իր դիակին:


Վաճանք նայեցաւ շուրջը: Եթէ մէկը տեսնէր՝ օդնալիս անտէր կանչէր: Գիշերուան այս ժամուն փողոցը ամայի էր: Ուստի գիրքերուն ծրարը մէկ կողմ դրնելով սկսաւ ձեռքերով ձիւնը փորել երեսան հանելու համար անհետացած մարմինը:

— Տակաւին վայրկեան մը առաջ կը տեսնուէր սեւ սքեմը, ձիւնի խաւը աղքատն ալ թանձր ըլլալու չէ...

Որքանիկ փոս մը փորած էր վաճանք, եւ տակաւին քահանային մարմինը չէր յայտնուեր: Երբ եղունգները քսուեցան սալաշատակի քարերուն, ոտքի ելաւ ու գրքերու ծրարները ուսին նետելով, քայլերը ուղղեց դէպի առան:

Գ.

Յաւարը սկսած էր նահանջել արեւելքէն տարածուող լոյսի մակընթացութեան առջեւ: Գաղաքին մեռելային լռութիւնը կրկին սկսած էր խորտակուիլ արթնցող կեանքի ժխորին հարուածներուն տակ:



Դրան առջեւ կանգ առաւ եւ պահ մը ամփոփուեցաւ:

Ի՞նչ պիտի ըսէր Սօնային: Ի՞նչ բառերով պիտի ոչնչացնէր անոր վերջին յոյսը: Ժամերու թափառում եւ յոգնութիւն, եւ ահա կը վերադառնար երկու արցակ հայերէն անպէտք գրքերով:

Մտաւ տարաւ ելեկարական զանգի կոճակին: Բայց կոճակը հոն չէր: Իր սովորական տեղէն քիչ մը աւելի վեր գետեզուած էր: Արաջին հպումին զանգը հնչեց ներսը, արծաթեայ հնչիւնով մը: Զարմացաւ: Առաջ պէտք էր քանի մը անգամ կոխէր կոճակին վրայ որպէսզի մէջ մը հնչէր:

Դուռը բացուեցաւ եւ երիտասարդ կին մը, որ հասկնալով անկողինէն ելած էր, տնկուեցաւ դէմը:

– Ի՞նչ կ'ուզէք, պարոն, ըսաւ:

Վահան շուտեցաւ: Արդեօք սխալած էր: Տուաւ մակնոշը:

Տիկինը պահ մը սնկեացաւ, մինչ Վահան դրան առջեւ, ցուրտ փողոցին մէջ կը սպասէր:

– Տէ՛ք, պոռայ երիտասարդ կնո՛ղ ձայնը, Տէ՛ք ծեր մարդ մը մեր դուռը կը զարնէ, գնա տես ո՞վ է եւ ի՞նչ կ'ուզէ:

Վահան նայեցաւ շուրջը: Իր փողոցն էր. իր առան էր: Տարիներ դիտած էր սա մայթերը, տարիներ ելած էր քարէ այս երեք աստիճանները:

Երիտասարդուհի մը յայտնուեցաւ դրան մէջ: Ճիշդ Սօնան էր, երբ տակաւին նոր նշանուած էին:

– Ամբողջ գիշերը թափառեցայ, ըսաւ Վահան, ծանօթ տուն չգտայի, նոյն իսկ մինչեւ եկեղեցի գացի, բայց նարեկ չգտայ: Մեր քահանան հետս բերի, կոյր էր, բայց էջեր գոց գիտէր նարեկէն, սակայն ճամբու ընթացքին յոգնութեան չդիմացաւ ու անշունչ ինկաւ ձիւնին վրայ:

Երիտասարդուհին բան մը չէր հասկընար Վահանին ըսածներէն: Երիտասարդ կինն ալ բան մը չէր հասկցած: Անոնք երկուքն ալ չէին հասկնար Վահանին խօսած լեզուն: Վահան հայերէն կը

խօսէր, եւ մէկ գիշերուան մէջ գրեթէ մոռցած էր անգլերէնը:

Վերջինք քանի մը բառ ու քանի մը նախադասութիւն, եւ այդ լեզուով ուղղեց հարցումները:

– Շատ յոգնած եմ, ըսաւ, ամբողջ գիշերը քալեցի, կրնամ պահ մը ներս մտնել ու հանգչիլ:

– Ինչո՞ւ չէ, ըսաւ օրիորդը, ներս հրամայէք: Եղբայրս քիչ յետոյ գործի պիտի մեկնի, միասին սուրճ մըն ալ կը խմէք, իսկ եթէ անօթի էք, կրնամ ձեզի նախաճաշ պատրաստել:

– Սուրճ մը սիրով պիտի ուզէի խմել: Երէկ կէսօրուէն է վեր բերանս բան մը չեմ դրած, ախորժակ չունէի, կինս ծանր հիւանդ էր:

Դահլիճը ամբողջովին նորոգուած էր: Պատերուն նոր ներկ, նոր կարպետ, նոր կարասիներ: Դիմացի քանդակներէն վերայ կային Սօնային եւ իր խոշոր լուսանկարները, իսկ քովը Տիգրանին եւ Վարդուհիին լուսանկարները, անոնք ալ խոշորացուած: Ինք դրամապահակին մէջ ունէր անոնց երկու փոքր նմոշները: Աջ կողմը Սօնային սնկեակին դուռը մէջոց էր:

– Երթամ, աչք մը նետեմ, տեսնեմ ինչպէ՞ս է Սօնային վիճակը, մտադրեց Վահան:

Հազիւ ոտքի ելած էր, երբ երիտասարդուհին ներս մտաւ, ափսէ մը ձեռքը: Սուրճը կը բուրբէր եւ կը գոլորշիաւոր դաւաթներուն մէջ:

– Եղբայրս լուսացուելու վրայ է, ըսաւ օրիորդը, հիմա կու գայ: Դուք կըրնաք անմիջապէս խմել ձեր սուրճը, որպէսզի չպաղի: Եղբայրս պաղ կը սիրէ խմել իրը:

– Ի՞նչ է տնունդ, հարցուց Վահան:

– Թողի՝ մեծ մայրս սակայն ինծի կը կանչէր ուրիշ անունով մը, կարծեմ հայերէն անուն մըն էր:

– Վարդուհի, ըսաւ յանկարծ Վահան:

– Այո՛, այդպէս կը կանչէր դիմ ծեծ մայրս, ինչպէ՞ս գիտեցաք իմ հին անունըս:

— Շատ պարզ է, Ռօզինն հայերէնը Վարդուհի է:

— Ուրեմն դուք հայ էք, հաստատեց օրիորդը: Դէմքերնեղ բոլորովին անծանօթ չէ ինծի: Եթէ աւելի երիտասարդ ըլլայիք, կամ եթէ անիւթ ըլլայիք սա ձեր ճերմակ մօրուքը, թերեւս ձեզի մէկու մը կը նմանցնէի:

— Ծերմակ մօրուք, բացառանշեց Վահան եւ ձեռքը տարաւ երեսին: Ես հազիւ երեսուն տարեկան եմ, եւ երբեք մօրուք չեմ երկնցուցած:

Իրարու երես նայեցան: Վահան լալքերը ուղղեց դիմացի լուսանկարին, չը կարենալով տանիլ աղջկան բերանին մտերմութիւնը:

— Այս փոքրիկները եղբայրս Տիգր եւ ես ենք: Եղբայրս հինգ տարեկան է հոս, իսկ ես՝ երկու: Այդ Տիգրինը մայրս է. անունը Սօնա էր: Մեռաւ քսան տարի առաջ, անծանօթ հիւանդութենէ մը: Իսկ միւսը հայրս է: Այն գիշերը երբ մայրս մեռաւ, հայրս տունէն դնաց ու այլեւս չվերադարձաւ: Մեծ մայրս մեզ խնամեց. սակայն ան ալ երկար չապրեցաւ, եւ մենք որք մնացինք:

— Անր մայրը հայ էր, ձեր հայրը հայ էր, իսկ դուք հիմա հայերէն բոս մը իսկ չէք հասկնար...

— Մեծ մայրս մեզի միշտ այդ լեզուով կը խօսէր, սակայն իր մահէն ետք, այլեւս դայն ոչ ոքի բերնէն չսեցինք: Եւ շատ ալ չնեղուեցանք: Այս երկրին մէջ հայերէն դիտնալը առաւելութիւն մը չէ: Ինչի՞ կը ծառայէ հայերէն գիտնալ, ինչի՞ կը ծառայէ իւրաքանչիւր հարցնողին — ես հայ եմ պոռալ:

— Իրաւունք ունիք. ինչի՞ կը ծառայէ ես հայ եմ պոռալ. ինչի՞ կը ծառայէ անցեալի յիշատակներուն բեռը տանիլ:

— Ահաւասիկ, Տիգր՝ եղբայրս: Տիգր կազմ ու պատրաստ էր պորժի մեկնելու:

— Ներողամիտ կ'ըլլաք, որ ձեզի այսօր քան սպասցուցի, ըսաւ: Եւ սուրճի գաւաթը առնելով սկսաւ խմել:

Պօսեցան օդի մասին, ձիւնի մասին, աշխատանքի մասին: Տիգր լաւ գործ ու-

նէր, մեծ ընկերութեան մը մէջ հաշուապահ էր:

— Կը ներէք որ ձեզմով չհետաքըրբորուեցանք, ըսաւ Ռօզին:

— Ես հայ մըն եմ, անունս ալ շատ լաւ չեմ յիշեր: Ես ձեր հայրը լուսնանջնած եմ: Ուրեմն ձեր հայրը քսան տարի առաջ մեկնեցաւ որպէսզի դարձան մը գտնէ ձեր մահամերձ մօրը հիւանդութեան, եւ այլեւս մէյ մըն ալ չտեսաք զինք...:

— Միշտ հայերէն եւ տեղական թիւրքերուն մէջ ծանուցումներ կը դնենք որպէսզի լուր մը առնենք իրմէ, բայց անգուշ:

— Բաւական հանգիստ ըրի, ըսաւ Վահան ոտքի ելլելով: Պէտք է շարունակեմ ճամբաս: Երկու ծրար հայերէն գիրքեր ունիմ փոխադրելիք: Պէտք է զանոնք այսօր իսկ հասցնեմ իրենց տեղը:

Վահան քանի մը քայլ առաւ դահլիճին մէջ եւ ինքզինքը դտաւ հայերէն առջեւ: Անճանաչելի դէմք մը կը նայէր իր կողմը: Ծերմակ մազերով, ճերմակ մօրուքով, կորաքամակ ծերունի մը:

Ինքն էր այդ ծերունին, եւ այս երկու երիտասարդները իր զաւակներն էին: Սակայն զինքը չճանչցան, որովհետեւ ինք դացած էր անցեալը որոնելու, մինչ իրենք կ'ապրէին ապագային համար:

Երբ Վահան գիրքերու ծրարները ուսող դրաւ ու սկսաւ քալել միւսնածածկ սալաշատակին վրայ, Տիգր ուշի ուշով դիտեց հօրը լուսանկարը:

— Ռօզին, ըսաւ, ուշադրութեամբ նայեցա՞ր ծերունիին աչքերուն:

— Այո՛, ճիշդ հօրս նայուածքը ունէր:

— Արդեօ՞ք, արդեօ՞ք:

— Անկարելի է, եթէ ան ըլլար, բան մը կ'ըսէր մեզի... եւ այսպէս չէր մեկնէր:

— Ո՞վ դիտէ, պահեր կան երբ մարդ կը նախընտրէ մահը՝ խափուսիկ պատրանքներու զոհը չդառնալու համար:

Վահան ծրարները տարաւ մէկ ուռէն միւսը: Սկսած էր շատ շուտ զգալ յոգնութիւնը: Ո՛վ մէկ գուռ պիտի բացուէր

այլեւս իր առջեւ. ինք տեղ չունէր այլեւս ապրողներու աշխարհին մէջ. միայն մեռելները պիտի հասկնային իր վիճակը:

— Այս գիրքերն ալ, մեռած ու անպէտք են, եթէ զանոնք կարդացողներ չըլլան, մտածեց Վահան. պէտք է տեղ մը թաղեմ զանոնք:

«Մի վախնաք անոնցմէ որոնք կը սպաննեն մարմինը, եւ ուրիշ բան չեն կրնար բնել», ըրած էր Մեծ Վարդապետը:

Հայը կրած էր բազմաթիւ հալածանքներ ու ջարդեր քսան դարերէ ի վեր եւ միշտ կենդանի մնացած էր. անոնք միայն սպաննած էին Հայուն ժարմինը: Ուրեմն ինչո՞ւ այս խաղաղ մթնոլորտին մէջ ազգը կը թաւալէր դէպի իր վախճանը: Ջարդ ու հալածանք չկար այլեւս: Ինչո՞ւ:

Վահան այդ ինչունն պատասխանը գտաւ ուսին վրայ կրած հայերէն գրքերու վիճակին մէջ: Հայը սպաննողը, Հայու թիւնը ոչնչացնողը, Հայն էր. մաս մը կեղծաւոր, մաս մը թերահաւատ: Հայը կ'ամչնար «Եւ Հայ եմ պոռալէ», Հայը կ'ամչնար Հայ ըլլալէ, եւ իր արժէքները, իր քսան դարերու ընթացքին դիզած զանձը կը նետէր խոզերու առջեւ:

Վահան կը քալէր միշտ:

— Զարմանալի է, մտածեց երբ հասաւ քաղաքին միւս ծայրը: Ժամերէ ի վեր կը քալեմ եւ միշտ գիշեր է: Ե՞րբ պիտի բացուի արշալոյսը, ե՞րբ պիտի կարենամ ծառի մը տակ նստիլ, ու ցերեկուան լոյսին տակ բռնալ սա ծրարները ու մէկիկ մէկիկ թղթատել սա գլորքերը, մատերս պտտցնել անոնց դեղին թուղթին վրայ, եւ արբենալ անոնց սեւ տողերուն կանոնաւոր շարքերուն առջեւ: Ա՛խ, եթէ կարենայի անոնցմէ տող մը, բառ մը կարդալ:

Այլեւս տուն չկար շուրջը:

Կը քալէր նեղ ճամբէ մը: Մտերքը մերկ էին անապատի մէջ կմախցած դիակներու պէս, ուրիշներ ցնցոտիներ հաղած էին, այն հազարաւոր որբերուն պէս, որ հող կերան շմեռնելու համար:

— Ո՛ւր են Հիմա, մտածեց, Եփրատի ջուրերուն մէջ ընկղմած կոյսերու դիակները: Ինչո՞ւ Ապրիլ Քսանչորսբուն, հազարաւոր ծաղկեփունջներ չենք նետեր դետին ջուրերուն վրայ անոնց յիշատակը յարգելու համար:

Մտռի բունին կռթնեցաւ:

— Բայց ո՞վ պիտի վճարէ այդ ծաղկեփունջներուն գինը: Ինչո՞ւ դիակներու համար զոհել թանկագին բաներ, երբ կարելի է անոնցմով դարձարել պոռնիկներու անկողինները: Եղբայրը մոռցած է իր եղբայրը եւ քոյրը նստած օտար ընտանակի մը դիրկը, կը համբուրէ անոր շրթները եւ կ'ուրանայ միջիտն մը անմեղ դիակներու գոյութիւնը:

— Թո՛ղ մեռնի այս անարժան ազգը, թող անհետանայ այլեւս աշխարհէ երեսէն, որպէսզի չպղծուի այլեւս Հայ տունը:

Գերեզմանատան դուռը բաց էր:

Հակայ պողոտայ մը երկուքի կը բաժնէր մեռելաբազմը: Հարեւրաւոր ճամբաներ կը բաժնուէին այս կեղբոնական պողոտայէն: Իւրաքանչիւր ճամբուն սկիզբը, ծառի մը վրայ գտնուած էր տախտակ մը, որուն վրայ գրուած էր ազգի մը անունը: Վահան գտաւ իւր ճամբան որ կը տանէր Հայու թիւնն աստիճան: Իր կարծածէն աւելի ընդարձակ էր այդ բաժինը: Ժամեր քալեց, աջ ու ձախ նայելով: Ծերմակ տապանաքարերու վրայ գրուած էին անուններ հայերէն գիրերով: Կամաց կամաց սակայն հայերէն գիրերը անդի կու տային օտար գիրերու, բայց անունները միշտ հայկական էին:

Հեռուն նշմարեց երկու տապանաքարեր:

Մէկուն վրայ գրուած էր ժօրը անունը, միւսին վրայ կնոջը Սօնայինը: Ծունկի հկաւ անոնց առջեւ ու օկտաւ շոյել անոնց պաղ մակերեսը:

— Ա՛խ, մրմնջեց, եթէ Նարեկ մը գտած ըլլայի, եւ դնէի այս գերեզմաններուն վրայ, հարեւրաւոր մեռելներու յարուցիւն կու տայի: Դուք բախտաւորներ էք, ո՞վ սիրելի մեռելներ, դուք կը

ննջէք քով քովի, քարէ պատերով պաշտպանուած: Բայց միլիոնաւոր ուրիշներ լուծուած են ովկիանոսներու լիւզի ջրերուն հետ, շաղխուած են աւազի անտէր հատիկներուն հետ: Շատեր մեռած են հանդարտ՝ օտարներու տան մէջ, առանց դիտնալու թէ իրենք ո՞վ էին: Իսկ վաճառուածները, ստրկացածները, ...

Վահան ոտքի կանգնեցաւ: Գիրքերու ծրարները ուսը նետեց, ծառէ մը կտրեց հաստ ճիւղ մը եւ հեռացաւ մեռելաստանէն: Քալեց ճերմակ ամայութեան վերայ, եւ ոտքերուն հետքերը հոն կը դրէին իր ամբողջ ազգին ողբերգական ուղիսականը: Բայց ո՞վ պիտի հետեւէր իրեն, եղբուրթինը պատմելու գալիք սերունդներուն:

Հեռացաւ հսկայ քաղաքէն, հեռացաւ ուրիշներէն, որովհետեւ հոն չէր գտած իր փնտաած Նարեկը:

— Տակաւին քանի մը տարի ապրելիք ունիմ: Անպայման կը հասնիմ տեղ մը, կը գտնեմ Հայեր որ կարենան կարգաւ այս գիրքերը: Կա՞յ արդեօք մէկը որ հեռաւոր երկրի մը տան մը մէջ նստած կը սպասէ որ գամ եւ իրեն տամ այս ծը-

րարները: Հայ անուաներով մարդեր չատկան, գիտեմ: Մեծ վաճառականներ, գիտուններ, արուեստագէտներ, վաշխառուներ, կառավարական անձնաւորութիւններ, լուսայսփոխներ, ազգին անունը եւ իրենց հայրենակիցներու թիւը իբր զէնք եւ հարստութիւն դորձածոգներ... Մեր իւրաքանչիւրին համար դոնէ անձ մը մեռած է, մեր իւրաքանչիւր աղջկան պատիւը անարատ պահելու համար, կոյս մը մարտիրոսացած է: Ինչո՞ւ, ինչո՞ւ այդ արեան լողանքը, երբ հիմա իւրաքանչիւր Հայու մէջ կայ որոցոց մը, իւրաքանչիւր հայ աղջիկ պատրաստ է նետուելու օտար սողուն մը բազուկներուն մէջ, այն պատրուակով որ ան կը պատկանի քաղաքակրթութեան ագգի մը...

Ճամբան երկար էր, եւ ճերմակ, գիւշերը յաւիտենական:

— Արդեօք պիտի գտնե՞մ քաղաք մը, ուր Նարեկ կարդացող մը ըլլայ:

Ն. ՉԱՐՈՒՏԵԱՆ

Պէլլաւք, Սեպտեմբեր 1964

ԿԱՑԻՆԸ

Կացինը շողում էր կեանքի անտառում,
 Դռում էր անտառը տարիներ երկար.
 Կացինը, տարիներ կտրում էր, վառում,
 Ու ողջ կը վառէր, թէ մահը չգար.
 Բայց փրկեց կացնի մահն անտառը մահից,
 Շունչ ֆաշեց անտառը ու բացուեց լեզուն,
 Եւ ահա ազատուած անբարբառ ահից՝
 Այսպէս են իմաստուն ծառերը խօսում, –
 – Իրաւ է, կացինը անգուշ էր ու սուր,
 Բայց եթէ անտառը պոչ չտար նրան՝
 Անտառից մի ծառ էլ չէր կորչի ի գուր.
 Այնինչ բիր-հագարներ գազսմամահ կորան,
 Անտառն է մեղաւոր, ոչ ծառն իմաստուն,
 Անտառն է պոչ բռնում բռնակալ մարդուն...:

Յ. ՇԻՐԱԶ

Կ. ՍԱԹՅԱՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Բ.

ԴԷՊԻ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԸ

Արշալոյսը կախնային ծիր մը կազմած էր սարերու դազաթին, երբ Սարհատ ինքզինքը դառաւ հօրեղբոր դրկին մէջ: Այս վերջին գործին ու զուգորդանքը մխիթարանքը կը մնար պատանի ճամբորդին, որ յուզումնաւոր սիրտ մը կը թողուր դիմացի այգիներուն մէջ:

Սուսամի բոստանումը եղնիկի մը փախուստն էր իր արցունքները ծածկելու համար: Ան ներկայ չէր վերջին վայրկեանի այս սրտառուչ արարողութեան: Բայց արշալոյսը չբացուած արթուն էր եւ իրենց տանիքի բարձունքէն կը հսկէր արահետներուն, որոնք կը բացուէին գէպի Սպիտակ լեռը:

Ջորեպան Օհան՝ Սարհատը տեղաւորեց ջորիին վրայ, Յովնան վարդապետի ջորիին հետեւելու համար: Ու Սարհատ ճամբայ ելաւ տան կիներու եւ հարսներու արցունքներով ողողուած: Կրպէն եւ միւս երիտասարդ հօրեղբայրները կանգնած էին կաղնիի ծառի պէս, իրենց յուզումը զսպած, բայց հոգեխռով այն իրողութեամբ, որ իրենց ոսկորներէն մէկը տեղահան կ'ըլլար:

Ճամբորդները բռնած էին վերելքը եւ փոխ առ փոխ կը կորսուէին անառի ստուերներուն մէջ ու կը յայտնուէին բացատներու վրայ:

Սուսամ տանիքէն կը հետեւէր ճամբորդներուն, միշտ որոնելով Սարհատի ստուերը: Անոնք շուտով հասան դազաթը ու վերջին ստուերը ընկը՝ մեցաւ հորիզոնէն անդին, Սուսամին անծանօթ աշխարհի մը մէջ:

Սուսամ փոքրիկ կուրծքը սեղմեց եւ փախաւ գէպի իրենց այգիները, ուր իրենց նորարողորջ սէրը կը հեւար:

❖

Սպիտակ Խազակի բարձունքին վրայ էին, երբ արեւի առաջին ճառագայթը ոսկեզօծեց Յովնան վարդապետին մօրուքը:

— Օրհնեալ է Աստուած, փառաւորեալ է Աստուած...

Վարդապետը աւարտեց իր առաջին աղօթքը եւ ապա սկսաւ չափաւոր Լուսոյճի եղանակը երգել ճիշդ այնպէս, ինչպէս պիտի երգէր Առաքելոց վանքի զմբէթին տակ:

Առաւօտեան այս աղօթքները բացին ջորեպան Օհանին լեզուն, որ իր կարգին խառնեց իր երգը բնութեան զարթօնքին, մէջէ մէջ պատմութիւններ հիւսելով երգի այս ու այն հատուածին շուրջ: Օհանը հեքիաթաբոս ու երգիչ էր ու Յովնան վարդապետ այս ճամբան կտրելու համար շէնչող խօսակիցի մը պէտք ունէր:

Սարհատ լուռ էր ու խոհերով ծանրարեւոյն: Իր աչքերուն առջեւ կը բացուէր վեհապանո՞ւ բնութիւն մը, շքեղ լեռնազապաթներով եւ իր հողին կը պարուրէր լեռնականի պաշտամունքով դէպի այս բարձրաւանդակը, որ կարծես երկինքը շալկած էր ուսերուն վրայ եւ պատկառանքի կը հրաւիրէր անցորդները:

Յովնան վարդապետ դարձաւ Սարհատին.

— Ա՛յ տղայ, ի՞նչ մօայլ մտածումներու մէջ մտնում ես. Առաքելոց վանք կ'երթանք, բանտ չեմ տանիր քեզ:

Օհան անդիէն

— Հոգ մի՛ ընեմ, հոն ալ Աւետարանի եւ շարականի հետ մեր դիւղի որսորդութիւնը կրնան շարունակել:

Վարդապետը ընդմիջեց Օհանին խօսքը.

— Հա՛, ուրեմն մեր նոր աշակերտը իր դպրոցը որսո՞ւմ սկսած է: Լաւ է: Վանքի աշակերտները զրքերուն հետ փայտ բռնել ալ կը սորվին:

Վարդապետին ու Օհանին համար այդ լեռնաշխարհը զաղտնիք չուներ եւ ճիշդ կ'ընէին արագ տեղ հասնել:

Սարհատ ստիպուած էր դուրս գալ իր լուռթենէն եւ ուրախ էր, որ առիթ կը արուէր իրեն վարդապետին ներկայութեան խօսելու.

— Հայր սուրբ, դեռ հեռո՞ւ է Առաքելոց վանքը, այս հսկայ դազաթները կ'երեւա՞ն վանքէն, ես շատ կը սիրեմ լեռնազապաթները:

— Տղա՛ս, այս լեռնազապաթները Նայիրեան աշխարհի հին, երկնաւորացի դմբէթներն են, առ Աստուած սլացած, որոնք երկրի եւ երկնքի խորհուրդները կը պարփակեն: Ահա մեծդի Անտոքը, ասդին՝ մեր մօտիկը՝ արլացիկ Գերին, քիչ մը անդին՝ մշուշի մէջէն Ծովասարն է, որ գլուխ կ'երերէ: Զիշդ անոր ստորոտն է Առաքելոց վանքը: Լա՛ւ պահէ միտքդ այս բարձունքները, որպէսզի վանքի մութ կամարներուն տակ զանոնք միշտ յիշես:

Արդէն հասած էին Գերինի բարձր ուսերուն, Տալսորիկը աջ փռուած եւ Ուլուրեան, Նայիրեան անդունդը ձախ կողմը, Անտոքի բարձունքին տակ: Սարհատ այդ բարձրադիր գազաթէն կը դիտէր անհուն համապատկերը: Անսահման այդ հեռաւորութիւնները ծովու պէս կը տարածուէին դէպի հիւսիս եւ դէպի հարաւ եւ անծանօթը ըմբռնելու փափաք մը կ'արթնցնէին իր մէջ: Օհանի ամենադիտութեան վրայ վստահ՝ հարցուց անոր.

— Քեռի Օհան, հեռուն տեսնուածը ի՞նչ աշխարհ է...

Օհանը առիթի կը սպասէր իրականութիւնները հեքիաթի վերածելու համար:

— Այդ վայրերը կ'երթան ու կը հասնին Տիգրանակերտ ու մինչեւ Հալէպ: Այս դազաթներէն քար մը որ գլորուի, մինչեւ Տիարպեքի կը հասնի, ջուրերը որ կը ջրվիժեն, աշխարհը կ'ողողեն մինչեւ Հալէպ ու Պաղատաւ: Ա՛յ ու ձախ տեսած անդունդներդ գետեր ունին իրենց ծոցին մէջ, որոնք սուրի պէս լեբան կուրծքը պատուած դուրս կը պոռթկան ջրվէժի կերպարանքով:

Սարհատ դառնալով Օհանին.

– Քեռի Օհան, այս Գեղին լեռը իր ստորոտէն մինչեւ դադաթը կանաչ անտառի մը կը նմանի, բայց ծառ ու անտառ չկայ, ի՞նչ բան է այս:

– Նշանաւոր Գեղինն է, որ ինքնայատուկ զարդարանքով կը ներկայանայ, ծածկուած է խաւրճիլի լայն տերեւներով: Հովիւներու սիրած աշխարհն է ան: Մեր լեռներուն մէջ միակն է ան, զոր կրնայինք կոչել կանաչ լեռ: Ասկէ կը բխի Տալարիկի դետը եւ կը միանայ Անտոքէն եկած Սասնոյ դետին, որոնք իրենց թեւերուն մէջ կը գրկեն Տալարիկը, որ քարէ զաւակներ ունի:

Բաւական մը առաջացած էին եւ իրենց ճամբան կ'որոշէին դէպի Անտոքի կողմը, երբ Օհան Սարհատին ըսաւ. –

– Ա՛յ, տե՛ս այս զառթթափին վրայ երկարած գերանը. Սասնի կամուրջն է, որ Տալարիկը կը միացնէ դիմացի ժայռերուն: Հովիւները եւ անցորդները այդ գերանին վրայէն կ'անցնին: Առանց անոր պէտք պիտի ըլլար իրենց իջնել խորունկ ձորը եւ այդպէս անցնիլ միւս կողմը: Անգունդ մը կայ այդ գերանին տակ, որ կտրուած միապազաղ ժայռով՝ վեց հարիւր մետր վար իջնալով կը հասնի Սասնոյ գետի եզերքը: Մեր աշխարհքը ժայռ է, դետ ու ջրվէժ է, կաղնիի ամուր ծառ է ու Գեղինի խաւրճիլն է: Ի մեծ ուրախութիւն Հովիւներուն, ճիւղերին ճամբայ չի տար: Եթէ ջորիները կարենային անցնիլ այդ գերանին վրայէն, մենք այս երեկոյ կ'ըլլայինք Առաքելոց վանքը:

Ընդդ այդ պահուն, արահետի երկայնքին տնկուած ժայռերէն խորունած այծեամբերը թռան դէպի զառթթափը եւ մէկ ծուփով անցան դիմացը, նոյնիսկ գերանը անտեսելով:

– Մեր քարերը այժեամբ կը ծնին, – մրմռաց Օհան, – ու ճիշդ անոնց դոյնը ունին: Հիմա որքան ալ աչքով խաղարկենք դիմացի ժայռերը, այծեամբերը պիտի չտեսնենք: Անոնք քարերուն հետ նոյնանալով կը մնան վրտանդէ հեռու:

Յովնան վարդապետ առնէն կ'երթար եւ դարձուածքներուն՝ զգուշութեամբ զննելը կը խնարէր, ցից ժայռերուն չզարնուելու համար: Երբ Օհան եւ Սարհատ մօտեցան անոր, ժպտուն հարցուց. –

– Տեսա՞ք այծեամբերուն վազքը, անոնք դիտէին որ մենք մեղք դուրձող մարդիկ չենք, բայց նախընտրեցին մեզմէ հեռու ապրիլ:

– Ի՞նչ բնենք, հայր սուրբ, հրացան քիչ կը ճարուի ու մենք զուրկ կը մնանք նոյնիսկ քնութեան քարիքներէն: Այս երեկոյ Անտոքի բարձունքներուն վրայ պիտի դիշերենք, վրաններուն կամ հիւղակներուն առջեւ: Եթէ հրացան մը ունենայի՝ այծեամբ խորովածը պիտի վայելէինք, մեղքն ալ թող իմ վիզս պլլուէր:

– Յոգնած ճամբորդը խորովածը չի մերժեր, – ըսաւ Յովնան վարդապետ, մեղքի խնդիրն ալ թողութիւն մը չնորհելով կը կարգադրէինք, բայց ստոյգը այն է, որ մենք այս երեկոյն միայն կաթնեղէնով պիտի դոհանանք: Ամառանոց կլլողները, այս եղանակին, ուլ մը խնկ մատուցելու յօժար չեն:

Ջորեպան Օհանի երազը հրացան մը ունենալն էր: Միայն հրացան մը ունենալը իր ուսին, ամէն տեսակ խորովածներէն ու մատաղներէն կը հրաժարէր:

– Ջորեպանին համար ճամբաները երկաթ կը թուին, երբ ուսին զէնք չունի, – մրմնջեց Օհան:

Սարհատ լարուած ուշադրութեամբ կը հետեւէր խաղաղութեան:

Հրացանի խնդիրը իր պատանեկան առաջին վերքերէն մէկը եղաւ:

Յովնան վարդապետը խորապէս կը զգար ջորեպան Օհանի հոգեկան տառապանքը, որ իրն ալ էր:

— Օհան աղբեր, հրացանի ցաւը ամբողջ հայութեան ցաւն է: Բռնակալ կռաւարութեան մը գերիներն ենք ու անգէն: Երանի այն օրուան, երբ մենք ալ մեր զինուորեալ մանկունքը պիտի ունենանք:

— Հայր սուրբ, այս ժայռերն ու լեռները շատ ծոռնը կու գան կռնակիս, երբ անգէն եմ: Մէկ քանի ճամբորդութիւններ ըրած եմ հրացանը ուսիս, ան ալ փոխ առնուած մեր գիւղի ուրոգներէն: Օրեր տեւած է ճամբորդութիւնս, բայց ես ոչ միայն չեմ զգացած զէնքի ծանրութիւնը, այլ կարծես թէ թռչունի թեթեւութեամբ եմ ջորիին: Լեռներու բարձունքները տաքիս տակ զգացած եմ: Իսկ հիմա կարծես թէ Գերիին ու Անտոքը ուսիս նստած են, եւ ծունկերս կը կոտորեն:

Սարհատ զպրոցականի մը քաշուածութեամբ խօսքի մէջ մտաւ.

— Հայր սուրբ, Առաքելոց վանքին մէջ հրացան կա՞յ:

— Տղա՛ս, վանքը զէնքի տեղ չէ՛, այլ աղօթքի: Միայն երկու նախնական հրացաններ կան հովիւներուն ձեռքը, վանքի ոչխարները պահպանելու համար զայլերէն: Է՛հ, այն հին ժամանակներուն, իշխան Վիգէն Մամիկոնեանի օրով, վանքը բերդ մըն էր մեր իշխաններուն համար, թշնամին անոր պարիսպներուն չէր կրնար մօտենալ:

Սարհատ մտածումներու եւ տպաւորութիւններու ծովու մը մէջ ընկողմած էր ու ջորիին վրայ նստած՝ շատ յաճախ զլուխը ծռահրու ճիւղերուն կը գպնար, անուշադրութեան պատճառաւ: Արդէն Անտոքի բարձունքները ելած, իրենց առջեւ կը պարզուէին Շատախի խորխորատները եւ գիւմացը՝ հորիզոն կը կազմէր մեծդի Մովսսարը: Բնութեան հզօր տեսարանները, ջորեպան Օհանի զէնքի կարօտը, Յովնան վարդապետի պատմական վերջիւմը, որ հայկական հզօրութեան հեթաթը կը խտացնէր իր մէջ, ու Սուլամէն բաժնուած ըլլալու յուզումը իրարու խառնուած՝ իրար կը հըրմըշուէին, ու ինք կարծես թէ ջորիի վրայ հեծած չէր, այլ նստած էր Սուսամի երազած կարմիր ձիուն կռնակին եւ կ'արշաւէր քառուղիներէն գէպի տնտահման բաղձանքները:

Արեւը արդէն Գերիին զազաթէն արեւմուտ գլորած էր: Շառապունած կը մնային Անտոքի եւ Մովսսարի դազաթները, երբ անոնք հասան վերաններու եւ հիւղակներու առջեւ, ուր՝ իրենցմէ առաջ արդէն հասած էին ոչխարներն ու տաւարները: Մուխ կար ամէն կողմ եւ ձայներու ժխորը շարժական գիւղի մը տպաւորութիւնը կը ձգէր անցորդին վրայ:

Յովնան վարդապետ ուղղուեցաւ գէպի իշխան Պետոյի վրանը, որ հաստատուած էր լայն բացատի մը վրայ:

Տան երիտասարդներէն մէկը վազեց բռնելու ջորիին պախուրցը եւ խնդրեց Յովնան վարդապետէն, որ շնորհ ընէ եւ իջնէ իրենց մօտ: Տարեց կրն մը օջախի քովէն մօտեցաւ եւ համբուրեց վարդապետին ձեռքը եւ անոր օրհնութիւնը հայցեց:

— Մեր գլխու եւ աչքի վրայ եկար, հայր սուրբ, քու օրհնութիւնը մեր հօտերուն վրայ ըլլայ:

Փայաս մը եւ բարձ մը դրին վրանին առջեւ, ուր նստաւ վարդապետը իսկ ջորեպան Օհան եւ Սարհատ տեղաւորուեցան անոր շուրջ: Կիներու կանչերը, լուներու հաջորդ, այծերու եւ ոչխարներու մայիւնը մթնոլորտը թռնած էին: Մթնշաղը ձորերէն ու խորխորատներէն վեր կը բարձրանար եւ

լեռներու ցցունքները մութին մէջ խորհրդաւոր անորոշութիւններ կը դառնային:

Վրաններէն ու հիւղակներէն մարդիկ եկան, աջը առնելու Ս. Թարգմանչաց վանքի վարդապետին եւ խաղրիկ մը լսելու հարաւէն կամ հիւսիսէն, լուր մը առնելու եւ պահ մը ապրելու կեանքի թաւալումը, որ անշուշտ գոյութիւն ունէր հեռաւոր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ: Իրենք բնութեան եւ կենդանական աշխարհի փոքրիկ համայնք մը կը կազմէին, ու Անտրեի բարձունքներուն վրայ՝ երկնքի եւ աստղերու գրաքնութիւնը ունէին: Որքան իրական, նոյնքան վերացական, կտրուած աշխարհէն:

Սարհատ զարմանքով կը դիտէր երիտասարդ հովիւները ու վարի գիւղերէն վեր բարձրացած երիտասարդները, որոնք, բոլորն ալ, զինուած էին դաշտաններով եւ չափմախիթ հրացաններով:

Երբ ընթրիքը վերջացաւ ու երիտասարդները ցրուեցան գացին իրենց հօտերուն քով, Սարհատ ջորեպան Օհանին հարցուց.

— Այս երիտասարդները բոլորն ալ զէնք ունին, ինչո՞ւ ուրիշ շրջաններու Հայերը զէնքէ զուրկ կը մնան:

Փետի Օհան վարդապետին նայեցաւ խորհրդաւոր ու դարձաւ Սարհատին.

— Ասոնք բարձրաբերձ Սասունի գիւղերն են, հպատակութիւն չեն ճաննար եւ իրենք ալ Գիւրտերու պէս ցեղապետութիւն ունին: Այ, այս վրանը ինքան Պետոյի տան կը պատկանի: Անիկա ալ ճամբորդութեան բնութեան չորս-հինգ զինուած ծառաներով կը պտտի, այնպէս ինչպէս կ'ընեն Թուրք եւ Գիւրտ ցեղապետները: Ձօրք եւ ոստիկան հոս չեն հասնիր եւ եթէ պատահի որ մոլորութիւն այս կողմերը, իրենց զէնքը եւ զլուխը վրայ կու տան:

Զինեալ եւ անզէն Հայեր: Ահա նոր խնդիր մը, որ սկսաւ Սարհատի ուղեղը շարժարեւ:

Մեծդի լեռան բազմաթիւ կողերուն վրայ կրակներ կը վառէին, համառաբած մութը մեղմելու համար:

Գոյի ժայռերէն յորդաբուխ աղբիւր մը ջրվէժ կը կազմէր վարի գառթափներուն վրայ եւ անմիջապէս գետակ մը կը գոյացնէր, որ Սասնոյ գետը կը դառնար: Արեւելքի միւս գառթափներէն կը ջրվէժէր Խուլբի գետը:

Այս երկու աղբիւրները, Անտրեի խորունկ արգանդէն կը ժայթքէին՝ իրենց գրկին մէջ առնելով Անտրեը, Գերինը եւ Տարկուը, մինչեւ Պշերիկի գաւառը, ուր կը միանային ու կը կազմէին Պաթմանագետը:

Գիւղերուն լուսթիւնը երաժշտութեամբ կը թրթռար այս ջրվէժներու յաւիտենական դողոցներով: Հովուական երգ մը այս հիւղակէն, պաք-գօտի տոփ մը այն միւս վրանէն՝ մթնոլորտը համբողջով մը կը լեցնէին:

Սարհատ հոգեպէս փոխադրուած կը զգար ինքզինք իրենց լեռներուն վրայ, իր պատանութեան ամէնէն շատ սիրած վայրը, ուր Սուսամիւն հանգիպած էր, ու հիւղակները ծաղկաւէտութեամբ լեցուցած էին իր հոգին: Հոս ալ, լեռան այս բարձունքներուն ու մարգագետիններուն վրայ, հովուական պարզունակ կեանք մը կ'եռար, ուր սէրն ու երգը իրենց հարազատ արտայայտութիւնը կը գտնէին լեռնական այս ժողովուրդին քով: Սարհատ Սուսամի պատկերը կը տեսնէր վառուած փոքրիկ խաղողներուն մէջ, ջրվէժներու ձայնին մէջ, երգերու ոլորտին մէջ, նոյնիսկ ձորերը լեցնող քանձը մռլթին մէջ: Սակայն, հոգեկան այս ապրումին կը խառնուէին նոր

աշխարհքի մը տպաւորութիւնները, զինուած երիտասարդներու կերպարանքը, ազատութեան հովը իր կողերուն վրայ զգացող այս հսկայ լեռները: Սարհատի մտքին մէջ թնճուկ մը ստեղծուեցաւ ու ան զգաց, թէ վանքի աշակերտ ըլլալը բաւական չէ իր հոգիին կուտակուած նոր բարդութիւնները լուծելու:

Իրենք արշալոյսին ճամբորդ էին ու հանգիստի պէտք ունէին: Տեղաւորուեցան ծածկոցի մը տակ եւ իրենց աչքերը փակեցին պայծառ աստղերուն վրայ:

✱

Յովնան վարդապետին կարաւանը արշալոյսին ճամբայ կ'ելլէր, երբ հիւղակի երկատասարդներն ու կիները ոտքի էին եւ արդէն սեր ու մածունի աւանդական նախաճաշը մատուցած:

Անոնք շուտով կտրեցին Անտքի վայրէջքը, անցան Շէնիքի փոքրիկ հովիտը ու Մովսսարի վերելքը բռնեցին: Փոքր աղբերակի մը քով, քիչ մը հանգիստ առնելէ ետք, կէսօրուան ճաշը ըրին ապա՝ բարձրացան Միբրին կատարին ուսերը, որուն առջեւ կը բացուէր համատարած նոր հորիզոն մը, որ իր մշուշով ծովակի մը պատկերը կու տար, երբեմն-երբեմն ծովի ծրւէնները մշուշը կը գունաւորէին ծովու պատրանքը հեռացնելու համար: Մշոյ ընդարձակ դաշտն էր, որ Սասնոյ բարձրաբերձ գագաթներէն անդին, գէպի հիւսիս կը տարածուէր: Լեռներու պար մը իր շուրջ ու ատկէ անդին՝ մշուշն վեր, լեռնակուտակներէն աւելի վեր, ճերմակ սաղաւարտ մը կախաւած կը մնար հեռու հորիզոնին վրայ, որ Սիփանի գագաթն էր: Յոգնած ճամբորդները պահ մը կանգ կ'առնէին Մովսսարի հովերուն զովութիւնը վայելելու ու հիանալու բնութեան աննման պատկերին առջեւ: Իրենց ետեւը, գէպի հարաւ Գիբրինի, Անտքի, եւ Տարկուի գագաթները կը մնային վեհապանծ, իրենց հարաւային հովանիին տակ կը պահէին Բասնքի գիւղական հիւղակները, Հեղինի վանքը ու Սուսամի գեղման ծառերը:

Այս բարձունքէն անդին, վարը, մշուշներէն դուրս մնացած բարձրաւանդակի մը վրայ կը նշմարուէր Առաքելոց վանքի գմբէթը:

Ու կարաւանը շարժեցաւ գէպի վայրէջքը: Արեւը հաղիւ քաշուած էր վանքի գմբէթէն, երբ Յովնան վարդապետը իր նոր աշակերտով կը կենայ վանքի գլխաւոր դրան առջեւ: Այդ պահուն, Սարհատ գարձանքով կը տեսնէր, թէ մշուշը անհետացած էր եւ անոր տեղը կը բռնէր Մշոյ յուսթի դաշտը, որմէ հարիւրաւոր գիւղերու ծովիւր կը բարձրանար գէպի երկինք, հըսկայ խնկամանի մը պատրանքը տալով:

Սարհատ անմիջապէս կը ներկայանար վանհօր, աջը կ'առնէր եւ Յովնան վարդապետի առաջնորդութեամբ կը միանար վանքի գիւղերովի սաներուն:

Սարհատ կը մտնէր նոր կեանքի մը արշալոյսէն ներս...

Ջորեպան Օհան տեղաւորուեցաւ վանքի ջորեպաններուն եւ դռնապաններուն քով, ուր ընթրիքէն յետոյ հեքիաթներու մրցումը կը բացուէր:

Սարհատ աշակերտական ընթրիքը ընելէ ետք՝ քանի մը աշակերտներու հետ ջորեպաններու կայանը եկաւ, հեքիաթախօս թեոի Օհանը վերջին անգամ տեսնելու համար: Օհան արշալոյսին ճամբայ պիտի ելլէր դառնալու համար Բասնաց դաւառը, ու ալ թերեւս շտեմնէր Սարհատը: Երբ Սարհատ եւ աշակերտները անոնց քով հասան, ջորեպանները դառն եռանդուն վէճի մը մէջ, թէ ո՞րն է Դաւթին քարը, Առաքելոց վանքի ուսին վրայ

կանգնած ժա՞յուր, թէ՛ Մովսսարի լճակին մօտ ցցուած քարը: Քեռի Օհանը կը պնդէր, կը պաշտպանէր Մովսսարի քարը, իսկ վանքի պահակն ու ջո՞րեպանները վաւերական կը գտնէին Առաքելոց ուսին բարձրացած քարը, որուն վրայ կար Դաւթի ձեռքին նշանը:

Օհան դարձաւ Սարհատին:

— Լա՛ւ որ երեսցար, այս վանքը կը նմանի բերդի մը, ուր մարդ կը կորսուի: Վաղը գիշերանց կը դառնամ տուն: Աստուած քեզի հետ, վանքի սուրբն ալ քեզի պահպանն ու պաշտպան: Մեզ չմոռնաս:

— Քեռի Օհա՛ն, բարեւ տար բոլոր գիւղացիներուն: Երբ Հեղինի վանքին ուխտի երթաք, կաղնի ճիւղերէն խուրձ մըն ալ իմ կողմէ տար վանքի տանիքը զարդարելու: Սիրաս մեր աղբիւրներուն ու առուակներուն հետն է, բայց միտքս այս պարիսպներուն պիտի յանձնեմ: Հօրեղբայր Կրպէին ըսէ՛, որ հոգ թող չընէ, կաշիս պիտի պահեմ ու պիտի աշխատիմ բան մը սորվիլ, որ Հօրեղբայր Տէր Դաւթի յիշատակը վառ պահեմ:

Աչքերը լեցուած էին, սիրտը ուռած էր, աշակերտներու հետ վազելով հեռացաւ հեղինախոս մարդոցմէ, իր նոր աշխարհին մէջ ամփոփուեալ ու համար:

Գ.

ՎԱՆՔԻՆ ԱՇԱԿԵՐՏԸ

Սարհատ ամփոփուեցաւ դպրոցի խուցերուն մէջ, մտերմացաւ զանապան դաստններէ եկած աշակերտներուն ու անոնց հետ կարգաց ու երգեց Ս. Թարգմանչաց տաճարին մէջ: Եկեղեցական այս արարողութիւններն էին միայն, որ ընտանեկանմբ կը կապէին հոգին իրենց գիւղի եկեղեցիին, ուր ինք փոխացէր: Միւս անցուղարձերը իրենց գիւղի կեանքի հունէն գուրս կը թաւալէին: Գրասեղանն ու ուսուցիչ, գիշերօթիկ, բնակարան՝ կարգ ու կանոնի տակ, ուսուցիչներ ու վարդապետներ ու լայն մթնոլորտ մը հայկական, ուր Սասունցիներ, Մշկցիներ, Դաշտեցիներ համախումբ՝ հայկական լայն շունչ մը կու տային հեռաւոր ու առանձնացած գիւղերէն եկող տղոց:

Սարհատ ինքնամփոփ, շուրջը կը գիտէր ու վանքի բարձրադիր դիտարանէն Տարօնի ամբողջ ժողովուրդը կը տեսնէր: Վանքի զանգակներու ձայնին հետ, ձայներ կը լսէր Մուշի նոր հիմնուած Կեդրոնական վարժարանէն, անցնող ու դարձող գործիչներէն: Միաժամանակ աւելի մօտէն կը զգար Թրքական բռնակալութիւնը, զօրքի եւ ոստիկանութեան ներկայութեան: Թրքական տիրապետութեան եւ քրտական ցեղապետներու ճնշումներն ու կողոպուտները աւելի շուտ ու շատ կը տղաւորէին պինք եւ իրենց բնկուղիներէն ուսկի Քիւրտերու հետ ունեցած բախումը, համատարած պատկերով մը ըմբռնելի կը դառնար իրեն:

Լաւ ու վատ աշխարհի մը բախումը կար Տարօն աշխարհին մէջ:

Վրդովուած հոգիով Սարհատ, այս բոլոր երեւոյթներուն մասին կը

մտածէր եւ աստիճանական կերպով կ'աճէր իր մէջ ըմբոստութիւնը, որ յուզումի մատնած էր զինք, իրենց գիւղի ընկուզենիներուն տակ: Երբեմն ալ այս առանձնութեան մէջ երազային քնքուշ զգացումներ կը վերապրէր Սուսամի մետաքսէ թելով կապուած պատանեկան այն սիրոյ հետ, որ ծաղկեցաւ իւրան Վարդանի այգիներուն մէջ:

Սէր ու վրդովմունք ապրող պատանի մըն էր Սարհատ:

Նոր այս միջավայրին մէջ, Սարհատ մէկ ամիսէն կրցաւ Առաքելոց վանքի շրջապատին ծանօթանալ: Աշակերտներու հետ երբեմն վանքէն պարտոյի ելան գէպի Աստղեբերդ, եղան Մուշեղեանի բերդի սիւններուն տակ, Ծիրին կատարի ստորոտները:

Երբեմն ալ իրան վանքին ստորոտը գտնուող Մշոյ դաշտի գիւղերը, որոնք վանքի կալուածներն էին, ու ձորերէն վեր բարձրացած՝ կանգնեցան Դաւթի քարին առջեւ, որուն վրայ կար Դաւթի ձեռքին կնիքը:

Հին ու հերոսական Հայաստանի քարտէս մը կը գծադրուէր Սարհատի ուղեղին մէջ: Պալատական հին հայրենիք մը, որ աներակներու նմոյշներով կը ներկայանար իրեն:

Ամէնէն ընտանի եւ մատչելի պատկերը Դաւթի քարն էր: Զորեպան Օհանէն լսած էր Սասունցի Դաւթի մէկ քանի հերոսական դրուագները, քառասուն դեւերու գլխատումը, խմած էր Սպիտակ աղբիւրի ջուրէն, ուրկէ Դաւթ իր ծառաւը յագեցուցած էր:

Սասունցի Դաւթ, արտակարգ քաջութեան տէր այս առաջակերպի հերոսը, անուշտ Սասունցի ըլլալու էր, Մովսսարի, Անտոքի կամ Մարաթուկի լեռներու ծնունդ: Ուրեմն այս մեծղի լեռները ինչպէս որ անսպառ աղբիւրներ կը ջրվիժէին ու այծեամբեր կը ծնէին իրենց քարանձաւներէն, ծնունդ տուած էին նաեւ Սասունցի Դաւթին:

Քաջութեան երազը իր հոգիին մէջ, անհունօրէն կ'աճէր իր կորովը նմանելու համար Սասնոյ մեծղի լեռներուն, ու իր ուղեղին մէջ հեքիաթի մը կծիկը կը քակուէր ու կը հիւսուէր Դաւթի անուան շուրջ, որուն մասին ամէն մանրամասնութիւն զինք կը բոցափառէր ներաշխարհային անըպառ հրդեհով մը:

Սակայն աշունը շուտ կը վերջանար, ձիւնը մէկ գիշերուան մէջ կը նստէր բարձրաբերձ լեռներուն վրայ ու հազիւ շաբաթ մը անցած՝ վանքն ալ կը ձուլուէր ձիւնապատ լեռներուն:

Ձիւն ձմեռ Տարօնի եւ Սասունի մէջ, համատարած ձիւնի տիրապետութիւն: Շարժուն կեանքը կը դադրէ ու բնութիւնը խստամբեր երեւոյթ մը կ'առնէ կեանքի բոլոր երեւոյթներուն դէմ, մարդ ու անասուն քշելով լեռներէն, ձորերէն ու դաշտերէն գէպի գոմերն ու գետնափոր տունները:

Վանքը իր մեծադիր կառոյցով կենսունակ ներաշխարհ մը կը դառնար՝ ամփոփուած վանքի խուցերու, հինաւուրց տաճարի եւ գոմերու մէջ: Վարդապետներէն ոմանք կը դասաւանդէին, մանաւանդ ուժ կու տային եկեղեցական հրդեցողութեան: Ծեռ վարդապետները կանթիղի մը լոյսին տակ, օրերով խոնարհած կը մնային ձեռագրի մը վրայ, կարծես դարերու գաղտնիքը անոնցմէ քաղելու համար:

Ծուրա ձմեռ էր եւ վարդապետներէն ոմանք իրենց խուցերէն ոտք դուրս չէին դնել: Հովիւները, պահակները, ջորեպաններն ու տնտեսները ամէնէն ետուն կեանքը ունէին, տեսնելով փակուած լեռն ու ձորը իրենց առջեւ: Ժամանակ ունէին ու չէին գիտեր ինչպէս կ'անցնէր ժամանակը, ու ահա, վանքի ուսումնարանի կողքին, անոնք իրենց յատուկ հաւաքատեղին

ունէին հեքիաթասացներու ատեանը բաց էր, երդիչները լեռն ու ձորը թրն-
դացնելու տեղ՝ վանքի մէկ անկիւնը, համերգ ու պար կը ոտրէին, ան-
համբեր սպասելով դարնան ձիւնհալքին: Սարհատի եւ շատ մը Սասունցի
տղաներու ոտքը յաճախ այս հովուական հաւաքոյթներու մէջ կ'ըլլար: Ա-
նոնց միջավայրին մէջ, պանդուխտի եւ գիշերօթիկի բանտուած կեանքը կը
մեղմանար, հին յիշատակներով կը լեցուէր անոնց հոգին: Հեքիաթները,
մասնաւոր ունկնդրութեան կ'արժանանային: Նոյնիսկ երիտասարդ վարդա-
պետները կը խուսափէին իրենց խցիկներէն, երազներու աշխարհ մը ապ-
րելու համար: Վանքի փակուած հասարակութեան համար, հովիւներու եւ
պահակներու այս համեստ ակոսները թատրոնի եւ օփերայի տեղ կը բռնէին:

Սարհատ առանձին համակրանքով կը լսէր դռնապան Առաքելի հե-
քիաթները, մասնաւորաբար Սասունցի Դաւիթի պատումը, որուն Առաքելը
մասնագէտը դարձած էր, ժամանակին աշակերտելով Խասգիւղցի Կրպէին:

Առաքել աղբարը կը պատմէր եւանդուն, անսխալ կառոյցով ու հրդի
հրատաւանները կ'երգէր տպաւորիչ ձայնով մը:

Սարհատ, օր մը, համարձակութիւնը ունեցաւ հարցնելու.

— Քեռի՛ Առաքել, այս բոլորը որ կը պատմես՝ կարծես թէ իրապէս
տեղի ունեցեր է մեր լեռներուն մէջ, բայց սա Սասունցի Դաւիթի Գարը,
որ ցցուած է վանքի կալուածներուն գլուխը, ինչո՞ւ կոչուած է Դաւիթի
Գար:

Առաքել աղբոր համար միջնարար մըն էր այս հարցումը: Դարձաւ
Սարհատին.

— Այ տղայ՛, Դաւիթ ուժը սահման չունէր, Աստուած տուած էր ար-
ուստութեամբ: Ծնած էր ազգին յոյսը ըլլալու, բայց զինք հովիւ ըրած էին,
ու օր մը, երբ ոչխարները կիթի բերած էր, է՛հ, այն վերի լեռներէն, Ծո-
վասարի միւս կողմէն փրթաւ այդ ժայռը, եւ երբ ան վար կու դար զէպի
ոչխարները, Դաւիթ առանց ժամանակ կորսնցնելու, թաւ թաւալող ժայ-
ռին զիմաց եւ ձեռքը տուաւ անոր գէմ: Ժայռը տեղն ու տեղը կեցաւ եւ ար-
նոր վրայ մնաց Դաւիթի ձեռքին նշանը, որ մինչեւ այսօր կը մնայ: Այ ո՞վ
պիտի կենար ժայռին դէմ, եթէ Դաւիթ չըլլար: Կաթ կթող կիները, որոնք
սարսափի մատնուած էին, ձեռքերին վերցուցին դէպի երկինք եւ աղօթե-
ցին Դաւիթի արեւադարձեան համար:

Դաւիթ ուժի ցուցադրութիւնը աւելի խոր տպաւորութիւն թողուց
Սարհատի եւ իր ընկերներուն վրայ, քան Թուր Կէնակի զարկերը, որոնք
չօշափելի չէին այս աննման ժայռին պէս:

Քեռի Առաքել պահ մը շունչ առաւ.

— Է՛հ, ո՞ւր էինք, դառնանք որո՞ւ մասին խօսինք. հա՛, միտքս ին-
կաւ, բան մըն ալ ըսեմ ձեզի տիրացուներ, դացէ՛ք ձեր վարդապետներէն
հարցուցէք, այս վարի գիւղերն ու այգիները, որոնք վանքի կալուածներն
են, կը պատկանին Դաւիթի տունին, անոր ցեղակիցները հետագային նուի-
րեցին վանքին՝ կտակով մը, որ դրուած է մեծ ձառքնորդին մէջ. կտակ ը-
նողներու անունները շատ ազգէկ չեմ յիշեր. մէկի անունը՝ ձորալի, միւ-
սին՝ Վեգօ: Դացէ՛ք կարդացէք ձառքնորդին մէջ, անոնք մեր վարդան
Մամիկոնեանի վերջին թոռնիկներն են եղած:

Այդ իրիկուն, երբ Սարհատ վերադարձաւ աշակերտական խուցը, եր-
կար ժամանակ մտածեց Դաւիթ արարքներուն մասին, տապալակեցաւ իր չոր
անկողինին վրայ ու մտադրեց դիմել Յովնան վարդապետին, ձառքնորդի

գիրքէն հաստատուն փաստ մը գտնելու, Դաւթի մասին խօսուած այս հե-
քեթաթային արարքներէն:

Յաջորդ օրը, դասերէն ետք, տատամսուժով մօտեցաւ Յովնան վար-
դապետի խուցին, որ միեւնոյն ժամանակ լուսարարի սենեակն էր:

Երբ Սարհատ վարդապետին դիմացը գտնուեցաւ, Յովնան վարդա-
պետ զարմացած անոր երեսը նայեցաւ.

— Ի՞նչ կայ, Սուրբ Գէորգ, չըլլայ տունէն լուր մը առած ես:

— Ո՛չ, հայր սուրբ, եկած եմ ձեզմէ խնդրելու, որ եթէ կարելի է մեծ
Ճառընտիրէն կարգաք այն յիշատակարանը, ուր կուակ մը կայ վանքին հա-
մար:

— Այ տղայ, դասերուդ մէջ այդպիսի բան պիտուած չկայ, ո՞ր վար-
դապետը քեզի խօսեցաւ այդ մասին:

— Հայր սուրբ, քեռի Աւագելը Դաւթի հեքիաթը կը պատմէր եւ լու-
սաւ թէ վանքի շրջակայ այս գիւղերն ու այգիները կտակուած են Ճորայի
եւ Վեգօ Մամիկոնեաններու կողմէն:

Յովնան վարդապետ բարձրաձայն խնդաց, աւելցնելով՝

— Մամիկոնեան իշխաններու անունները հեքիաթի կառուցում տուած
են այդ անուններուն: Կտակ ընողները Ճորայանելի եւ Վիգէն Մամիկոնե-
աններն են: Անոնք տասնմէկերորդ դարու վերջերը Մասնոյ անկախ իշ-
խանապետութեան պիտի կեցած էին եւ իրենց ժառանգական կալուածնե-
րէն վանքի վարերը գտնուող գիւղերն ու այգիները Ս. Թարգմանչաց վան-
քին կտակեցին, ի պայծառութիւն մեծ վանքին: Անոնց յիշատակին համար
միշտ աղօթող ենք: Ապրի՛ս Սարհատ, որ այսպէս պատմական բաներով կը
հետաքրքրուիս: Մեր ազգը մեծ ազդեցութիւն է, մեր այսօրուան վիճակն է
խեղճուկ, Աստուած հարկաւ գուռ մը պիտի բանայ Հայ ժողովուրդին հա-
մար:

Սարհատ աջ առաւ Յովնան վարդապետին եւ վերադարձաւ խուցը,
խորհրդածութիւններով լեցուն:

Իր նախաձեռնութեամբ եւ խնդրանքով, պատմութեան դասաւանդ
վարդապետը իրենց դասարանի տղաքը տարաւ մասնաճիւղի նստած սրահ եւ
թոյլտուութիւն խնդրեց, որ վանահայրը ցոյց տայ աշակերտներուն պատ-
մական Ճառընտիրը:

Դասատուն եւ աշակերտները կարգով աջը համբուրեցին ծերունա-
զարդ Յովհաննէս վարդապետին, որ փիլիսոփայ վանահայր մըն էր, որ իր
գերեզմանը փոքրի տուած էր եւ գերեզմանաքարը պատրաստած, որուն վը-
րայ կը պահէր միայն վախճանման թուականը:

— Ապրի՛ք զաւակներս, ապրի՛ք, որ այսպէս ազգային յիշատակներով
կը հետաքրքրուիք: Մակա՛ր վարդապետ, Ճառընտիրը հոն է, գրեականին
վրայ, խնամքով դարձուցէք էջերը, որ Սրբազան գիրքը չվնասուի:

Իրօք, Ճառընտիրը լայն սեղան-դրեակալ մը կը գրաւէր, որուն վրայ
լայնատարած բացուած էին անոր մագաղաթեայ էջերը: Բազմադարեան
այս գիրքը երկար տարիներ խնամքով գրուած, ամէնէն մեծ Ճառընտիրն էր
Հայաստան աշխարհին: Նկարները գունազեղ էին, արուեստի գեղեցիկ նը-
մոյշներ: Ս. Մարգիններու եւ Ս. Գէորգներու նիղակաւոր պատկերները կո-
յին հոն ու անոնց կողքին գլխագիրներու եւ զարդանկարներու փունջերը,
որոնք էջէ էջ կը շարունակուէին: Ութ հարիւր տարիներէ ի վեր մագաղա-
թը անազարտ պահած էր արուեստագէտներու զարդանկարները ու եկող
զացող այցելուները հիացմունքով կը թերթէին անոր էջերը եւ վանահօր

որահն կը հեռանային զեղարուեստական մեծ թանգարան մը այցելած ըլլալու տպաւորութեամբ։

Մակար վարդապետ ուշադրութեամբ ու շեշտերով կարդաց Վիգէն Մամիկոնեանի կտակին պատճէնը, որ արժանադրուած է Յայտաւորքի վերջին էջերուն վրայ, յիշատակարանի բաժնին մէջ։

Սարգստ, ստոյգ ու շօշափելի կերպով կը տեսնէր հետքերը Սասունցի Դաւիթի եւ Մամիկոնեան տան իշխաններու։ Հերոսներ եւ իշխաններ անցած էին այս վայրերէն ու աւերիչ բռնակալները ճգնած էին Հայ ժողովուրդը, բայց հայրենիքը, թշնամի կրունկներուն ոտնակոխ՝ պահած էր տնոց յիշատակը։



Ձմեռուան երկար ամիսները անվերջանալի ցուրտ շունչ մը կը տարածէին Տարօնի դաշտին եւ Սասնոյ բարձունքներուն վրայ։ Դաշտէն ու Մուշէն երբեմն ճամբորդներ ու այցելուներ կը նշմարուէին վանաւոր որահն մէջ։ Իսկ Սասնոյ բարձունքներէն մարդ մարդասանք չէր երեւնար։ Սառնամանիքի տիրապետութիւնը տեսական էր դուրսը, շնչաւոր ու գորշ զանգուածը բանտարկող տուններու եւ ախոռներու մէջ։

Սարգստի միակ միութարութիւնը կը մնային հովիւներն ու պահակները, որոնք երազային աշխարհ մը կը բնակարարէին ամէն օր, աղօտ լոյսով լուսաւորուած մթնաստուեր խուցերուն մէջ։ Քաջապարծ հերոսներու հետ, շատ յաճախ, հուրի փերիներու նազանքն ու գեղեցիկութիւնը սրտերը կը յուզէին, ու անոնց կերպարներուն մէջ կը վերակենդանանար Սուսամը իր դեղձան ծամերով։

Սարգստ բազմաթիւ նոր տպաւորութիւններու տակ էր։ Տարօնի աշխարհը խլրտուն կեանքի եւ նոր բաղձանքներու ժամանակաշրջան մը կ'ապրէր։ Դաւարանին մէջ Մշոյ Կեղրնական վարժարանի մասին կը խօսէին։ Հայ ժողովուրդի ազատութեան շուրջները ախոռէ ախոռ, տունէ տուն խուլ կերպով կ'արձագանդէին։ Խրիմեան Հայրիկի ազատութեան ըմբռնումները, նոր ձեւերու տակ, Սարեանի եւ իր գործակիցներու բերնէն կը լսուէին։ Ուսման ու գիտութեան եռանդուն շարժման կեղրնը դարձած էր քանի մը տարիներէ ի վեր բացուած վարժարանը, ու պատանիները, որոնք կրթական հին հաստատութիւններու մէջ էին, անհուն բաղձանք մը ունէին աշակերտելու Կեղրնական վարժարանին։

Սարգստի աչքին Առաքելոց վանքի դպրանոցը իր համեստութեամբ կը նսեմանար ուսումնական այս եռուն գործունէութեան առջեւ։ Շատ անգամ Սարգստ դասընկերներու հետ խօսած էր։

— Տղաք, եկէք փախինք վանքէն եւ երթանք Կեղրնական վարժարանը։

Բայց վանքին մէջ աղաստան գտած տղաքը, որոնք ձրի կրթութիւն եւ սնունդ կը ստանային՝ չէին համարձակեր այդ խիղախ քույլը առնելու։

Ուսման ու ազատութեան այս նոր շունչը առինքնած էր Սարգստը, անոր մտքին մէջ ստեղծելով հեքիաթային հորիզոններ։

Բայց ինչ որ ամէնէն աւելի հիթորիկեց Սարգստի միտքն ու սիրտը, նոր հեքիաթ մըն էր, որ շուրջով կը պատմուէր հեքիաթասացներու կողմէ։ Այս անգործակցանքներու լսարանին մէջ ժամանակի ոգին աւելի կը ծաւալէր քան վերը, գիշերօթիկի բաժնին մէջ։ Հեքիաթ թէ իրականութիւն։ Սարգստ կը լսէր Աքարայի արշաւները, Սասնոյ լեռներուն վրայ, ու Մշոյ դաշտին մէջ։

Ո՞վ կրնար սահմանափակել Քեռի Առաքելի երեւակայութեան առաջադաժողութիւնը, որոնք բացուած էին Մամիկոնեան Հինաւորաց այս ատեանին վրայ:

— Արարօն եկաւ դարկեց, քիւրտ բէկի գլուխը գնաց ու մեր զերինները աղատեցան: Հոն ուր Արարօն կ'երեւնայ, թուրք ռուսականները մկան ծակ կը փնտռեն:

Հովիւներէն մէկը անդիւն.

— Քեռի Առաքել, որքան կը յիշեմ մեր վանքի աշակերտն էր Արարօն, քանի մը տարի հոս մնաց. ժամանակ առ ժամանակ գլուխը կ'առնէր կ'երթար Դաւթի Քարի ետեւ, ժայռերու մէջ կը մնար մինակ: Ուշտարները վանք բերած ատեն, շատ անգամ հետս վերադարձած է վանքի բակը:

— Հա՛, էն սպան է, որ հիմա քաջ իշխան մը դարձած է, վերը Առառուած, վարը՝ Արարոյին զէնքը: Իշխանութիւն չի ճանչնար, Թուրքի եւ Քիւրտի բռնութեան դէմ է: Օր մը սուրբ Աղբերիկն է, ուրիշ օր մը սա վերի ժայռերուն մէջ, Դաւթի Քարէն վեր, ինչպէս կ'ընէր աշակերտ եղած ժամանակին: Այս աշխարհ, ճամբան կտրեց երկու ոստիկաններու, որոնք չորս խեղճ Հայեր եւ աղքատիկ Քիւրտ մը բռնած եւ անոնց ունեցածը կոռւզապատէին: Իր տղաներով զարկեց, տապալեց գետին, առաւ աւարը, յանձնեց խեղճերուն, ըսաւ.

— Գացէ՛ք աղօթեցէ՛ք Արարոյի զէնքի յաջորդութեան: Ու աւելցուց.

— Փաշաներէն աւելի ազդեցութիւն ունի: Ամէն օր տեղ մըն է, երբ զինք կը փնտռեն Սուրբ Աղբերիկի շրջանին մէջ, ինք արդէն Դաւթի շրջանը ոտքի տակ առած է: Իսկ երբ Դաւթը կը խուզարկեն, ինք իր խումբով Դաւթի Քարին շուքին տակ նստած, վերէն կը դիտէ ռուսականներու եւ զօրքի ապարդիւն շարժումները: Սառնոյ իշխանութիւնը պիտի վերականգնեմ կ'ըսէ:

— Ի՛հ, Աստուած դիտէ, թէ ի՞նչ դուրս պիտի գայ այս Հայ Քէօթօղունէն: Գնդակը ճակատին կրակեն՝ աչքը չի թարթեր:

Սարհատ հարցումներ չըրաւ, իրականութիւնը եւ հերթաժամ չուղեց ստուգել: Իրեն Համար Արարօն միտով ու ոսկորով զինուած Հայն էր, որ այս ժայռերուն մէջ իսկական բռնակալութիւնը կ'արհամարհէր, անհուն հպարտանքով լեցնելով իր սիրտը, որ ճմլուած էր իրենց ընկուզներէն երբեք տակ պատահած զէնքի օրերուն: Եւ հիմա, կորովի պատանի մը, երազն ունէր հասնելու իր բաղձանքին, զէնքը ուսին, անվախ արհամարհելու Համար քիւրտ եւ թուրք զինեալները, որոնք անգութ դահիճները կը հանդիսանային անզին եւ ստրկացած Հայերուն:

Սարհատի այս բաղձանքներուն, այս երազներուն, այս խանդավառութիւններուն խորքին՝ Սուսամի քաղցր յիշատակը թէեւ երբեմն կը կայծակլուար, բայց քաջութեան եւ ազատութեան փառքի ճամբուն վրայ կ'աղօտէր մասամբ:

✽

Իրօք, 1885-86 թուականներուն Խրիմեան Հայրիկի Երկաթէ Ծերեւիկը նոր շարժում մը, ազատութեան երազի նոր երանդ մը ստեղծած էր Տարօնի եւ Վասպուրական աշխարհներուն մէջ:

Մչոյ Կեղրոնական վարժարանը, Սարեանի շուրջ խմբուած ուսուցիչներով, Հայոց վերածնութեան նոր եռանդ մը կը բերէր այս Հինաւորաց աշխարհին, ուր Մամիկոնեաններու յիշատակը խորունկ ապրում մըն էր ժողովուրդի միտքում:

ղողուրդի սրտին մէջ, ու անհուն ցաւ մը, որ այդ հերոսական օրերէն զբոսկրած կը մնար այս արի ժողովուրդը:

Անդին, Մովսէսի ժայռերէն ծնած աղայ մը, Արարօն, զէնք մը կը ճարէր եւ Սասունցի Դաւիթի ճամբով՝ Մովսէսէն վար կ'իջնէր, մահը աչք առած՝ ազատ մարդու մը կեանքը կը վարէր բնութեան գրկին մէջ:

Քանգավառ խօսքը կեդրոնականի սեղաններու վրայէն, իսկ զէնքի ձայնը Մովսէսի ժայռերէն ու ձորերէն կու գար: Մթնոլորտը լիցուած էր այս երկու ոգեւորող իրողութիւններով: Հովիւներն ու Գեոօ Առաքելը այս կեանքը հեքիաթի վերածելու փափաքէն չէին կրնար հրաժարիլ ու իրենք ալ իրենց բաղձանքներու կատարումը կը տեսնէին այս անցուղարձերուն մէջ:

❖

Ձմրան ամիսները կը մաշէին հետզհետէ, ու Մարտի սկիզբներուն Դաշտը լըջապատող լեռներէն ձիւնհալքի ջուրերը կ'ողողէին լեռներու ստորոտներն ու Մշոյ դաշտը:

Հողը ձիւնի թանձր սաւանէն ազատած՝ մածկալներու կը սպասէր: Արարիչները երամ երամ կը վերադառնային իրենց բոյները, կարծես վերակենդանութեան օրհնութիւնը բերելով իրենց հետ, դաշտի չարքաշ աշխատաւորներու համար: Լեռներու գագաթները ճերմակ սաղաւարտ դրած՝ կը հսկէին Դաշտի խլրտուն կեանքին: Բարձրաբերձ այս կատարները մինչեւ Մայիս պիտի սպասէին հովիւներուն երգի հնչիւնները լսելու, որպէս կեանքի առաջին աղղանշան: Աղջիկներն ու տղաքը մինչեւ ձիւնի չեւտերը պիտի բարձրանային ձնծաղիկով իրենց աչքերը շոյելու, այն հաւատքով թէ ալ աչքի ցաւ պիտի չունենան:

Դարձան այդ օրերէն մէկը, իրարանցում մը կար Առաքելոց վանքին մէջ: Վանահայրը լուր առած էր, թէ կեդրոնական վարժարանի աշակերտներն ու ուսուցիչները պտոյտի ելած էին նոր կանանչներն ու առաջին ծաղիկները ողջունելու: Անոնք Աստղկայ բերդի աւերակները հասնելէ յետոյ, պիտի անցնէին ձորակը եւ բարձրանային Առաքելոց վանքը:

Աշակերտները աւելի մեծ յուզումի մատնուած էին: Դասերը դադարեցան, ու անոնք դասատուներու ղեկավարութեամբ վանքի պառթիւքներին վրայ համախմբուած՝ Մուշէն պտոյտի ելած հինգ հարիւր աշակերտները գիմաւորելու պատրաստ էին:

Ահա անոնք, զինուորական շարքով, սկստական գաւազանը իրենց ձեռքին՝ դէպի վանքի բարձրաւանդակը կ'ելլէին սրարշաւ, կարծես թէ բերդ մը գրաւելու հրամանը ստացած ըլլային:

Քանի մը վայրկեանէն վանքի պուրակները խուռներամ բազմութեամբ զբաւուած էին: Անոնց ուսուցիչները, երիտասարդ ու եռանդուն իրենց մատաղ աշակերտներուն զնացքին հետ հաւասար քայլով հոն կը հասնէին:

Աշակերտները պղտիկ դադար մը առին անտառի եւ վանքի բացաստանին վրայ, երբ ուսուցչական կազմը կը ներկայանար ձորունի վանահօր իր յարգանքը մատուցանելու: Երբ վերադարձան, աշակերտները երգի ուսուցչին աղջանշանին վրայ համախմբւեալ երգեցին՝

«Հայաստան գրախտավայր»...

Հիւրերը շարքով առաջնորդուեցան վանքին տաճարը, ուր գոհարանական աղօթք մը արտասանեց լուսարար վարդապետը: Աշակերտները եւ

ուսուցիչները վանքի դարպասէն դուրս ելան, դէպի դաշտը բացուող բարձրաւանդակը ու տողանցեցին Խորենացիի, Դաւիթ Անյազթի, Եղիշէի եւ միւս թարգմանիչներու նուիրական կոթողներուն առջեւէն, հպարտանքի զգացումներով լեցուած: Ազատ Հայաստանի պատմութիւնը կը վերակենդանանար այս պատանի հոգիներուն մէջ: Պատմութեան դաստուը վարդապետը ակնյայտի եռանդով կը խօսէր ամէն մէկ կոթողի մասին եւ յստակ ու հըն-չեղ արտասանութեամբ կը կարդար զրաբար յիշատակարանները, որ արդէն գոց ըրած էր: Կեդրոնականի աշակերտները միացած վանքի աշակերտներուն եւ ուսուցիչներուն՝ մեծ ուշադրութեամբ եւ վերացած մտիկ կ'ընէին բացօթեայ այս պատմական դասը, որ զիրենք կը փոխադրէր Ոսկեդարու հմայիչ օրերուն:

Կեդրոնականի աշակերտները պիտի շարունակէին իրենց արշաւը դէպի Դաւա, վերադառնալու համար Մուշ: Պաղ թան մատուցուեցաւ բոլորին, միակ զովացուցիչը, որ ի պատուի էր Հայաստան աշխարհի մէջ: Մարդանքի ուսուցիչի ազդանշանին վրայ, աշակերտները զինուորական շարքի կեցան, դաւադանները իրենց ուսերուն, շարժեցան երգելով:

Ո՞ւր է, ա՞ւր է Հայաստան,
Սա՛ է, սա՛ է Հայաստան,
Կեցցե՛, կեցցե՛ Հայաստան,
Կործանի՛ Տաճկաստան:

Աշակերտները կ'անցնէին զինուորական դոփիններով, իո՛վ վանքի ուսանողները բարձրաւանդակի վրայ կեցած՝ կը ծափահարէին այս մտաւորական բանակը, որ ահա եկած էր տեղը բռնելու Մամիկոնեան դոռ բանակին:

Արշաւախումբին երգի ձայները դեռ կ'արձագանդէին Մոկուշի ձորերուն մէջ, երբ վանքի աշակերտներն ու վարդապետները կը վերադառնանային վանքի խուցերուն, ուր աղօթքի մրմունջներուն յիշատակը կ'արթննար իրենց մտքին մէջ:

Առաջին զինուորական ցնցումն էր, որ կ'ունենային վանքի աշակերտները: Սարհատ ընկերներուն խորհրդաւոր լուսթիւնը խղից:

— Տղաք, եկէ՛ք մենք ալ արշաւանքներ կազմակերպենք դէպի Դաւիթ Քարը եւ Մովսաթի բարձունքները:

— Վարդապետները չեն թողուր, մրմնջեց սարկաւազքու աշակերտ մը:

— Կը փախինք, աւելցուց Սարհատ, ու եթէ պէտք է թող պատժեն մեզ, թող հացէ զրկեն: Միջոցը կը գտնենք վանքի մատակարարներէն պատառ մը բան ճարելու:

Սարհատ կը հրաժեց, թէ երբ Թարգմանչաց այս վանքը փոքրիկ կըթուրին մը տալով կրցած է ծնունդ տալ Արարոյի պէս հեքիաթային հերոսի մը, նոյն այդ վայրին մէջ իրենք կրնան զերազանցել Կեդրոնականի աշակերտները, դոնէ մարտական ոգիով, մանաւանդ որ վանքի աշակերտներուն մեծամասնութիւնը բաղկացած է Սասնոյ բարձունքներէն եկած տըղոցմէ: Անմիջապէս գտաւ իրեն համամիտ քանի մը տղաք, որոնք գաղտնի ուխտ մը կնքեցին Դաւիթ Քարին տակ եւ ալ անկէ յետոյ այս խմբակը պարբերական արշաւանքներու սկսաւ, դէպի Մովսաթի ստորոտներէն կախուած ժայռերը:

Կ. Ս.

(Շար.)

ՄԱՐԱՏ ԵԱՆՆԱԶԱՐԵԱՆ

ԵՐԿԱԹԷ ՄԵՌԵԼԻ

Մութ էր տակաւին՝ երբ Արմենակ արթնցաւ։ Կինը՝ ծանր յղի, հանգիստ մը կը քնանար, երբ ան՝ թեթեւ նախաձաշ մը պատրաստեց, կէս ոտքի, կէս նստած՝ կերաւ, զգուշութեամբ զուտը զոցեց եւ դուրս ելաւ, առաւօտեան զով ողին մէջ։

Կանգ առաւ, պահ մը, փողոցը, խորունկ մը շնչեց արշալուսային թարմ օդը, թօթափելու համար տակաւին իրեն կառչած քունին թմրութիւնը, նայեցաւ անամպ երկնքին եւ քալեց դէպի հանրակառքը։

Տասնեակ մը բանուորներ հոս հոն նստած կը ննջէին, եւ կառքին ցնցումներէն միօրինակօրէն կ'օրօրուէին։

Պարուրուած քնաթաթախ մտմտութեանով, անոնց դէմքերուն վրայ կ'ալիծօրփէին տաժանելի կեանքի մը դեղին նշաններ։

Երբ գործարանին դուռը հասաւ Արմենակ, թեթեւ ժպիտով մը զբարբի լոյս ըսաւ ասոր անոր, եւ ուղղուեցաւ դէպի իր բաժանմունքը։ Փոխեց իր հագուստները, հագաւ գործի լաթերը, եւ նեղ ու ճոճաւան սանդուխներէն՝ բարձրացաւ վեր, փուռին կատարը։

Գիշերուան գործաւորները վերջացուցեցին արդէն իրենց աշխատանքները եւ կը պատրաստուէին տուններին մեկնելու։

Գետինը ծածկուած էր հարիւրաւոր մեծ ու փոքր կաղապարներով, եւ մասնաւոր հողակոյտեր՝ հոս հոն, նոր շինմանիճ կաղապարներու կը սպասէին։

Արմենակը փոսպանին օդնականն էր։ Ձեռնասայլով քարածուխ կը բերէր դուրսէն՝ կրակը միշտ վառ պահելու համար։

Սուլիւր կը փչէ, եւ ամէն մարդ գործի կ'անցնի։

Գործարանին գետինը՝ գետին է, ո՛չ տախտակամած։ Հողակոյտեր։ Մրոտ լաթերով գործաւորներ։ Սոյլակներ։ Կաղապարներու տուփեր։ Պողպատէ թիկեր։ Մեքենաներ։ Բազմազան գործիչներ։ Յարատեւ շարժում։ Գրտինք ու մամուռ։ Ուրուագիծեր ու քարտէսներ։ Ու այս բոլորին մէջ՝ արտադրութիւն։

Առաւօտեան ժամերը՝ ուժեղ յարձակողականի մը տպաւորութիւնը կու տան։ Ամէն մարդ գործ-գլուխ կ'աշխատի, եւ հետեւաբար, իր ամբողջ ուժը, արթնութիւնն ու արագաշարժութիւնը շարժման կը դնէ։ Ու արտադրութեան հետ համընթաց կ'երթայ գործաւորին հոգեկան տրամադրութիւնը։ Ամէն ժամուն՝ պարտք մը կը վճարուի իր մաքին մէջ, եւ իր սրտի վրայի ծանրութիւնը՝ քիչ մը աւելի կը թեթեւնայ։

Մաս մը նպարտվածութիւն։ Մաս մը տան վարձքին։ Մաս մը ընթացիկ ծախքերու եւ ազգային ձեռնարկներու։ Ու այս բոլոր մասերը՝ քրտինքով, տաժանքով, դառնութեամբ։

Երբ կ'անդադարանաս այս մանրամասնութիւններուն, յարգանքի անհուն զգացումով մը կը լեցուի սիրտդ՝ այդ մրոտ ու փոշոտ ազնուականներուն հանդէպ։

Ժամանակ չունին պահ մը կանգնելու եւ խօսակցելու։ Կատակները կ'ընեն առանց կանգ առնելու։ Մրցումը կը հասնի իր գագաթնակէտին։ Կը զարմանաս անոնց տոկունութեան ու արագաշարժութեան վրայ։

•

Այդ օրը, Արմենակը երկու երիտասարդներու ծանօթացաւ։ Երկու նոր ուսանողներու՝ որոնք ամառուան ամիսներ

բուն՝ իրեն հետ պիտի դործէին, յաջորդ տարելը ջանի թոշակը պատրաստելու համար:

Մէկական տարի մնացած էր անոնց շրջանաւարտութեան: Երկուքն ալ ճարտարագիտութեան ուսանողներ էին: Վերահացուն՝ մասնաւոր յարգանքով կը վերաբերուէր անոնց հետ եւ կը բացատրէր անոնց, թէ այդ փուլը ի՞նչպէս էր շինուած: Թէ, քանի՞ աստիճան տաքութիւն կրնար արտադրել, եւ թէ, օրական քանի՞ թօն երկաթ կը հալեցընէր:

Բացատրութիւններ կու տար, նաեւ, կաղապարներու մասին: Ի՞նչ տեսակ հող կը գործածուէր: Ուրիշ՝ կու գար այդ հողը, եւ ի՞նչ հանքերու խառնուրդ էր ան:

Արմենակին միտքը, սակայն տունն էր: Իր կինը, Արուսեակ, շատ էր ծանրացեր: Սրերը մօտեցեր էին: Եթէ բան մը պատահէր, դրացիին պատուիրած էր որ գինք եւ բօխիկը անմիջապէս կտնչէր: Այնպէս որ, այդ մասին շատ չէր մտաւանջուեր: Գործարանն էր որ գինք կը մտատանջէր: Այդ տաժանաւայրը, ուր ինկած էր դիպուածին բերումովը, եւ ուրիշ չէր կրնար դուրս գալ: Վարձքի, սպորուստի, եւ առօրեայ ծախքերը՝ չըւանի մը պէս վիզը անցած՝ կը քաշէին զինք, եւ ինք՝ իր փրկութիւնը՝ երազանքի ու յարատեւ աշխատանքի մէջ միայն կը դռնէր:

Ամէն ինչ այնպէս էր կարգաւորուած, որ, տակաւին չարաթափնարը չզանձուած՝ արդէն դրամը ծախսուած կ'ըլլար:

Գոհ էր սակայն, որոշ չափով, եւ հպարտ, որ ոեւէ մէկէ կախում չունէր: Անշուշտ, աւելի լաւ կ'ըլլար, եթէ կարողացած ըլլար օգտագործել իր համալրարանական կրթութիւնը, ավահովելով համեմատաբար աւելի հանգստաւէտ կեանք մը:

Ասկայն, այն ատեն ալ, հաւանաբար, տարուէր իր գիտական ճիւղովը, եւ հեռանալ բանաստեղծութենէն՝ որ իր հոգիին անբաժանելի մասը կը կազ-

մէր: Իր առօրեայ կեանքին մէջ, բանաստեղծութիւնը փրկարար դեր էր կատարած շարունակ: Հրաշագործ ուժ մըն էր ան՝ որու առջեւ տաժանքն ու դառնութիւնը կը չքանային:

Շարաթը չվերջացած, արդէն նորեկ ուսանողներուն բարեկամ էր դարձեր: Գործերին այնպէս էր որ, միշտ ժամանակ կրնային գտնել՝ քանի մը վայրկեան կանգ առնելու եւ խօսակցելու:

Այդ օրերու կարգաթափ էր «Խաղաղութիւն»ը: Եւ Արմենակ՝ իրենց խօսակցութիւնը դարձուց անոր շուրջ:

— Ի՞նչպէս կարելի է հասնիլ անոր:

— «Մէկ կերպով միայն»: Պատասխանեց ուսանողներէն մէկը: «Անգլային սահմաններուն ջնջումովը»:

— «Այդ շատ աղիտալի միջոց մըն է: Նման փորձ մը պիտի քախի միշտ ներքին ընդդիմութեան ու խռովութիւններու, եւ ծնունդ պիտի տայ բռնակալական իշխանութեան մը»:

— Այդ հակամարտութիւնները անխուսափելի են, մինչեւ որ անհատները կորսնցնեն իրենց ազգային զգացակալութիւնը: Երբ աշխարհը կը դառնայ միատարր զանգուած մը, այն ատեն ապահովուած կ'ըլլայ տեւական խաղաղութիւնը:

— Ձէ՞ որ եթէ անհատներու արժանաւորութիւնն ու ինքնութիւնը յարգուի, պետութիւնը աւելի կը զօրանայ, եւ պետական շէնքը աւելի հաստատուն հիմերու վրայ կը դրուի: Իսկ մշակոյթը կը դառնայ աւելի ինքնատիպ, աւելի դեղեցիկ, աւելի տոկնջող:

— Ատոնք բանաստեղծական արտայայտութիւններ են միայն: Հիմնական հարցը այն է որ, անհատները պէտք է դադրին ունենալէ ուրոյն հակում եւ տեսակէտ: Պետութեան գործն է այդ:

— «Միանգամայն դժբախտ, ճի՛շդ է ընկերը»: Վրայ բերաւ միւս ուսանողը, որ լուռ կը հետեւէր անոնց խօսակցութեան: «Նայեցէ՛ք այս մեքենաներուն եւ գործիքներուն: Ասոնք ուրիշ բան չեն՝ եթէ ոչ, մետաղացած մտածում: Ու այդ մը տածումը կ'արտադրէ մեզի համար ա-

մէն տեսակ ապրանք, համաձայն՝ եղած նախորդումին:

Հետոյն է նաեւ մարդոց պարագան: Պետութիւնը ճարտարագէտն է որ կը պատրաստէ անոնցմէ զործիքներ ու մեքենաներ: Ու այդ մետաղացած անհատները պիտի ծառայեն, միայն, արտադրելու այն՝ ինչ որ պետութիւնը կը սպասէ անոնցմէ:

« Կոնսկը պէտք է սեղմուի կեդրոնէն »:

✽

Կէս օրը անցեր էր: Գործարանը վերջապէս մը պէս կը ֆշար, եւ հալած երկաթը կայծկւտէլէն դուրս կը հոսէր, հեղուկացած արեւու պէս, աղիւսատառ հսկայ կաթնասնէրու մէջ:

Պողպատէ ձող ձեռքերին բռնած, կանգնած էին ուսանողները՝ ուրուականներու պէս, պիբի ու արթուն, խցելու համար անմիջապէս, հարկ եղած պահուէն, դունդ մը կատմի՝ փուռին հրաշէկ ահը, սւրիէ զուրս կը վազէր հալած երկաթը, մահուան պէս անձայն, ու անոր պէս անողորմ:

Վարդապետին, դեղին ու մանիշակաւ գոյն ժայթքումները այդ սանձուած հըրարութիւն՝ ձուլարանին կու տային վըսեմ կերպարանք մը, եւ ուսանողները զարմիր էին հրեղէն ճարտարագէտներ պողպատեայ աշխարհի մը:

Ու կաղապարները իբրբու ետեւէ կը վերածուէին ձողերու: Պողպատեայ տախտակներ ու գերաններ: Զողեր ու խողովակներ: Միւսներ, ճանկեր ու պըղընձեայ թելերու կծիկներ, որոնք՝ իրենց կարգին, պիտի վերածուէին այլազան ղէնքերու, հրասայլերու, մետաղեայ մուրալներու, նաւերու, մեքենաներու, ու ճարտարագիտական բազմապիսի տարազներէն կը բարձրանար նոր աշխարհ մը:

Բաղաքներու պողպատեայ կմախքները՝ օդին մէջ կը սկսին կանգնիլ պաղ ու մուլլ գետին տակէն՝ մեծազեայ աղիքներ կ'երկարին խառնիճազանճ կարգաւորութեամբ մը:

Պղնձեայ թելերու ցանց մը կը հիւսուէր նորաշէն տուններէն ներս ու դուրսը: Լուսատու եւ ուժատու հոսանքը՝ անտեսանելի հեղուկի մը պէս կը հոսի անոնց մէջէն, եւ քաղաքները կը շնչեն անով, կը մտածեն անով, կը տեսնեն անով:

Պաղ հով մը կը փչէ պողպատեայ քաղաքներուն վրայ, եւ մարդկային սըրտին տեղ, լեռնանման կաթսաներ կը բարախին, եւ արեան փոխարէն՝ շոգին է որ շրջան կ'ընէ անոնց երակներուն մէջ, ու ջերմութիւն եւ ուժ կը մատակարարէ անոնց:

Միատարր մարդկային իմօր մը կը սկսի պատրաստուիլ: Կերպարանքները կը սկսին կորսուիլ: Բազմազանութիւնը կը չքանայ: Պողպատեայ ուղեղ մը աւնադորոյն հրամաններ կ'արձակէ: Աշխարհը հսկայ մեքենայի մը պէս կը շրջապտտուի, եւ մետաղակերպ շարժումները կը տեսնուին սմէնուր:

Պաղ ու մեքենայացած մարդ: Ծառատարապիտական յղացումներու բարդ հիւսուածք: Նախորդուած շարժում ու կենցաղ: Նախասահմանուած ճակատագիր: Սահմանական ձեռնարկն ուր ժանիքներ, եւ սահմանադրուած թոփէք:

Արմենակը եւ ուսանողները կը շարունակեն վիճիլ:

— «Տիեզերքը՝ անհունօրէն բարդ մեքենայ մըն է: Այնքան բարդ եւ այնքան նրբին՝ որ գերբնական մտքի մը զոյութիւնը հեթաղուած է, միշտ, անոր ետեւը: Մարդկային միտքը, սակայն, սկսած է լուսաւորուիլ վերջին դարերուն, եւ ազատիլ ցնորական այդ հայեցողութիւնէն: Անտեսուածութեան զոյափարը՝ վերջին ժամանակներու ցալտուն յաւկանիչներէն մէկն է դարձած:

— «Ես չեմ ընդունիր մեքենաբանական այդ տեսութիւնը», ըսաւ Արմենակը: «Եթէ նոյնիսկ տիեզերքը բարդ մեքենայ մը եղած ըլլայ, պողպատեայ կըմախքի եւ պղնձեայ թելերու հիւսուածք մը, մենք պէտք է աշխատինք շունչ փռել անոր մէջ, հոգի տալ անոր: Փոխան ջրաշոգիւղի, ազատութեան շոգին թող շրջան ընէ անոր մէջ »:

— Մեր ընկերային փոխադասութիւնը չի հաւատարմորէն իրականացնում զազափարին: Գումարը չի տրուում: Նիւթն է միայն հիմնաքանն ու մարմինը տեղեկութիւն:

— Եթէ նոյնիսկ այդպէս եղած ըլլայ մինչեւ այսօր, մենք պէտք է աշխատինք փոխել զայն: Պէտք է հոգի դնենք անոր մէջ: Պէտք է ձուլուինք անոր հետ: Լուծուինք անոր մէջ, որ մեր հոգեկան տարրերը զգայնութիւն ու մտածում աւանդուին: Որ տիպերը չնչէ կամովին, մըտած է եւ գործ է կամովին: Ենչէ ազատութեան գարնանային օդը: Որոնէ, քերթէ, երգէ: Այդ կերպով միայն պարզեւած կ'ըլլանք մեր զաւակներուն՝ տաքուկ աշխարհ մը: Ամէն մարդ ազատ ու ինքնիշխան: Ինքն իր տէրը: Աշխատանք, ապաստութիւն, ստեղծագործութիւն:

Տ

Երբ այդ իրիկուն, Արմենակ տուն վերադարձաւ, Արուսեակը՝ ծանր քայլերով մօտեցաւ դրան, բացաւ զայն, եւ կարօտով մը համբուրեց իր ամուսինը՝ որուն դէմքին վրայ կ'երեւային տակաւին, թափանցիկ մէզի մը նման՝ օրուան ընթացքը տպաւորութիւնները:

Արմենակ մտաւ լուացարան, մաքրուեցաւ, հագաւ գիշերանոցը, եւ մօտեցաւ սեղանին, որուն վրայ արդէն, ընթերցելու պատրաստ՝ իրեն կը ուղարկէր:

Ընթերցէն յետոյ, նստեցաւ բազմոցին վրայ, առաւ կիներ իր բազումներուն մէջ, համբուրեց զայն կարօտագին, պատմեց անոր ուսանողներու մասին, եւ երկուքը սկսան երազել իրենց ապագայի մասին:

«Այս նոր ուսանողները, կարծես, նախակարգաւորներն են նոր աշխարհի մը: Հիմնովին տարբեր կեանք մը: Անոնց համար ամէն ինչ մեքենականութիւն է: Կեանքը՝ ինքնին, բարդ մեքենականութեան արտայայտութիւն մըն է: Այդատութեան գաղափարը վնասակար ուժ մը կը նկատեն: Պետութիւնը պէտք է ճարտարապետէ, եւ զանգուածները պէտք է շարժին համաձայն տրուած ցուցմունքներուն:

«Անտեղիտալիօրէն պաղ եւ անկենդան փոխադասութիւն մըն է սակայն: Եթէ վերցնես սէրն ու ազատ կամեցողութիւնը կեանքէն, ի՞նչ կը մնայ մէջտեղը: Ստանա՞մանիք:

Ու Արմենակը կը շարունակէր իր մտորումները:

«Ընթերցէ ք, նիւթապէս հանգստաւէտ կեանք մը չկրցայ ապահովել, սակայն չձախողեցայ կարեւորագոյնին մէջ:— Հոգեկան հարստութեան: Սկիզբէն ի վեր եղած եմ եւ երազող: Զգացած երազանքին քաղցրութիւնը: Կառնած մնացեր եմ շարունակ անոր, եւ ծածկեր անոր մեղրաջուրը: Տաժանքը, յոգնութիւնը, դառնութիւնը, բոլորը կը չըքանան անոր հրաշագործ ժպիտին առջեւ: Բանաստեղծութիւնն է այդ երազանքը: Բանաստեղծութիւնը՝ որ կ'անցնի իմաստասիրութեան կապոյտէն եւ կը թեւածէ խորհուրդներու վիհերուն վերեւ:

«Մեր երախան պիտի աշխատինք մեծցնել այդ ոգիով: Անոր համալսարանական կրթութիւնը պիտի ապահովենք: Թէեւ վստահ չենք կրնար ըլլալ թէ ի՞նչ պիտի ըլլան իր հակումն ու կենցաղը, սակայն մենք պիտի աշխատինք որ ան պաշտէ ազատութիւնը, սիրէ ճերթողութիւնը եւ նուիրուի անոնց: Եթէ ասոնց հետ միացնէ աշխատասիրութիւնը, կեանքը կ'օժտուի ջերմութեամբ, եւ պէտք պիտի չունենանք, բնաւ, մտահոգուելու անոր ապագայով:»

Արուսեակ՝ կռթնած ամուսնոյն, եւ իր առատ մագերը անոր երեսին, մտիկ կ'ընէր անիտս, եւ իր կարգին կ'երազէր:

Կը սպասէր անձկագին երախային ծնունդին: Կարգադրութիւններ կ'ընէր մտովին՝ անոր հոգատարութեան համար: Զգեստներ, լաթեր, օճառ, բրնձափողի արդէն առնուած էին, եւ օրօրոցը՝ պատրաստ:

Ապա, երեւակայութեամբ կը սկսէր հետեւել անոր ամուսին: Ամէն օր նոր եւ հետաքրքրական բան մը պիտի ցոյց տար իր ամուսնոյն, Երախային առաջին ժպիտը: Թաթիկներու հրեշտակային

շարժումները: Տոտիկներու քնքոյշ հարուածները:

Եւ այսպէս, նոր քան մը, ամէն օր:

Ու երախան կը մեծնար: Արմենակին տաժանըը աւելի պիտի թեթեւնար անոր ժպիտներէն, խօսքերէն: Երեւակայութիւնը արագօրէն կը հետեւէր անոր անմահ: Պատանի է արդէն: Բարձրագոյն կը թուէր ինքն կը հետեւի: Ամէն կերպով Արմենակին կը նմանի:

Հայրը գրեթէ խենթացաւ, երբ Արան իր առաջին բանաստեղծութիւնը բերաւ եւ կարգաց անոր: Ջերմ ու զգայուն: Ինքնատիպ եւ ազատասէր:

Արմենակը խորունկէն հառաջեց: Ուրախ էր եւ կը ջաննիկ:

✽

Եւ օրերը կ'անցնէին այսպէս, աշխատանքով ու երազով: Տունէն դուրսը:

Կէս օրը անցեր էր այդ օր:

Փռուքին առջեւ, հալած երկաթի կայծկլուտ լճակի մը նման, լայնաբերան հսկայ կաթսան կ'եռար: Փշաքաղիչ տեսքով մը:

Արմենակը, վերը կանգնած՝ կը դիտէր այդ հուացող ու քփքացող երկաթը, ու կը խորհրդածէր:

...Արարչական խմորը պատրաստ է հազնելու բաղմապիսի ձեւեր ու կերպարանքներ: Տարազները, շուտով, պիտի մետաղանան... Քաղաքներ՝ երկրաշափական կառուցուածքով վեր պիտի խոյանան... Խորհրդածողութիւններու մեծածախս սրահներու մէջ՝ հեղուկցած ոսկի կը սպասարկուի... Արդարութիւնը՝ ամօթահար, դուրս կը փախչի այդ ըստպանդանոցներէն... Ճշմարտութեան շուշանափայլ թեւերը՝ անճանաչելիօրէն կը մրտարն, եւ խժայուր երաժշտութիւն մը կը տարածուի հորիզոնէ հորիզոն...:

Ու Արմենակ՝ կանգնած, սանդուխի վերջնամատին վրայ, տարուած էր դեղին ու մանիշակագոյն գալարներով եռացող հրաշէկ լճակին վսեմութեամբը,

երբ, մէկէն, գլուխը կը դառնայ, աչքերը կը մշուշոտին, հոգեկան փուլզում մը կը պարուրէ զինք, եւ թաւալլոր կ'իյնայ բոցկլուացող կաթսային մէջ:

Փշաքաղիչ ճիչին հետ՝ բոցեղէն ժայթք մը: Ապա հալած երկաթի կայծկլուտն ալեկոծութիւն մը: Յետոյ թեթեւ խռովք ու դող, եւ Արմենակ արդէն հալած էր...

✽

Յաջորդ օրը՝ Կիրակի էր:

Գործարանին հողին վրայ՝ հսկայ ծակ մը փորուեցաւ, եւ ծովածաւալ յուղարկւածներու ներկայութեան հաղաթաւութեան ծանրութիւն ունեցող երկաթի այդ զանգուածը — մեռելը — բեռնարարձ մեքենայով մը փոսը իջեցուցաւ, կրօնական տխուր արարողութեամբ:

Անդին, հիւանդանոցի մայրերու յարկաբաժնին մէջ, Արուսեակը ծնունդ կու տար մանչուկի մը, անդիտակ՝ կատարուած արկածին:

Կէս-ըուն, կէս-արթուն, մշուշներու մէջ օրօրուող նոր աշխարհ մը կը սկսէր թողալ թծուիչ անոր աչքերուն առջեւ:

Նորաշէն քաղաքներու պողպատեայ կմախքին վրայ՝ դարնանային հովեր կը փչէին: Վարդաստաններու մէջ նստած տունները՝ քաղցրօրէն կը ժպտին: Խաղաղութիւնը՝ զոյալունչ անձրեւի մը պէս կը մաղուի: Հորիզոնները կը լայնանան անընդհատ, ազատ թռիչքներու եւ խօյանքի համար: Քերթողութիւնը՝ ցընծութենէն կ'արտասուէ: Հեռաւոր երաժշտութիւն մը՝ հրեշտակներու շրթներուն վրայ կը թրթռայ: Ազատութիւնը՝ լուսեղէն արեան պէս, մետաղացած երակներու մէջ չըջան կ'ընէ: Անհուն եւ անսահման կարելիութիւններ թափ կ'առնեն: Նոր աստղեր, ու իմացական նոր արեւներ՝ հրեղէն շուշաններու պէս կը սկսին ծաղկիլ, եւ լուսաշող հողը՝ երանական համառուադ մը կը պայթեցնէ:

Ս. Ծ.

ԱՌԱՋԻՆ ՍԷՐ

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

Կը թափառէի շուրջը՝ Ընկերները կը խաղային, ինք կը դիտէր խաղը, ես՝ զինքը։

Կամաց կամաց մօտեցայ իրեն. ձեռքիս մատները իրարու պրկուած էին. հարցուցի.

– Ի՞նչ է անունդ։

– Մարգարիտ, պատասխանեց. ինձի նայեցաւ իր աղուոր աչքերով։ Մի րոտ կը թփրտար. կամաց կամաց հեռացայ իրմէ, միացայ ընկերներուս, բայց միտքս ու հոգիս Մարգարիտին հետն էր։ Ոտշոր սեւ աչքեր ունէր ու կապոյտ գոգնոցն ալ տարբեր դրաւ թիւն մը կ'աւելցնէր իր գեղեցկութեան վրայ։

Կը ճանշնայի զինք, առաջին դասարանն էր, ու իրենց դռնարանը բակին ծայրը կը գտնուէր։

Յաճախ կը ցատկէի պատուհանէն դիտելու համար զինք. օրիորդը կը խոյանար գէպի պատուհանը, կը փախչէի, պատին տակ կայնած զրոսանքի ելլելուն կը սպասէի. ամէն զաղարի կ'ուզէի մօտը ըլլալ, դիտել զինք, աչքերը, այտերը, ու խաղալ հետը, բայց ինք իր ընկերուհիները ունէր...

Մաղիկ դասարանն էի. մեր զանգակը շուտ կը զարնուէր, կը վաղէի մեր շարքը, բայց աչքերս իրմէ չէին բաժնուեր։

Ամէն առտու կը տեսնէի զինք. լաթէ պղտիկ պայտաւակով մը կու դար դպրոց, միշտ կարմիր խնձորի պէս կարմիր այտերով։

Իրիկուն մը ձեռք ձեռքի տուած քալեցինք փողոցներէն, յետոյ դաշտերը ելանք, սկսանք խաղալ. մարգարտածաղիկներ հաւաքեցի իրեն։ Յանկարծ սկըռաւ անձրեւիկ. վազեցինք։ Տունը շատ հեռու կը թուէր. կը վազէինք անձ-

րեւին տակ. ցեխը կօշիկներէն կը ցատկէր գոգնոցին վրայ։

– Օրիորդը որքա՞ն պիտի բարկանայ, ըսաւ Մարգարիտ։

– Մամաս ալ աղուոր մը պիտի ծեծէ, աւելցուցի։

Անձրեւը շատ արագ կ'իջնէր. հաւառակ ծեծուելու վախին, երջանիկ էի. թեթեւցած հոգիով կը վազէի աղջկան ձեռքէն բռնած. ինքն ալ ուրախ էր։ Կը քալէինք ջուրերուն մէջէն, յետոյ փշաթելերով ցանկապատուած պարտէզ մը անցանք. երբ տուն հասանք աղուոր մը թրջուած էինք։

Մայրս արթնցուց զիս. հագուեցայ. կը զարմանայի, գոգնոցս մաքուր էր. մայրս բան չէր ըսեր։ Քարէ տախտակը ձեռքս՝ դպրոց դասի. առաջին առիթով կ'ուզէի իրեն հանդիպել, պատի մը տակ իր ընկերուհիներուն հետ կայնած էր. խորհեցայ որ ինքն ալ անձրեւին մասին կը պատմէ. մօտեցայ իրենց, պատին քըսուելով. համարձակութիւն չունէի, բայց չէ՞ որ շատ թրջուած էինք. շատ մօտ էի իրենց. իմ կողմս դարձաւ. միւսներն ալ։

– Ի՞նչ անձրեւ էր, ըսի աղջկան։

– Ի՞նչ անձրեւ, հարցուց զարմացած. երես կը նայէր անակնկալի եկածի պէս։

– Ձէ՞ որ անձրեւեց, երբ կը խաղայինք դաշտին մէջ ու լաւ մը թրջուեցանք. յետոյ փշաթելե՞րը...

Միւսները սկսան խնդալ։

Ուտուցչուհի մը կանչեց զիս քովը. հարցուց.

– Երա՞ջ տեսար։

Գլուխս շարժեցի այո բռնու պէս ու փախայ քովէն։ Պարտուածի պէս բան մը կը զգայի. միջնեւ իրիկուն մտահոգուած էի. սիրտս կը նեղուէր։

– Մամա՛, եթէ երազ տեսնեմ, նոյն

երազը ուրիշ մէկն ալ կը տեսնէ՞:

— Ո՛ր, չի տեսներ, ըսաւ մայրս:

Ինչո՞ւ չի տեսներ, պէ՛տք է տեսնէ, կը մտածէի. ուրեմն աղջիկը չի՞ դիտեր, հասկա մարդարտածաղիկնէ՞րը:

❖

Օր մը, դադարի պահուն, ինքը, քանի մը աշակերտուհիներով մանկապարտեղ առաջնորդուեցաւ ուսուցչուհիի մը կողմէ. գլխահակ կը քալէր. կ'ամջնա՞ր, չա՞ր էր թէ ծոյլ:

Ո՛ւր նստեցուցին զինք. օկոսայ մտահոգուիլ. օրիորդին դուրս ելլելէն ետք կաթնաց մը մօտեցայ դրան. հետաքրքիր էի. ծակ մը կար դրան վրայ, շորքած ու ինկած ստի մը տեղը, աչքի մեծութեամբ. ծռած՝ կը փնտռէի նստած տեղը: Ո՛ւր նստած է արդեօք. կը դողայի, կը համբէի շարքերը, աթոռները. այո՛, իմ քովս նստած է, ճի՛շդ իմ քովս. չէի հաւատար աչքերուս. սիրտս աւելի կը դողար, արդեօք ի՞նքը հոն նստաւ, դիտէ՞ր իմ նստած տեղս. չէ՛, իմ քովս է, դարձեալ կը համբէի նստարանները, առաջին կարգը Սուրէնին կարգն էր, յետոյ Մելքոնինը, յետոյ իմ կարգս, իմ աթոռս ու ինքը ճի՛շդ իմ քովս: Կը հեռանայի ծակէն. բակին մէջ շրջան մը ընելէ յետոյ՝ նորէն կը նայէի ծակէն ներս. նոյն տեղն էր. սիրտս պայթելու աստիճան կ'ուրախանար. քիչ մը հեռանայէ ետք դռնէն կ'երկմտէի, դարձեալ աչքս կը դպնէի ծակին ու կը դիտէի ներսը:

Օրիորդ մը բարկացաւ. փախայ այնպէս ինչպէս շուն մը կը փախչի ոսկոր գողցած ժամանակ:

Կ'ուզէի որ զանգակը շուտ զարնուի. կը վախնայի որ աղջիկը տեղը փոխէ. նորէն կ'երթայի ստուգելու. սիրտս կը հանգչէր, կ'ուրախանայի. նոյն տեղն էր, նոյն դիրքով. կը դիտէի մազերը, կապոյտ պոզնոցը. որքա՞ն կ'ուզէի քովը ըլլալ:

Այս զանգակն ալ ուրիշ ատեններ որքա՞ն շուտ կը զարնուի, իսկ այս անգամ... կը համբէի դարձեալ նստարան-

ները, կը դիտէի զինք:

— Զանգակը ե՞րբ պիտի զարնէք օրիորդ, հարցուցի բաւական շուրջը դառնալէ ետք:

— Հինգ վայրկեանէն:

Ձէի դիտեր թէ որքա՞ն կը տեսէ հինգ վայրկեանը. կը խորհէի, որ շուտով պիտի զարնուի. կը սպասէի հինգ վայրկեան ըլլալուն:

— Օրիորդ, հինգ վայրկեանը շատ երկա՞ր կը տեսէ:

— Ձէ՛, հիմա պիտի զարնեմ, գնա՛ ըսէր իմէ:

Սիրտս չէր ուզեր ջուր խմել, բայց վազելով դացի, աճապարանքով խմեցի, ջուրը օձիքէս հոսեցաւ. կ'աճապարէի. կը խորհէի, որքան շուտ խմեմ այնքան շուտ պիտի զարնուի զանգակը:

Վերջապէս եղած էր հինգ վայրկեանը:

Ծարքին մէջ կայնած կ'աճապարէի շուտ ներս մտնել. կը սպասէի մեր շարքին շարժելուն. միւսներն ալ ինչ դանդաղ կը քալէին. կարծես մեռել կը տանէին:

Եկաւ հրամանը. մեր շարքը կը բարձրանար. մտանք դասարան. կը վախնայի որ ուրիշ մէկը կը նստի. հետայ տեղս, նստայ քովը. նոյն դիրքին մէջն էր. արդեօք կ'ամջնա՞յ. կ'ուզէի գտնել մազերը, սիրելի զինք. ի՞նչ լաւ որ օրիորդը քովս նստեցուցած էր զայն. աչքերս չէի հեռացներ իրմէ. կը դիտէի շագանակազոյն մազերը, կը ծռէի դրասեղանին տակ դիտելու իր գեղեցիկ այտերը:

Կամաց մը գլուխը վերցուց, նայեցաւ ինծի. թեթեւ ժպիտ մը կար այտերուն վրայ:

— Պատի՞ժ եղար, կ'իմացի:

Աղջիկը դարձեալ գլուխը կոթնցուց դրասեղանին. կը ծռէի, կը դիտէի աչքերը: Կ'ուզէի որ գլուխը բարձրացնէ, խօսի հետս ու պատմէ պտոյտի մասին, անձրեւի մասին, բայց ծռած էր գլուխը. չէր խօսեր:

Օրիորդը դասի հանեց զիս. աղջիկը զգա՞ց. օրիորդը հարցումներ հարցուց, չգիտայ:

— Ե՛րբ աղայ, ինչո՞ւ դասդ չես դիտեր, խելք չունի՞ս: Եթէ հիմա ըսէր այդ բանը, կ'ըսէի:

— Ունիմ, բայց հիմա դասին չէ:

Իմ ալ կոնակիս վրան «ծոյլ» գրուած թուղթ մը փակցուց օրիորդը: Ես ալ ծըռեցայ աղջկան պէս. ի՞նչ լաւ էր, երբեմն մեր դուռնիները կը բարձրացնէինք, կը նայէինք իրարու, կը խնդայինք. չէ՞ որ երկուքս ալ «ծոյլ» էինք:

Ձանդակը դարձեցաւ. կէսօր էր. բոլոր աշակերտները դուրս ելան. մենք դեռ նոյն դիրքի մէջ էինք: Օրիորդը կը տեսնէր հանեց «ծոյլ» գրութիւնը եւ աղջկան ալ պատուիրեց դուրս ելլել. կը խնդայինք:

— Ասոնց նայեցէք, չեն ալ ամչնար, կը խնդան, ըսաւ օրիորդ մը շուրջի օրիորդներուն:

Մինչ մենք ձեռք ձեռքի տուած դուրս կ'ելլէինք խնդալով:

❖

Տարիներ անցան: Նոր թաղ մը դուրսից ու նոր մարդոց հետ յարաբերութեան մէջ մտանք: Նոր կեանք մը սկսած էինք ապրիլ ու մանկապարտէզը շատոնց մոռցած: Յաճախ կը կայնէի խանութին դրան առջեւ, կը դիտէի մարդիկը. կը տեսնէի դիմագիծ մը, ծանօթ կը թուէր: Օ՛ր, կը ճանչնամ ասիկա, կ'ըսէի մտքովը. յետոյ ուրիշ մը կ'անցնէր. ա՛հ ալ կը ճանչնամ. կ'ուրախանայի. որքա՛ն փոխուած են:

Հապա այս կի՞նը, որ յաճախ կ'անցնի խանութին առջեւէն իր պզտիկներով. երբ մանկապարտէզ էինք, ինք վերի կարգերն էր. դինք սարսուռի նմանցնելու համար անունը սարսուռ դրած էինք:

Աղջիկ մը անցաւ այսօր մեր թաղէն, հասակաւոր, դեղադէմ աղջիկ մըն էր, կարմիր այտերով, նոր դէմք մըն էր. առաջ չէի տեսած դինք. քանի մը օրեր յետոյ նոյն աղջիկը նորէն անցաւ. նոյն ուղղութիւնով կ'երթար. ուրկէ՞ կու գար. երկրորդ անգամ ըլլալով կը տեսնէի դինք, նոյն վերարկուով. յայտնի էր նոր էր այս շրջանին. արագ քայլերով դար-

ձաւ անկիւնը. պզտիկ միջոցը շուտով կը վերջանար, հագին դէմքը տեսած՝ կը սկսէի կոնակը դիտել ու ան ալ շուտով կ'անյայտանար:

Ո՛վ էր այդ աղջիկը, ո՛րք կ'երթար, արդեօք ուսուցչուհի՞ էր:

Աղուոր աղջիկ կ'երեւար. կարծես բարձր դասու կը պատկանէր, իսկ շաղաւնակազոյն մազերն ալ պարզօրէն կ'իջնէին դէպի ականջները:

Բժիշկի յարմար է, անցուցի մտքէս, երբ օր մը խանութին առջեւը կայնած տեսայ իր լման դէմքը. խոշոր աչքեր ունէր, քաղաւածքին մէջ որոշ ազնուութիւն մը կար:

Այո՛, շատ յարմար է բժիշկի. բայց ինչո՞ւ միշտ նոյն ուղղութեամբ կ'երթայ, արդեօք ուրիշ փողոցէ՞ մը կը վերադառնայ: Գանի մը ժամ յետոյ երբ դարձեալ կայնած էի խանութին դրան առջեւ՝ վերադառնալը տեսայ: Աստուած իմ, ի՞նչ հասակ էր, ի՞նչ գեղեցկութիւն:

Դիտեցի դինք աղուոր մը:

Տօքթօրի յարմար է:

Դարձեալ առաջին անկիւնէն դարձաւ. անմիջապէս խանութին մէջս կողմ մը անցայ, ինքնաշարժներու ետեւէն հասակը լաւ չէր տեսներ. մայթին եզերքը անցայ, յետոյ ճամբուն մէջտեղը. դիմացի խանութպանը թերթ կը կարդար, բռնեցի թերթին ծայրէն.

— Ի՞նչ նորութիւն կայ:

Աչքս աղջկան ողորթեան էր. հեռուէն լաւ չէր տեսներ. աներեւութապէս բաղմութեան մէջ:

Նորէն թող անցնի, փափաքեցայ մտքովս:

Այդ օր երկու անգամ անցած էր խանութին առջեւէն. առաւու ժամը իննին զացած էր ու հիմա առանձերկուքն էր. ուրեմն կը վերադառնար:

Անպայման այցելու ուսուցչուհի մըն է, կը խորհէի: Ծարաթը քանի մը անգամներ կ'անցնէր, ամէն անգամին ալ ժամերուն նայէի: Ծինած էի ես ալ իր դասաւարտակը, օրուան ժամերը, Ձորեք շաբթի ժամը իննին եւ տառերերկուքին ու կը սպասէի անցնելուն, պաղ ըլլար օ-

դը թէ տաք. կը սպասէի ժամերով, բայց այդ ժամերուն չէր անցներ. շինած դաստցուցականներս ջուրը կ'իյնային. յոգնած, ձանձրացած՝ կ'անցնէի ներս ու հագիւ նստած, կ'անցնէ՞ր. նորէն ժամացոյցին կը նայէի. օ՛, ի՞նչ աղջիկ էր. հանկու՛ռի:

Մարգարիտին նմանցուցի:

Իայց ինչո՞ւ այս օրերուն կը յիշեմ Մարգարիտը, ծաղիկ դասարանի առաջին սէրս. կը յիշեմ Մարգարիտը, մանաւանդ կարծիք այտերը, մազերուն սանտրուածքը որքա՛ն նման էր այս աղջկան մազերուն դանտրուածքին. կը մտածեմ, ո՞ւր է հիմա Մարգարիտը, արդէն միայն այդ տարին տեսած էի զինք ու անկէ յետոյ բնաւ չէի հանդիպած իրեն. ի՞նչ եղաւ, մեռա՞ւ, կ'ապրի՞. չաւերը մանկութեանս շրջանէն տեսած եմ, Մարգարիտը չեմ տեսած:

Մարգարիտին չի՞ նմանի. կը մտաբերեմ Մարգարիտին դիմագիծը, այո՛, չափ կը նմանի. մանաւանդ մազերուն սանտրուածքը կարծես անփոփոխ մնացած ըլլար, անոր պէս գեղեցիկ էր ու աղուոր. հապա խոշոր աչքերը որքա՛ն նման էին:

Իմ Մարգարիտս չըլլա՞յ. Այո՛, ճիշդ Մարգարիտն է, իմ Մարգարիտս:

Ամէն անցնելուն կը կրկնէի Մարգարիտս կ'անցնի:

Յ

Ամառ էր, դպրոցները փակուած էին աղջիկը չէր անցներ փողոցէն:

Ռ՛վ Տէր, ի՞նչ կ'ըլլայ, թող անցնի աղջիկը:

Կոթնած էի գրասեղանին, դուրսը կը դիտէի, երբ յանկարծ տեսայ աղջիկը. կ'անցնէ՞ր, արիւնը խուժեց աչքերուս. կարծես սիրտս պիտի պայթէր. դամուած մնացած էի տեղս. սրտիս հանգստանալուն քակուիլը զգացի. թեթեւացած էի, Աստուած պատասխանած էր ինծի:

Սկսաւ աղջիկը իր երթելու խառնութիւն առջեւէն. կը հրճուէր սիրտս, երբ գաղտնազգի զիս դիտելը տեսնէի:

զի՛ս կը դիտէ, նոյնիսկ մօտէս կ'անցնի: Ուրախութիւնս մեծ էր:

Կամաց կամաց բժիշկի «յարմար է»ն, կը վերցնէի:

Ինծի յարմար չի՞ կրնար ըլլալ. չէ՞ որ ես ալ սպազայ դրագէտ եմ, անպատճառ բժի՛շկ պիտի ըլլայ:

Թող ինծի՛ յարմար ըլլայ:

Նկատեցի որ դիմացի ծերունկ խառնութեանս ալ կը դիտէ զինք:

— Ինչո՞ւ կը դիտես, հարցուցի օր մը երբ անյազարար կը նայէր աղջկան:

— Տղուս համար կը դիտեմ, ըսաւ լրջանալով:

«Մատկի՛ս», անցուցի մտքէս. ինչո՞ւ տակաւին չեն մեռնիր այս ծերերը. թո՛ղ մեռնին, իրենց ժամանակը գեռ չէ՞ վերջացած. թող տղա՛քը իրենց համար աղջիկ գտնեն. ի՞նչ ծերեր կ'ըլլան աշխարհի մէջ: Թող ուրիշ աղջիկներու նախ:

Ներս անցայ, նստայ աթոռին օրտնեղած:

Մարգարիտս կը դիտէ...

Առաջին անգամ ըլլալով աղջկան անցնելը չէի ուզեր, կ'ուզէի որ միայն ինծի՛ երեւնալով անցնի:

Օրէ՛ օր աւելի կը սիրեմ զինք. սիրտս դէպի իրեն կը հակի: Անհամբերութեամբ կը սպասեմ իր անցնելուն. անդադար ժամացոյցին կը նայիմ. կը ջղայնանամ երբ այդ ժամերուն զիս խանգարող ըլլայ. տարուած եմ իրմով միշտ. աչքս ճամբան է, իր երկվայրկեան մը անցնելը դիտելու համար. ժամերով դուրսը կայնած իրեն կը սպասեմ:

Առտու մը գէ՛մքը տարբեր արտայայտութիւն մը ունէր. կարծես բռնի կ'ուզէր — համը փախաւ. ճարճատիւն մը կը զգամ հոգիիս մէջ. կէսօրին վերադարձին կը սպասեմ, չ'անցնի. ժամացոյցին կը նայիմ, այս ժամուն ո՛չ թէ տուն կ'երթայ, այլ տունէն դպրոց. քառորդ ժամ յետոյ ուրիշ փողոցէ մը անցնելը կը տեսնեմ. ճարճատիւնը փուլզուժի կը վերածուի հոգիիս մէջ: Օրերով չեմ տեսներ զինք. այլեւս դրասենեակէն դուրս չեմ ելլեր. յուսահատ եմ. հոգիս տխուր

է. քանի մը օրեր յետոյ կը տեսնեմ իր անցնելը. կ'անցնի այնպիսի նայուածքով մը որ կարծես զիս կը փնտռէ: Սիրտս կը թփրտայ, այո, որոշապէս զիս կը փնտռէ՝ աչքին ծայրովը: Սիրտ առած դարձեալ կը սկսիմ դիտել զինք. կը զգուշանամ որ դարձեալ չիտայնի:

Բայց ինչո՞ւ այլեւս չ'անցնիր թագէն, դարձեալ զինք խրտչեցուցի. չեմ կարծեր, շատ զգոյշ էի, չէի ուզեր ոչ մէկ կերպով զինք խրտչեցնել:

Կ'երթեւեկեմ խանութին մէջ, կը յանդիմանեմ ինքզինքս, յանցաւոր բլաւտ կը զգամ ու կ'ըսեմ ինքնիրենս, — չեմ դիտեր ալ, միայն թէ թող անցնի. արդէն իր անցնելը սիրտս կ'արհեստէր. չանցնելը բոլորովին կը խնթացնէ զիս:

Գէշ բաներ կը նախզգամ:

Գոնէ դիտնայի տնունը, Մարգարիտ՝ ալս էր թէ ոչ: Ամիսներ կ'անցնէին ու զինք չէի տեսներ. սիրտս սիրովը այրեւէն յետոյ հեռացած էր. փլատակի վերածուած էր հողիս:

Այլեւս իմատ չունէր ժամերով զինք սպասելու. յուսահատ քաշուած էի պատեանս:

Անցած էր տարի մը. ձմեռ օր մը, զբաւեանակին մէջ աթոռին վրայ նստած, դուրսը կը դիտէի:

Յանկարծ յայտնուեցաւ աղջիկը դիմացի անկիւնէն. շտկուեցայ անմիջապէս. իմ աղջիկս չէ՞. սրտէս զող մը անցաւ, ամբողջ արիւնս արագօրէն շրջան ընել սկսաւ մարմնիս մէջ: Իմ կողմս կու գար, պահ մը տնտնաց, երաւ մայթին վրայ, դուռը փորձեց բանալ, ցատկեցի տեղէս. բացի դուռը. տաքութիւն կը զգայի, աջ աջասկս կարմրիլ:

— Կրնամ հեռաձայնել:

Անմիջապէս մօտեցուցի հեռաձայնը իրեն. բան չկրցայ ըսել, նստայ տեղս. սիրտս կը թփրտար, մօտս էր. թիւ կը բանար:

— Այո՞, ես տիկին Մարգարիտն եմ:

Ի՞նչ. սարսափեցա՛յ ուղղակի. մատներուն նայեցայ, մէկուն վրայ մատանի մը կար. կը դողար սիրտս, գլուխս ինկած էր կուրծքիս վրայ: Ամուսնացած էր:

Արդէն չէ՞ որ պիտի չկրնայի հասնիլ իրեն: Յետոյ տարօրինակ անտարբերութեամբ մը սկսայ դիտել զինք: Արդեօք իմ Մարգարիտս է. նոյն վարդազոյն այտերն էին, խոշոր աչքերը, բարձր հասակը:

— Դուք բնաւ մեր դպրոցը եկած էք, հարցուցի երբ գոցեց հեռաձայնը:

— Ո՞րն է ձեր դպրոցը, հարցուց:

Բացատրեցի:

Կեցաւ պահ մը, մատներով ճակատը շփեց, կրկնեց հարցումը, — ա՛յդ դպրոցը ըտէք, յետոյ դարձեալ շփեց ճակատը:

— Այո՛, ըսաւ յանկարծ. կարծեմ առաջին դասարանը հոն անցուցի, երկրորդ տարին ալ պիտի գայի, բայց Հալէպ փոխադրուեցանք, իսկ հիմա դարձեալ հոս ենք:

Գտած էի Մարգարիտս, բայց գէշ պայմաններու մէջ:

Երբ մեկնելու կը պատրաստուէր. հարցուցի:

Որո՞ւ հետ ամուսնացաք:

— Կօշկակարի մը հետ, պատասխանեց:


Կեցայ դարձեալ: Սիրտս հարց մը կը կրծէր: Հարցուցի.

— Ինչո՞ւ խրտչեցաք ինձմէ:

— Անգղէ չխրտչեցայ, պատասխանեց կարմրելով ու աւելցուց. նոյնիսկ ձեզ կը սիրէի, բայց...

Կարծես սեղանիս վրայէն վերջին ծաղկամանն ալ ինկաւ փերուեցաւ. «ա՛հ» մը իսկ չելաւ հոգիէս ու կարողութիւն չմնաց նոյնիսկ ճիզով մը բեկորները հաւաքելու. կարծես կեանք չէր մնացած մէջս:

Ն. Վ.



ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Մօտ կէտ դարէ ի վեր մեր պատմութիւնը կանգ առած է, պէնդինը հասած, ու մենք շուրջը նստած կը վիճաբանինք թէ մեր մէջէն ո՞վ է լաւագոյն Հայը: Բայց պատմութիւնը մշակոյթ է, այսինքն իմացականութեան ուժին շողաբանականը, հայելին՝ ուր երբ նայինք, անձ թէ ազդ, քաղաքական դէպքեր թէ լաքարախտաւոր վեհապետներու ժողով՝ կը թուինք պահ մը նշանակութեան պէս բան մը ստանալ: Բայց ամէն ինչ իր հաշուոյն է որ կայ, ու քաղաքէի տնօրէնը հանրութեան իսկ պէտք չունի քանի որ ամէն արթնթիւն ինքնիշխան համար ստիպուած է պարել: Ասով հանդերձ, եթէ պարզ գոյութիւնը նշանակութիւն ունենար, այսօր կենդանիներու պատմութիւն մը գրուած կ'ըլլար: Այսինքն, Պատմութիւնը մարդկային որակի գործ է, կը նշանակէ բարոյական յղացքներու շուրջ կը հիւսուի ու որքան ալ իմաստէ զուրկ ըլլայ ներկայացուած միւլթիմէ, տեղ մը ճաթած հայելի մը կայ ու այդ կը բաւէ մեզի համար: Ու վերջին հաշուով, ճշմարտութեան ու գեղեցկութեան փնտրութունքն ալ, իր կարգին, կը բացատրուի բարոյական տարրերով: Սփիւռքի տաղնապը, Պատմութեան Մարաթօնէն դուրս

ինկած ըլլալու տաղնապն է: Յոգնութիւն, յուսալքում, ծուլութիւն, անկարողութիւն — որո՞ւ հոգը: Մեր տաղնապը՝ բարոյական տաղնապ է, որու պատճառը կրնայ Հայրենի հողէն հեռու շարտուիլը ըլլալ, բայց որու լուծումը անկասկած կապ չունի Հայրենի հողին հետ: Մենք ենք մեր անիմաստ ճակատագրին տէրը: Ու հիմնականը, ոչ թէ վիպային ու աճիւնախոտն հողն է կամ քիթ քիթի ապրիլը աւանդական սահմաններու մէջ, մեզի համար որ ներս ու դուրս յորդելու մղուած՝ չենք գուշակուիր մեր անձին իսկ, մեզի համար՝ որ հողին ինչ ըլլալը դերեզմանատան մէջ միայն պիտի հասկնանք, այլ՝ մշակոյթի մը պատկանիլը: Ո՞ւր է, ո՞րն է Սփիւռքի մշակոյթը: Ու եթէ անցեալ մը չունենայինք, հաւանաբար շատ աւելի գիւրին կարենայինք մեր հարազատ մշակոյթը ստեղծել: Պոլիս, Հայաստան, Ղարաքիլիսէ, Սայաթ-Նովա ու Հայոց հոյակապ պատմութիւն՝ ողբերգութեան մը հերոսներն են կարծէք որոնք անգոյ դերակատարներու կը սպասեն որ կեանքի դան, մինչ մենք արդի Հայեր, բեմը գլորաւած մէլօտրամի վերածած ենք զայն ու տէքօր, տող ու ծպտում այնքան լուր-

Ղի առած որ ալ չենք իսկ անդրադառնար որ դերակրտարներ ենք: Հոս է բուն ողբերգութիւնը, այն կեղծիքը որուն մէջ քունը գլուխնիս եկած ու բանտարկած ենք մենք մեզի: Պիտի դա՛յ օրը երբ նոր բեմ մը խուփենք, Բիրանտէլլոյի հերոսներուն նման, ու պոռանք որ մե՛նք ենք, խարիւղ, անտէր բայց վաւերական մարդերը, միա՛կ մարդերը ու այս է մեր կեանքը, այս է մեր ծուռ ու մուռ բայց իրական մշակոյթը՝ ալ ի՞նչ պէտք կայ յուշարարի ու դեր խաղալու: Մինչեւ դայ այդ օրը պիտի շարունակուի եղեւնը որ ոչ թէ մեր մարմինը ու միտքը փչրեց այլ աւելի կենսական բան մը՝ մեր ժողովուրդի պատմական զգայարանը: Ատոր համար է որ Թրքահայ մշակոյթը կամաց կամաց կը մեռնի ու չի գար նոր որ տեղը առնէ: Ժամանակի ու իրականութեան մեր զգայարանները խանդարեալ (հոգեբանութիւնը այդ հիւանդութեան մասնաւոր անունը մը կու տայ՝ սֆիզոփրէնի) մոլուցք ու երազ լեցուցած մեր ջիւղերուն, Արշակ Թաղաւորին պէս կոյր ու քնազային՝ բան մըն է կ'երթայ...

Այս է պատճառը որ մենք փորձեցինք աւելի շնչել Պրոսահայ դրական կեանքի բարոյական՝ քան թէ զուտ իմացական քանի մը արժէքները: Անկասկած մեծ է երկուքին միջեւ տարբերութիւնը ու դժուար չէ հասկնալ ինչու մէկը տուած է միւսին: Կարելի է մտածել, օրինակ, թէ կրօնական, առնուազն եկեղեցական ապրումին ուժը արդեւ եղած է զուտ իմաստասիրական փնտռութեան: Ենթակայական նոյն խառնուածքը, զօրացած բարոյապաշտ ու օգտապաշտ քնազգային թելադրանքներով՝ ամլացուց Պոլսոյ մտաւորականութեան ընտանեակական, պատմաբանական, բանասիրական ու այլ նման կարողութիւնները: Վենետիկի ու Վիեննայի հզօր ճիւղը այս մարզին մէջ օտար ազդեցութիւններու ու աւանդութիւններու ներգործութեան վերադրելու է: Թող չըսեն թէ բռնապետական վարչակարգը ու կեանքի պայմանները պատասխանատու են: Նը-

կատի ունենալով հանդերձ թուի ու խառնուածքի տարբերութիւնները, կրնանք ըսել թէ նոյնքան աննպաստ պայմանները խորհրդային վարչակարգին՝ արդեւ չեն դան որ Հայաստան լեզուաբանական ու մասնաժառանգական կալուածին մէջ ընդարձակէ մշակոյթի սահմանները: Եւստոյ, երբ 1875-ի շուրջերը, Թրքահայ Զարթօնքի առաջին քառն (օր մը ստուգելու է այս ածականին ճշգրտութիւնը) հիզը իր թափը կը կորսնցընէր՝ ան արդէն յաջողած էր, ինքն ալ շատ լաւ չէր գիտեր ինչպէս, իր քանի մը մեծ տաղանդները եթէ ոչ լուծել գէթ պարտկել՝ բողոքական ու կաթոլիկ միջոնարներու ժողովի բայց խորամանկ թափանցումներու վտանգը, զբաւան լեզուի մը խարխափուն փնտռութեան, Սահմանադրութեան յղացման ու կիրարկման շուրջ երկարամղոյ պայքարները, էսնաֆ-Ամիրա մահաջու կոխը, կրթական հարցը, գէշ աղէկ մտաւորական անձնակազմի մը ստեղծումը եւայլն: Այդ թուականէն մինչեւ Եղեւն, 49 խիտ ու հոսմ տարիներ կան՝ ուր մեր միտքը պէտք էր կարողանար, հակառակ հոգեկան ու ֆիզիքական նոր տաղանդներու, շատ աւելի կատարեալ նուաճումներ ընել քան այն զոր հաղիւ հազ յաջողեցան մեծ ու պզտիկ հրգեհներէն փրկել Սըրմըրեան, Օրմանեան, Ասատուր ու մասամբ Ալլոյաճեան: Մեր կարծիքով, այդ վաստակը նուազագոյնն էր զոր կրնային իրագործել զրական երեք սերունդ:

Կրնայ առարկուել թէ ասիկա ազգային նկարագրի հարց է, թէ մենք Հայերս բարոյական յաղթանակներու, ներքին խանձումներու, երկվայրկեաններու ժողովուրդ ենք: Ճիշդ է այս բայց չի սպառեր հարցը: Երբ երեւակայենք թէ ինչպէս, 50 կամ 100 տարի առաջ, վկայեալ բժիշկ, տնտեսագէտ, իրաւաբան կամ ակրօնի իրենց գործ բանը ձգած թերթ կը հանէին, Սահմանադրութիւն կը քաշկըտէին խոնաւ ժողովաւորաններու մէջ, օտար դրականութիւն կը թարգմանէին, միութիւն կը հիմնէին ու վարժապետի ճակատագրին մէջ կը սեղմուէին, երբ

այս ամբողջը կը մտաբերենք ու, եթէ երեւակայութիւն ունինք, անհամեմատօրէն աւելին ալ, իբր լաւ Հայեր կը յուզուինք ու յանձնենք տարածած զգացումով մըն ալ կը զմայլենք, մինչ պաշարօրիայի ներկայացող դիւանար աշակերտը, զոց սորված հպարտութեամբ կը բանաձեւէ — Հայ ժողովուրդի կարիքներուն պահանջանք: Սակայն այս հոյակապ մարդիկը չկրցան զանազանել զուտ գրական ճաշակը՝ հանրային մեծաքանակ անհամբեր ակնարկներէն: Ու նոյն ամսօրէն օրիվը, աղմկոտ հրմշտուքը յաճախ մտաւ գրականութեան սպասին մէջ ալ: Այս ճիւղովը սակայն, այլեւս ոչ թէ ազգային նկարագրի կը վերադարձի այլ անհատական դատողութեան մը պատասխանատուութիւնն է: Գրապէս մը, բանաստեղծ մը երբ կը յորդի հրապարագրութեան, բանասիրութեան ու նման տափաստաններու մէջ՝ մեր գրականութիւնը կրնայ շահիլ, եթէ նոյնիսկ ինքը, որուն հետադէտը շատ յաճախ կը կորսնցնէ: Բայց զժողովուրդէն զոտնել պարագայ մը հանրային սպասին կամ բանահաւաքութեան լծուած մարդոցմէ՝ որոնց զուտ գրական գործերը ակոսողներով չլեցընեն մեզ: Իւթիւճեանէն Քէչեան ու Մամուրեան, Զիֆթէ-Սարաֆ, Թէոդիկ, Արտ. Յարութիւնեան, Զերազ, Անտոնեան, Սիրունի, Մ. Յովհաննէսեան, Հր. Ասատուր եւ այլն ամբողջ դասակարգ մը ունինք ժողովուրդու որոնց գրականութեան մասին դատումները կամ գրական երկերը, զոր վերջ յիշուած շփոթութեան՝ ոչինչ կ'աւելցնեն մեր փոշոտ ու լքուած մատենադարաններու պարունակութեան արժէքին վրայ: Որքան ատեն որ քրքնադատութիւն, գրախօսական ու քաջըլուծ պիտի շփոթենք իրար հետ, բանասիրութեան ու ցուցակաւորութեան միջեւ տարբերութիւն չպիտի գնենք (Օչականի «Համապատկեր»ը դուրս կ'իյնայ ընթացիկ կարուսանէն, ընթերցելու պոռնիկան ու զարմուտի ֆորմիւլին զոր կը գործածէ) այնքան ատեն մեր գրականութիւնը բոլորէ՝ բռնուած պատանի մը նման, անթաղապարտ յեցած պիտի քաշուտուի

օթսթրատի եղերքէն: Մեծ տաղանդները չեն փրկեր գրականութիւն մը ու յաճախ աւելի եւս կը ճղմանան միջակները, անոնց մէջ դատողութիւն ու ժխտականութիւն կը ստեղծեն: Բայց սպասենք ու յուսանք, քանի որ այսքան դարեք ուրիշ բան չենք ըրած, սպասենք մեծերուն ժամանումին — ոչ ժխտյալ տաղանդի մեծութեան այլ մանաւանդ մեծ միջակութիւններուն որպէսզի գրութիւն վերջին հարիւրամեակի մեր ընկերային ու գրական պատմութիւնը, հիմը նետուի առողջ քրքնապատմութեան ու պարկէշտ, յստակատես բանասիրութեան:

Թրքահայ մտաւորականութեան այս կէս-ժխտական, կէս-գրական հոգեբանութիւնը տաղտկալի չվերջացող վիճաբանութեան մը պէս դեռ մեզ կ'ընկերանայ մինչ մարդկութիւնը Ձև-բզ դար մը տած է արդէն: Այս երևույթը կրնանք կոչել ազգային խառնուածքի յարատեւութիւն, ճակատագիր, Հայկական Դասկած ինչ որ կ'ուզենք բայց պարտաւոր ենք մենք մեզի հաշիւ տալ թէ ինչու եւ ինչպէ՞ս հոս հասանք, թէ Սփիւռքը ինչու՞ կը տարբերի Պոլսէն:

Սփիւռքը երբ տարբեր հոգեբանութիւններու բաղադրութիւնն է: Մեզի կը թուի թէ սխալ է զայն միայն ժամանակաշրջաններու դարականութեան մէջը լեցընել ու կոչել — «Հայրենիք» Ամսագրի տասնամեակ, Փարիզի տասնամեակ ու Յետպատերազմեան շրջան: Այս բաժանումները պատահամբ չիտակ ըլլալով հանդերձ, չիլ դադարար մը կու տան ամբողջութեան մը մասին ուր հոգեվիճակներ ու մարմիններ կ'երկարաձգուին շրջանէ շրջան եւ ուր Պոլսահայ մտաւորականութեան վերապրողներու բարձր ու մշտնջամբողջ սերունդներու դրական խաբիուլ ճաշակը ու դատումը կը կազմաւորեն: Այսպէս էր որ զանազութիւն զգայական քանի մը հիմնական վիճակներ պաշտօնացան հոս ուր Հայ մը իր պատուհանը բացաւ աշխարհի անտարբերութեան, վիճակներ ու ապրումի թեմաներ՝ որոնք սակայն չհասան բիւրեղացումի ու կարողացան ՅԱ-ական թը-

ւականներու փարիզեան սրճարաններու ծովախնայ մէջ: Այսօր, մինչեւ 930, Սփիւռքի մէջէն ձեւաւորուած բանաստեղծական ապրումէն՝ սիրտ առնող ու լեզի համ մը կը յամենայ դեռ, պատանեկան յոյզերու դիակներ՝ զորս արդէն սկսած էին մարտիկ տուռ տեղ եղած ու երջանկանալու վրայ՝ յանկա՛րծ անհետացած բանաստեղծներ:

Սովորութիւն եղած է կրկնել թէ «Հայրենիք» Ամսագիրն էր որ հրապարակ նետեց Սփիւռքի առաջին սերունդը: Երանի թէ հրապարակ նետելէ առաջ, ան այդ մարդոց հասկցնէր թէ զբաղանուծիւնը հիւանդանոց չէ որ դան ու բուժուին իրենց բարդոյթներէն: Ինչ որ տըւին այդ մարդիկը այսօր զլիաւորբարբ ախտաւանջումի արժէք ունի՝ դրականութեան պատմաբանին համար: Կ'արժէ ու կը վարձատրէ, այդ ճամբորդութիւնը — մօր մը ճամբորդութեան լուսանկարէն, ջոյրիկի վերածուած օտարուհիի գգուանքէն, երազի մէջ Հայող պատերէն ու ծառերէն, միասնութեան մերկութենէն՝ մինչեւ հասնիլ Հայ մարդու տառապանքին: Գոյութեան հրապարակին կեղծումը, ուր անոնք անկեղծ էին: Այս անկեղծութիւնն է որ կը փրկէ դանոնք, պատմաբանին համար միայն, մինչ կը թաղէ զիրենք իրենց անտաղանդ քնարերգութեան տողերուն տակ:

Ողբերգութիւնը ծայր կու տայ դեռ 1919-էն — սիրտը փակ, դառնացած, անառն որբեր որոնք աւելի սիրտիլ կ'ուզեն քան թէ սիրել, որոնք մահ կ'երազեն իրենց կեանքին խառնութիւն մը, իմաստ մը տալու համար: Իրար այնքան կը նըմանին այդ սողոց ոտանաւորները որ հաւանաբար միակ սերունդը եղան որ այդ անունին արժանի ըլլայ: «Այնքան միմեկ ու որբ եմ ես, ով Աստուած» (Կ. Սիւտալ) (1), «Աղօթքիդ մէջ ու նիրհիդ Աստուծոյ հետ կը խօսակցիս, ու իմ մասիս կը խոկաս» (Ֆէնիքս, Թէհրան) (2),

«Կ'ուզեմ մեռնիլ...» կը բացականչէ Սարաֆեան (3), «Իմ սիրտս տխուր, տըխուր է յաւէտ» (Ա. Աճէմեան) (4), «Երբ ման այնքան կ'աղուորնաս, այնքան բարի կը թուիս, մօր մը հանդոյն ու սըրփոտ սիրուհիի մը նման» (Ա. Երկաթ) «Դու արեւն ես իմ երկնքին... Բայց կը վախնամ, մայրիկ, որ օր մը հորիզոնը քեզ ալ կ'առնէ ինձմէ» (Անժէլ Բէհայեան) եւ այլն վկայութիւններ են 20-ական թուականներու սկիզբները տիրող մտայնութիւնէն: Պուշկարիայէն՝ Արուս Սիւնի՝ մօր յանձնարարութեամբ կ'ապրէ, Վիեննայէն, Եր. Քէչեան իր Թափառական, օտարացած ու խեղճ հոգին կ'ողբայ, Ռոստիկ, Հալէպէն, իր տրամուծեան մէջ կը խրի մինչ Փարիզէն Վ. Շուշանեան ու Ռաֆ. Ջարդարեան սկսած են իրենց սիրտը չարչարել ու իրենք իրենց վրայ գլխաւ: Պերլինէն Ա. Տիգրանեան իր օտարութեամբ թունաւոր է արդէն: Կարօտ ու մայրիկ կը չարչարեն կրկին 1924-ին — Ա. Մելիքեան, Ռ. Ջարդարեան, Լ. Սիւրմէլեան, Յ. Մեղրուանի՝ Լիբանանէն, Սեպուհ՝ Գահիրէն, Լ. Նայիրցի՝ Ֆինլանտայէն, Նուարդ Կէօրիզեան՝ Պոսթրէն: Թախիծ, հայրենի տուն ու կարօտ կը նետուին թուղթի լըռութեան բայց արձագանգներ կը հասնին պողոտաներու երկայնքին խարխափող ձեւերուն: 1925-ին նոյն յուսահատ կանչերը — Լաս՝ Փարիզէն, մայրիկն է որ կ'երազէ, Սարաֆեանը՝ հացի տեղ իր հոգին կը կրծէ, կը ծածկ (5), նոյն ապրումը Եր. Գալաթեանէն... տարիները կ'անցնին բայց թեման հազիւ կը փոխուի: Անտոն Կազէլ մահը իր բարեկամը ընտրած է (6), ինչպէս Արմէն Սեւան, Ա. Գառօնէ, Արմէն Անուշ, Ա. Աճէմեան, Նուարդ Տէր Միքայէլեան, Լ. Էսաճանեան եւ այլն: Նորերը մէջտեղ կու գան նոյն լարը զարնելու — Վ. Սօֆեան՝

(3) Եփիմիլեան Տաքեցոյց, 1922:

(4) Հ. Ա., 1923:

(5) «Անյարգիտի մը Գրաւումը», 1925:

(6) Հ. Ա., 1927:

(1) «Փիւնիկ», 1919:

(2) «Հայրենիք» Ամսագիր, 1922:

«Կրօնքիս խորը սիրտս անդամ կը մսի» (7), Վահան Ասլանեան իր արիւնշուայ սրտով, Յովհ. Մահտեսեան իր սրտի լընած հեւքերով, Մ. Մանուկեան, Ա. Մանուկեան, Ս. Զաւէն, Օ. Զարմունի, Ս. Թափառական, Ա. Սրապեան, եւ այլն:

Այս է սերունդին քերթողական տիրական զգայարանքը, մինչեւ 1930, խրոտովիչ ըլլալու աստիճան անճանաչելի ենթաշխարհներու այս ցուցադրութիւնը: Մեծ մտտով անոնք կը մնան պատմութեան յիշողութեան վարագոյրին ետին՝ ապրումի ֆիզիք ճնշումին տակ արուեստը ուղանաւ ըլլալուն համար: Հում նիւթ՝ մեր ժողովուրդի հոգեվերլուծումին ու ընկերային պատմութեան համար: Բայց կայ պարկեշտութիւն այս հողեքանական արտայայտութեանց ետին, ոչ թէ սառած պարկեշտութիւնը բանասէրին՝ այլ երգի մէջ աշխարհ ապրումը սրտի միջակ գոհերուն: Զուգադիպութիւն չէ անշուշտ որ 1920-ին Հրատարակուած հատորներէն Յ հատոր (հռովի) ու Յարութեան նրգեր, Մ. Ոս-

կեան, Մարմնեղութիւն, Մեր. Պարսամեան, Ամապատի նրգեր, Ս. Մեարոպ, Հրեղէն նրգեր, Լ. Կորկոտեան, Գոստաներգեր, Կ. Սիտալ ու Փոքորիկի նրգեր, Յովհ. Պողոսեան) երգի կազապարով կը դառնն արեւուն ճամբան:

Սերունդի դրական ճիւղ երկու այլ երիտէրով կը գրաւէ մեր ուշադրութիւնը: Նախ՝ արձակը որու առաջին յաջող ներկայացուցիչը Ե. Նարգունին է, 1924-ի «Նաւասարդ»ներուն մէջ: Նոյն հանդէսին մէջ քանի մը տարի վերջ Եռչանեան արդէն իր քննադատական փորձերուն կը ձեռնարկէր: Սակայն արձակը երկրորդական մակարդակի մնաց մինչեւ 30-ական թուականները ոչ թէ նորերուն անկորոշութեան կամ հիններու հսկայ ճնշումին պատճառով՝ այլ այդ նոյն հինիւրուն ստեղծած գրական ու տեսութեան սուր պայքարներուն, բանավէճերուն հետեւանքով: Հոն էր որ, Տէր Զորի անապատներուն նման, շշուեցան նորերուն ժամանակն ու ճիւղը: Բայց ատիկա լատ աւելի բարդ հարց է:

Վ. ՕՇԱԿԱՆ

(7) Հ. Ա., 1928:





ԹԱՏՐՈՆԻ ԱՆԲՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրական արուեստի զանազան ճիւղերուն մէջ, թատերական գրականութիւնը այն բաժինն է, ուր փոքր է թիւը անմահացած հեղինակներու, որովհետեւ բազմաթիւ, շատ աւելի մեծ թիւով խոչընդոտներ, խուժեր կան հոն քան գրական այլ սեռերու մէջ:

Դժուար է թատրոնով, թատերազրութեամբ ինքզինքը արտայայտել, ներքին ճշմարտութիւնները յայտնաբերել: Դժուար է մանաւանդ զանոնք բռնական, տպաւորիչ, անհրաժեշտ ծաւալով ու խորքով արտայայտել, գոհացընելով հանդերձ բեմական պահանջները:

Անկասաբար ամէն ստեղծագործութեան հետ կապուած գծաւարութիւններէն, թատրոնը կը բերէ հեղինակին, ամբողջական միջոցներով, ամբողջական երեւոյթներու համադրութեամբ մը բնականօրէն արտայայտելու, բնականի տպաւորութիւնը առաջնորդելու յաւելեալ գծաւարութիւնը:

Ամէն արուեստի գործ կը պարունակէ, տնտեսափելիօրէն, երեւակայութիւնը, երեւակայական թանձրացումը, մարմնաւորումը: Թատերական գրականութեան մէջ օակայն, տնտեսականը կ'անցնի երեւակայականին սահմանները, հասնելու համար անկարելիին մինչեւ անգամ: Շատ յաճախ, առօրեայ կեանքին մէջ ոչ միայն տնտեսականի, այլ անկարելի համադրութիւններով է որ թատերագիրը կը կառուցէ իր արուեստի գործը, պահելով ամբողջութեան համար ըմբռնելի, ընդունելի, որպէս ապրում ընկալելի որոշ բնականութիւն:

Անբնական միջոցներով բնականի ապրումը, բնականի զգայնութիւնը փոխանցել բեմին որոշ. ահա դժուարին աշխատանք մը, որուն ամէն մէկ խոչընդոտը պէտք է յաղթահարել, կարենալ ապ-

րեցնելու համար սեփական ճշմարտութիւնները, որոնք եթէ տիեզերական են՝ պիտի ապրին դարէ դար, ինչպէս Շէքսպիրի ճշմարտութիւնները:

ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ առաջին խոչընդոտն է հեղինակին համար, եւ հիմնականը անբնականութեանց: Թատերակ մը պիտի ներկայացուի հասարակութեան երկու, կամ երեք ժամուոյ մէջ. որով, երկու կամ երեք ժամերու մէջ պիտի խտացուի գործողութեանց շարան մը, որ իրական կեանքին մէջ հաւանաբար օրեր, շաբաթներ, երբեմն միջնաւ անգամ տարիներ կ'առնէ կազմաւորուելու, լրումի հասնելու, իրականանալու համար: Մինչեւ անգամ եթէ յարկուին «Երեք միութեանց» դասական կանոնները, եւ թատերակի ներկայացուցած գործողութիւնները նուազագոյն ժամանակամիջոցին մէջ տեղի ունեցած ըլլան, զարճեալ շատ աւելի երկար ժամանակամիջոցի մէջ է որ տեղի կ'ունենան անոնք կեանքի մէջ, քան բեմին վրայ:

Ժամանակի երկար տեւողութեան մը մէջ միայն իրականացած, կամ իրականացի պէպքերն ու գործողութիւնները, անբնական սեղմումով մը պիտի գան իրար յաջորդելու քանի մը արարուածներու ընթացքին, որոնք կրնան տեւել քանի մը ժամ միայն: Եւ այնպէս մը պէտք է կառուցուած ըլլալ թատերակը, որ այդ ծայրայեղ խտացումը ժամանակին, բնական թուի մեզի:

Անշուշտ, կեանքի մէջ ալ, զանազան գործողութիւնները որոնք կապուած են միեւնոյն զգայնութեան հետ, միեւնոյն ապրումներուն հետ, եւ տեղի կ'ունենան տարբեր տարբեր ժամանակներու, իրարմէ շատ հեռու, շուրջն ճշմ. եւ հաւասար

ուսմանը և անհրաժեշտ է անոնցմէ մէկ կողմ թողուլ անոնք որոնք նուազ ուժեղ են, նուազ արտայայտիչ ապրումին, կամ մտածումին: Կարելի է, եւ ամենաթոշու է ընտրութիւն մը կատարել, զտնել ամէնէն յատկանշալիները գործողութիւններէն, եւ անոր միջոցով ցցուն զարմնել արտայայտել ուղղութեամբ: Ատիկա թեքիք է, որուն միջոցով հեղինակը կը յաջողի երկար տարիներու վրայ զարգացած զգայնութիւնները խտացնել երկու երեք ժամերու մէջ: Սակայն իրողութիւնը կը մնայ այն, որ անիրական է ժամանակի այդ խտացումը, եւ մեծ ճարտարութիւն կ'ուզէ կարենալ զգալ շտապէր համար անբնականութիւնը ատոր, ընդունելի դարձնելու համար հանդիսականներուն՝ զեղչը կենսիկ այն մասերուն, որոնք ուղղակի կ'ապ ժը չունին նիւթին հետ, թէեւ կը պայմանաւորեն անկասկած մարդը: Մեծ ճարտարութիւն կ'ուզէ նաեւ, ուժեղ գործողութեանց յաջողականութիւնը կառուցած ժամանակ, ժամանակի հոսումը եւս զգացնելու համար, ժամանակի տեւողութիւնը ապրող երեւոյթ դարձնելու համար, հակառակ որ ընդամէնը երկու երեք ժամէր է որ պիտի անցնին թատերադրանքի մէջ:

Անցած ժամանակներու այնպիսի անբնական խտացում մը, որ կենսիկ իրական պատրանքը ստեղծէ, ուժգնութեան շեշտաւորումը բերելով արտայայտուող մտածումին ու ապրումին, ահա հիմնական դժուարութիւնը անբնական միջոցներով բնականութիւնը ձեռք բերելու ճիշդին մէջ:

Պտացումին բերած անբնականութեամբ չ'աւարտիր ժամանակի ըմբռնումին հետ կապուած խոչընդոտներու շարանը: Գեռ կան միջնարարները՝ այսինքն հանդիսատեսներու Ֆիզիքական եւ մտային յոգնութիւնը ժամանակի տեւողութեան մէջ: Միջնարարները ատոր համար են. միջնարարները կը բերեն անշուշտ անհրաժեշտ հոնդիստը, թարմացումը, հանդիսատեսի հոգեկան աշխարհէն ներս իրար ետեւէ եւ արագօրէն,

կարճ ժամանակի մը մէջ ներխուժած ըզզայնութիւններուն, ապրումներուն դասաւորումը, տեղաւորումը, ընդունումը (կամ մերժումը) ենթակային կողմէ, ինչ որ կարելի կը դարձնէ նոր զգայնութեանց ներդրումները, նոր ապրումներու ընկալումը:

Միջնարարները սակայն, նոյն ատեն կը կտրեն հմայքը, կը խզեն կապը, կը վերադարձնեն հանդիսատեսը հեղինակի երկակայան աշխարհէն ու կենսիկէն, իրական աշխարհին ու կենսիկին: Որով, յաւելեալ պարտաւորութիւն մը ունի հեղինակը, վերստին արթնցնելու հանդիսատեսի ուշադրութիւնը, զայն վերստին կեդրոնացնելու իր ցանկացած լոյսի ըսկաւառակին վրայ. որով ստիպուած է որոշ դասաւորումներ կատարել իր կառուցին մէջ, որոշ բաշխումներ մտցնելու համար անակնկալներու, յաւելեալ պարկուճներու եւ լարուածութեան թուլացումներու մէջ. կամ տեսարաններու ուժգնութեան, ուժգնութեանց իսկ բաշխումին մէջ: Եւ այս բոլոր արուեստական դասաւորումները եւ ոչ մէկ կապ ունին հեղինակի հիմնական տեսիլքին հետ, ապրումին հետ, մինչեւ անգամ իրական պատմութեան հետ թատերակին:

Անկախաբար միջնարարներէն, հանդիսատեսներու ընդհանուր հետաքրքրութիւնը արթնուն պահելու համար, մինչեւ վերջ ամբողջութեան վրայ կեդրոնացած պահելու համար անոնց ուշադրութիւնը, ամբողջութիւնը ընդունելի դարձնելու համար, հեղինակը երրորդ անբնականութեան մը պիտի դիմէ, բոլորովին կամայականօրէն փոփոխութեան ենթարկելով իր ներկայացուցած գործողութեանց տրամաբխ ընթացքը, ժամանակներուն մէջ վերիվայրումներով վերջին տեսարանին տանելու համար ամէնէն յուզիչ, կամ ամէնէն ապաւորիչ դրութիւնները. ինչ որ ամբողջովին արուեստական դասաւորում մըն է ժամանակի. անբնականութեան վրայ կերտուած անխառնափելի անհրաժեշտութիւն մը թատերին համար, որմէ ազատ են մնացեալ բոլոր արուեստներն ալ:

Ժամանակի տեւողութեան հետ կապուած այլ զգուշացումներն չեն ալ կը ներկայանայ թատերագրին, որը յաղթելու համար եւս ան պարտաւոր է անբնական դասաւորումներ առաջացնել, սակայն այնպիսի արուեստով՝ որ բնականի տըպաւորութիւնը ստացուի: Մինչ այլ արուեստներու մէջ, նկարչութեան, արձանագործութեան, կամ մինչեւ անգամ դրականութեան մնացեալ սեւերուն մէջ, ժամանակ ունինք արուեստի գործը երկարորէն գիտելու, փնտռելու ու զանաւորելու զեղեցիկութիւնները, երանգի յաւելեալ նրբութիւնները, թատերակին համար մեզի տրամադրուած ժամանակը սահմանուած է ու կարճ: Կարելի չէ կեցընել գործողութիւնը, կարելի չէ պահանջել վերադարձ մը անցած գործողութեանց, կարելի չէ դիտել տարբեր անկիւնէ մը, տարբեր լուսաւորութեամբ ու վերադառնալ կրկին անգամ դիտելու համար սկզբնական անկիւնէն: Այդ բոլորը պէտք է քննուած ըլլան թատերագրին ու իր բեմադրիչին կողմէ՝ Հանդիսատեսին առջեւ, սահմանափակ ժամանակամիջոցի մը մէջ պիտի թաւալին իրերայալորդ գործողութիւններ, խտացած թէ՛ պարունակութեամբ, թէ՛ տարածքին մէջ եւ թէ ժամանակին մէջ, եւ այդ յաջորդականութեան կառուցումի ընթացքին, կառուցումին հետ միաժամանակ պէտք է փոխանցուին Հանդիսատեսին հեղինակին եւ մտածումները, եւ տեսիլքը, եւ արուեստի նրբութիւնները:

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆՆ ԵՎ ՄԱՆՔԱՓԱՅՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԵՆՈՐ ՂԺՈՒՆԱՐՈՒԹԻՒՆՆ Է, անբնականութեանց շարան մը պարտադրող խոչընդոտը, որմէ զերծ են սինեման եւ Հեռատեսիլը: Մինչ սինեմայի լուսանկարչական գործիքը կրնայ փոխադրուիլ սենեակէ սենեակ, տունէ տուն, փողոցէ փողոց, կամ քաղաքէ քաղաք, երկրէ երկիր, թատրոնին մէջ սահմանափակուած տարածութիւն մը միայն տրամադրուած է թատերագրին, քառանկիւն բացուածքի մը մէջէն ներկայացնելու

լու համար Հանդիսատեսներուն զէպքեր, գործողութիւններ, որոնք իրական կեանքին մէջ տեղի պիտի ունենային հաւանաբար տարբեր տարբեր վայրերու մէջ, տարբեր շրջապատի մը մէջ, տարբեր լոյսերու եւ տարբեր զոյններու ազդեցութեանց տակ:

Սահմանափակ տարածութիւն մըն է բեմական տարածութիւնը, երեք կողմէն գոց, բարձրացուած առաստաղով մը, շորթորդ կողմը բոլորովին բաց. եւ ի վերջոյ մէկ մասն է իրական Հանդիսատեսին, ինչքան ալ որ ներկայացուած թատերակը տարբեր վայրերու մէջ կատարուած գործողութեանց մասին ըլլայ, կամ տարբեր ժամանակներու մէջ կատարուի: Որով, եթէ մինչեւ անգամ շանդրադառնայ առոր, Հանդիսատեսը երեւակայութեան ճիշդ մըն է որ կը լրացնէ պակասները, կամովին կը մոռնայ բեմը եւ անոր շուրջ կողմը գտնուող պատերը, սրահը, քույրաները:

Օգնելու համար Հանդիսատեսի երեւակայութեան, հեղինակները, կամ բեմադրիչները, կը դիմեն արուեստական եւ անբնական միջոցներու. օրինակ, մութին մէջ կը թողուն ամէն ինչ, որ խաղարկութեան տարածութեան հետ կապ չունի, կամ լոյսի մասնաւոր կեդրոնացում մը կ'առաջացնեն բեմի այս կամ այն անկիւնին վրայ. կամ տէքորներու ճոխութեամբ, կամ ծայրայեղ պարզութեամբ է որ Հանդիսատեսի երեւակայութիւնը կը գրգռեն, ընդունելի կը դարձնեն անիրական տարածութիւնը, որպէս իրական վայրը գործողութեանց: Այս բոլոր միջոցները, ինչքան ալ կատարելագործուած թեքիքի արդիւնք ըլլան (դարձող բեմ, դարձող սրահ, շատ լայն բեմ, հետզհետէ լայնցող բեմ, լոյսերու դաշնամուր մը, եւ այլն) կը մնան միշտ անբնականի սահմաններուն մօտ, նախնական րաներ, եւ անհրաժեշտ կը դարձնեն որ թատերագիրը, եթէ ունի տաղանդը, կամ հազուադէպ հանճարը, իր ըսածներովը, իր արտայայտած մտածումներովը ու ապրումներովը մոռցընել տայ հանդիսատեսներուն, բէ ի-

րեմք կը գտնուին սրահի մը մէջ, այսօր, այս պահուս, շրջապատուած շորս պատեղով ու առաստաղով մը, որոնք ոչ մէկ կապ ունին բեմին վրայ թաւալող գործողութեանց հետ:

ԹԱՏԵՐԱԿԻՆ ԱՆՁՆԱՅԻՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ այլ խոչընդոտ մըն են, անբնական այլ երեւոյթներ են, որոնց զփուարին աշխատանքով կառուցումը միայն պիտի կարենայ բնականութեան տպաւորութիւնը թողուլ հանդիսատեսին վրայ: Տիպար մը բնական ըլլալու համար անհրաժեշտ է որ հաւատարիմ ու հարազատ ըլլայ Քննչն Իրեն Եւ Ոգ Թի Հեղինակին: Յաճախ կը պատահէ, կրնայ պատահի, որ հեղինակի մտայղացքին արդիւնքը եղող անձնաւորութիւնը, զէպքերու եւ գործողութեանց զարգացման հետ կը դառնայ բռնակալ մը. եւ կրնայ պատահի որ պատմութեան այս կամ այն բնութիւն, գործողութեանց այս կամ այն հաստատութիւն հետեւանքով, ան մերժէ մոտ կազմել հեղինակի կառուցելու ուղած շրջանակին:

Այլ խօսքով, նախորդող տեսարաններով կառուցուած տիպարը կը դառնայ անյարմար՝ հիմա պատրաստութեան վրայայ եղող տեսարանին համար: Եթէ հեղինակը պնդէ իր տեսարանի կառուցման վրայ, եւ պարտադրէ իր անձնաւորութեան խօսիլ ու շարժուիլ բեմին վրայ, ի՞նչ, հեղինակին ուղած ձեւով, կրնայ ըլլալ որ անձնաւորութիւնը հպատակի իրեն ծնունդ տուող մտքին, սակայն անմիջապէս զգալի կը դառնայ անբնականութիւնը իր ըսածին, ու ըրածին. այդ մտահաւոր տեսարանին մէջ, տիպարը կը դառնայ անիրական, անբնական: Եւ որովհետեւ գործողութիւնը հիմնական մասն է հեղինակին համար, իր ըսելիքը արտայայտելու լուսագոյն միջոցը, յաճախ կը ստիպուի զոհել տիպարի բնականութիւնը, իր տեսիլքի պատկերացումը իրականացնելու համար:

Մեծ ու արժէքաւոր հեղինակներուն մեծութիւնը կը կայանայ անոր մէջ, որ ոչ տիպարը կը դարձնեն անբնական, ոչ

ալ գործողութեանց հիմնական տեսարանէն կը դրկեն իրենց տեսիլքը: Կամ ամբողջովին այլ տիպարի մը միջոցով կ'արտայայտեն իրենց մտածումը, զայն պահելու համար հարազատ ինքն իրեն. կամ ամբողջովին տարբեր տեսարան մը կը դնեն, տեսարաններու տարբեր դասաւորում մը՝ որ կարելի պիտի դարձնէ տեսիլքին պատկերումը, պահելով հանդերձ տիպարին բնականութիւնը:

Կայ վերջին անբնականութիւն մը, որը թատերագրին հետ կապ չունի, սակայն իր գործին արժէքաւորումը, արտայայտումը, իր արուեստին հանդիսատեսներուն փոխանցումը կը պայմանաւորէ՝ քննադիրն ու դերասանները:

Թատերական գործ մը գրուած է բեմին վրայ խաղցուելու համար: Դերասաններ պիտի մարմնաւորեն հեղինակին մտատիպարը: Բեմագրիչ մը պիտի բերէ անհրաժեշտ շարժումը բեմին վրայ, շարժումները, դերակատարներու եւ իրերու, կահ կարասիներու դասաւորումները, ամէնէն հարազատ ձեւով փոխանցելու համար հանդիսատեսին հեղինակին ապրումներն ու մտածումները: Հեղինակը, շատ յաճախ, բացակայ է իր գործի ներկայացման պատրաստութեանէն, երբեմն կրնայ դարեւ ատալ մեռած ըլլալ: Պարզ է որ միջնորդներով հասարակութեան ներկայացող արուեստը աւելի մեծ խոչընդոտներ կը պարունակէ քան ուղղակի ենթակային հետ խօսող արուեստը (նկարչութիւն, արձանագործութիւն): Հեղինակը, երբ կը ստեղծագործէ իր թատերական գործը, պիտի գիտնայ թէ ան պիտի անցնի իրեն ժամանակակից, կամ իրմէ հոգեկոծ սեռայնութեան մէջ ապրող դերասաններու, բեմագրիչներու մտային ու հոգեկան աշխարհէն, հասնելու համար հանդիսատեսներու լայն հասարակութեան: Այստեղ եւս մեծագոյն զէնքը արուեստի գործ մը տալու համար՝ տաղանդն է, կամ հպուստիւս հանճարը: Երբ հանճարեղ է հեղինակը, կամ զէթ տաղանդաւոր, իր ստեղծագործական տիպարներն ու համադրած գործողութիւնները

այնքան կը նոյնանան տիեզերական նախադասարարներու, ընդհանրական դործողութեանց հետ, որ ինքզինքնին կը պարտադրեն իրենցմէ հտք եկող սերունդներու գերասաններուն ու բնածիրիչներուն այնպէս, որ միջնորդներու խողովակով հանրութեան ներկայանալու գծաւարութիւնը կ'անհետի, եւ իր ստեղծագործութիւնը կը պահէ իր բնականութիւնը, նաեւ ուրիշներու բերնին մէջ, ուրիշներու մտալուցքին իրականացումը դառնալով հանգեւած:

Մասնաւորապէս իսկ այն անբնական երեւոյթներուն, որոնց պէտք է յաղթանակել թատերապիւրը, ապաւն համար բընականի ապրումը, պիտի բաւէր թերեւս հարց տալու համար թէ ինչպէ՞ս է որ տակաւին թատերապիւրներ կան:

Նախ պէտք է անմիջապէս ընդգծել, թէ հետզհետէ կը նուազի անոնց թիւը. անցնող քսանամեակի ընթացքին հապիւքան թատերապիւր յայտնարարուած ըլլալ՝ հինգ կամ վեց հատ Թրանսայի մէջ, մէկ հատ Ջուրիցերիոյ մէջ, երկու-երեք հատ Անդլիոյ մէջ, եւ տասնեակ մըն ալ Միացեալ Նահանգներու եւ աշխարհի մընացեալ մասին մէջ: Պօսքը անուշտ կը գերաբերի ոչ թէ հանելիք, սակայն շատ կարճ կեանք ունեցող թատերականներուն, ուր որոշ արուեստի արժէք ունեցող, որոշ չափով մը զէթ մնայուն, եւ ազդեցութիւն գործող, (գրական, արուեստի ազդեցութեան մասին է խօսքը) գործերու մասին է:

Միւս կողմէ պէտք է անդրադառնալ, թէ դժուարութիւններու հետ պայքարի մտնելու, եւ յաղթանակներ ապահովելու ձգտումը մարդկային հիմնական գծերէն մին է, ու թատրոնին միջոցով շատ աւելի ազդու ձեւով կրնան դրսեւորուել իրենց մտածումներն ու տեսիլքի աշխարհը պարտադրել լայն զանգուածներու, քան արուեստի այլ միջոցներով:

Շէյքսպիր, Մոլիէր, Իբսէն, Ջեյմս Բրնչեւ, ալ շատ աւելի մեծ թիւով հասարակութեանց տոջեւ, շատ աւելի մեծ թիւով երկիրներու մէջ կը շարունակեն բանալ իրենց յատուկ տեսիլքը աշխարհին ու մարդոց, քան իրենց ժամանակակից եւ այլ արուեստներով արտայայտուող արուեստագէտները:

Անբնական միջոցներով բնականը ըստ անդժագործելու տաղանդը կը մնայ նախապայման մնայուն յաջողութեան: Եւ եթէ նոյն դժուարութիւնները կան նաեւ այլ արուեստներու մէջ ալ, առաւելագոյն չափի են անոնք թատերական գըրականութեան մէջ:

Այդ դժուարութիւններուն լրիւ կերպով յաղթած Շէյքսպիր մը սակայն, ահա կ'ապրի չորս հարիւր տարիէ ի վեր, եւ դեռ պիտի շարունակէ ապրիլ դարեր շարունակ:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թարգմանական գրականութիւնը իւրայատուկ դեր եւ տեղ ունի ազգերու ճշակոյթի պատմութեան մէջ։

Գրականութիւնը՝ ազգի մը հոգեմը՝ տաւոր արժէքներու խտացումը, անոր ազգային իտէալներուն թռիչքը եւ համարողային պատկերներուն եւ իմացումներուն հայելին ըլլալով՝ թարգմանական գրականութիւնը ազգամիջեան հաղորդումի, սիրտէ սիրտ ու միտքէ միտք ցոլացումի լաւագոյն ազդակը կըրնայ հանդիսանալ, իրերահաղորդ ամսաներու դրութեան օրինակով։

Ղևառ թարգմանուած գրական երկ մը՝ մէկ ազգէն միւսը փոխանցում մըն է՝ վկայութիւն մը, թէ՛ տուեալ ազգ մը որոնման ի՞նչ ուղիներով կը ձգտի հասնի կեանքի խորհուրդին, ի՞նչ պատասխան կու տայ մարդկային գոյութեան յարուցած հարցերուն, տալեւապէս։ Թէ՛ ի՞նչ ոլորտներու մէջ կը ճախրէ անոր միտքը, ի՞նչ սլացք ունի անոր հոգին, ինչպէ՞ս կը տեսնէ աշխարհն ու անկեղբէրը, եւ ինչպէ՞ս կը կատարէ ու կը ղիմագրուէ Մահը։

Ղևառ թարգմանուած գլուխ-գործոց գիրք մը ստացական արժէք մըն է ժողովուրդի մը համար, աւել մը՝ կենսունակ մնալու։ Հեռուոր գետերէ բերուած ջուրի հոսանք մը հայրենի անդամատաններուն՝ նոր ու նորաճեւ պաղարեւոյններու ի խնդիր։

Շէշտեցիք թարգմանութեան ղլաւք, որովհետեւ բնագրին անհարազատ թարգմանութիւն մը սուտ վկայութիւն մըն է ազգի մը եւ անոր մէկ տաղանդաւոր զաւկին մասին։ Դաւաճանութիւն մը։ Ոճի մը նոյնիսկ։

Քանի՛-քանի անմահներ կոտորուած, նահատակուած են մէկ գրականութենէ ուրիշ գրականութիւն մը փոխադրութեան ճամբուն վրայ։ Անպատասխանատու եւ

անբարեխիղճ գրիչներ դահիճի դեր կատարած են անոնց վզին ու ճակատագրին վրայ։ Հսկաներ վերածուած են զաճաներու, արծիւներ՝ թեւաբեկ ճնճողակներու։

Այս վրիպումը, այո՛ ոճիւրը անոր համար, որ երեւութապէս պարզ ու դիւրին այս աշխատանքը գործնական գետնի վրայ՝ քանի մը հիմնական պայմաններ կը դնէ թարգմանիչին առջեւ։

Հարազատ թարգմանութիւն մը եթէ ստեղծագործութիւն մը չէ՛, է՛ անպարտան վերակերտում մը, խանդավառ ապրումի մը, լիակատար ներթափանցումի մը յաջող վերարտադրութիւնը։

Գործ մը հարազատօրէն թարգմանելու համար՝ թարգմանիչը պէտք է ճշմուտ ըլլայ երկու լեզուներուն ալ հասարակապէս, սիրէ՛ թարգմանելիք գործը, խանդավառութիւնով, ունենայ հեղինակին ապրումը (երբեմն նոյնիսկ աւելին) ու վերատեղծէ։ Ձի բաւեր այսքանն ալ, լրիւ յաջողութեան մը համար, — ունենալու է հեղինակին խառնուածքէն գիծեր, անոր զգայարաններուն ընկալչական կարողութիւնը, խոյանքը կամ խորասուզումը, տաղանդին կէ՛տը դռնէ։

Դժուար, բայց արհամարհելի աշխատանք չէ թարգմանութիւնը։ Երբեք՝ ժամավաճառութիւն մը։ Համբուաւոր գրագէտներ, մեծահռչակ գրողներ զղացած են անոր կարեւորութիւնը եւ չեն անտեսած այս կալուածը՝ բարեբները որուն շա՛տ են։ Թարգմանական գիտակից ու խոտապահանջ աշխատանք մը խրացումն է այլ հեղինակի մը մտածելակերպին, անոր գրելու քեֆնիքին, ըզրացումներու աշխարհին ու մտապաշարին։ Վարժութիւն մը, մագլցում մը դէպի արուեստի այլ բարձունքներ։

Աւելին. ստեղծագործ հեղինակի մը համար ուրիշ հեղինակէ մը կատարած

Թարգմանութիւնը կրնայ սեմպիոզ մը ըլլալ ի՞ր իսկ գրականութեան համար: Դառնալ փրկարար մայն մը, լուսաշող փարոս մը կեանքին ու գործին վրայ:

Այսպէս է որ Պոտլէս գտաւ իսկար Այէն-Փօն: Կարգալով եւ Թարգմանելով անոր գործերը (Խստուառ Եփքրաօրտի-նէր) ճանչցաւ իր հոգեղայրը: Ունեցաւ յենարան մը անոր անձին ու գրականութեան մէջ, եւ նոր Թափ ու Թոփէք առաւ իր ստեղծագործութիւնը: Եւ որովհետեւ տաղանդները նոյն բարձունքի վրայ էին, Պոտլէսի Թարգմանութիւնը, եթէ չըլլար նոյնիսկ քերթողութիւնը, պիտի բաւէր իրմէ անուն մը կտակելու Փրանսական գրականութեան:

Հետաքրքրական կէտ մը: Կրնայ պատահիլ, քիչ անգամ անշուշտ, որ Թարգմանուած գործ մը, չնորհիւ Թարգմանիչին արժանիքներուն, գրականութեան նժարին մէջ աւելի կշռէ քան քննարկը: Այսինքն վէպ մը կամ քերթուած, մը Թարգմանուելով՝ նոր փայլ ստանայ ու գերազանց գագաթ մը կազմէ (գերբոր բացուիլի դռներն յուսոյ...*):

Պայման չէ սակայն ստեղծագործող հեղինակ ըլլալը, երկ մը հարազատօրէն Թարգմանելու համար: Կան կոչումով տաղանդաւոր Թարգմանիչներ, որոնք ապերախտ գործ չեն կատարեր երբեք, այլ երախտարժան նպաստ մը կը բերեն իրենց ազգային գրականութեան եւ անվարձ չեն մնար իրենք ալ՝ իրենց հաշւոյն (Շէյքսպիրի գործերուն հայերէնի Թարգմանիչը՝ Յոյճ. Մասեհեանը՝ օրինակ):

*) Ն. Ռուսինեան բախտաւոր է, որովհետեւ Ռուսագործուած է իր երգը: Բայց՝ եղած են անցելային, ու կամ Ոսեւ այսօր քանոնադրման, քրոնի իրենց կարգ մը բերքաւորութիւն ստակ եւ քիչ նշանակելի քարգմանութիւն կատարած ըլլալ-նի՞նք՝ առաւելութիւն մը պիտի արժանացրէին ի Քլե-պաստ իրենց, որովհետեւ Երթեմն աւելի յայտն են՝ քան ընդգրկմանը, քայց զանազ գրպէս սեփականութիւն մերկայացնելը կը վերածուի ռեֆուէ-յի մեղքի եւ կը դառնայ իրենց կործանման շարժառիթը: (Յ. Գ.)

Այս գտակարդի մշակի մը համար Թարգմանութիւնը գեղարուեստական բարձրագոյն ապրում է ինքնին, Էվաղիան մը նաեւ, քանի որ հոգեկան ու մտային սլացքի թեւերով կը վերացնէ Թարգմանողը առօրեային ու չըջանալուն ու կը մղէ զայն վերստեղծման:

Մեր մէջ, հինէն ի վեր, դնահատուած ու հոյ է գտած Թարգմանական գրականութիւնը:

Մեարդպեան տառերով ստեղծագործելէ առաջ կատարած ենք Թարգմանութիւն, - Աստուածաշունչը (ինքնին ստեղծագործութիւն մը, եթէ կ'ուզէք, բացառիկ պերճութեամբ ու հարազատութեամբ վերարտադրուած ըլլալուն համար քնադէրը): Ու անկէ ասդին միշտ ալ գտնուած են գրական մշակներ, որ օտար գետերու ջուրը բերած են հայրենի անդամ տաններուն:

Մեր Արդի Գրականութեան առաջին շրջանէն սկսեալ նոր Թափ առած է Թարգմանական գրականութիւնը, որ ոչ միայն փոխանցած է գրական ճաշակ, թեքիք եւ տիպարներ, այլեւ մեծապէս օգնած՝ աշխարհաբարի զարգացման (1847-ին Իզմիրի մէջ հրատարակուած աշխարհաբար Աստուածաշունչը, օրինակ):

Առաջին վիպապաշտներէն՝ Յովհաննէս Տէրոյենց Պատուելիէն (1800-1888) սկսեալ՝ Թարգմանական հսկայ գրականութիւն մը, աւելի քան 250 հատոր, վաստակուած է ի շահ մեր գրականութեան, որուն երախտարժան ախոյեանները հանդիսացած են Գ. Օտեաններ եւ Ռուսինեաններ, Կ. Իւթիւճեաններ, Զինկիրեաններ, Մամուրեաններ, Մեարդպեաններ եւ Յ. Տէրեաններ: Թարգմանական ալիքը անցած է մեր գրականութեան բոլոր սերունդներուն, եւ մինչեւ Վ. Թէքեան եւ Լ. Շանթ, շատ քիչ բացառութեամբ, մեծ ու փոքր հեղինակներ, առաւել կամ նուազ ժամանակ աւրաժողութեամբ են Թարգմանական գրականութեան:

Մեր օրերուն՝ կը շարունակուի այս աւանդութիւնը (հոս՝ իրենց ստեղծա-

գործական վաստակին վրայ բարենիշ կ'աւելցնեն Համաստեղներն ու Եդ. Տարօնեանները) :

Եթէ ստեղծագործող ներկայ չկողմնակիցները ընդհանրապես հաղթելու ժամանակ կը գտնեն իրենց «խոսքը» ըսելով (ԼԵՖ ըսելիք) խօսք ունին անշուշտ...)

Եւ փնտնանք թարգմանութեանը (միշտ ի վնաս իրենց նախ, եւ ապա՝ հայ ժողովուրդին ու մշակութիին)՝ կան սակայն թարգմանողներ, որոնք անտեղեակ ու անմասն չեն պահեր ընթերցող հասարակութիւնը տարբեր գաղափարներու:

Հայաստանի մէջ մանաւանդ լայն հռետով կ'ընթանայ այս զնահատեիւ աշխատանքը, ինչ փոթ թէ նախընթացութիւնն ու նախապատրութիւնը, ընկերային ու քաղաքական սիրողականութիւնն իր ղեկավարութեամբ (այսինքն մեղադրանք, այս պարագային) ընթացք կու տայ անոր: Եւրոպիերի, Պալաքի, Զուլիի անկորնշէի երկրներն, ինչպէս նաեւ այլ եւ այլ երկր հեղինակներու գործերուն հեղեղը կ'ողողէ պրականութեան հրապարակը՝ բարձրացնելով ընթերցասէր ժողովուրդի գրական ճաշակը եւ պատասխանի իր դերովը՝ նոր ուժ ու աւանդներով կ'ընդլայնէ ծաղկող գրականութեան *):

Գրականութեան այս մարզը արտա-
սահմանի մէջ ալ ունի կորուրի եւ վա-
ստակաւոր իր զգրիչները (Ս. Աշճեան, Տ.
Ոսկունի, Ե. Մանուկեան, Վ. Եսայեան,
Փրոֆ. Գ. Սարգսեան, Ս. Զաւէյ, Դե-
յուր Համար քանի մը անուններ միայն) :

Թարգմանողներու այս ճիշդ հասած է եւրոպական արդի գրականութեան սահմաններուն եւ մատուցած հայ ընթերցողին մինչեւ Արթուր Քեօլէրի եւ

Այսպէս Քաճիւի երկերը **):

Բայց Համալիարհային գրականու-
թյունը կը թաաւրի, զուգահեռ ընկերային
նոր կարդերուն եւ դիտական նուաճում-
ներուն, արձանագրելով որոշ յաջողու-
թիւններ եւ ստեղծելով նոր դէմքեր ու
քննամթեր: Կանոք պէտք չէ առնէ մեր
թարգմանիչներուն գործը:

Այսպիսի ժամանակաշրջանի մը, երբ
ստեղծագործական մեր գրականութեան
կրկնէր Հետզհետէ կը յօսարանան ու չին
կարծիք չոծ զանգուսնէրու կենսատու
անոնք գաւառի՝ անհրժեշտ է որ քարզ-
մանական լաւ գործեր զան չըսակար
պակասը լրացնելու, ժողովուրդին զբա-
կան ճաշակը նորոգելու եւ գրականու-
թեան կանոնէ պակասը ունէր ու հաստատ
ճաշակը պակասելու:

Գերմանացիք կը նկատուին աշխարհի լուսագոյն թարգմանիչները, եւ հակառակ իրենց հարուստ գրականութեան՝ անգաղար զարկ կու տան գրականութեան օժանդակ այս մարզին՝ միշտ շահ մը ահնակայով անկէ:

Մեր գրականությանն ալ իրեն պատիւ բերող զորքեր ունի Թարգմանական, եւ չ'ուրանար անոնց ներարկած կենսութիւնն:

Եւ այլ կենսութեւ, թարմ աւելի չե-
րարկումը աւելի քան երբեք անհրաժեշտ
է այսօր, պայմանաւ որ շմեայ կրաւոր-
ական վիճակի մէջ այլ դառնայ միա-
ժամանակ ներգործօն ազդակ:

Թարգմանական անդառտանք կը սպասուէ թուրքահայերէն հաւանական իր մշակներու նոր մատակին :

8. ԳԵՂԱՄԴ

*) Գրականության ազգային թանգարտը հաստատված շատ անգիկ երախտապարտ աշխատիչները Հայաստանի մէջ շահուած քարոզմանական այս վտտակը, համ ճատիզմագրծական յորդորուն ճրականութեան մէկ խոշոր տակունը:

(Յ. Գ.)

«») Հևս անարդար ու անհեղինակ ղեկավար փակագին մը, բռնաւ բե՛ մոլորակ առօրեայ, բայց մամուլային մեր տարբերակակն գիտական մամուլին մէջ (գովեստաւորակն) կկատիւ ձեռնիքն չհաշտարակուցը, նաեւ՝ Վերիշխըն) հրապարակուցը, բաւարարիւ իմնագինքն ու քաղաքական գրաստմէ՝ մեր կը քննարկենք մեր գիտական լեզուին ու կառուած ամբողջ հետազոտի հայտնիքը՝ (Բ. Գ.)

ՀԱՅ ԱԶԳԻ ԿԱԶՄԱԽՈՐՄԱՆ ԵՒ ՆՈՐԱ ԱՅԺՄԵԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Հայ ազգի կազմաւորման, զարգացման եւ այժմեան կացութեան վերաբերող հարցերի ուսումնասիրութիւնը խորհրդային Հայաստանում անցել է մի քանի անհաւասար փուլերից։ Այլ կերպ ասած՝ վերջին մի քանի տարիների ընթացքում այդ բնագիտական նկատույզը աշխուժութիւնը նախապատրաստուել է նախորդ տասնամեակների իրադարձութիւնների, սիրող իշխանութեան եւ ազգային ներքին ուժերի փոխադարձ պայքարի առկայութեամբ, այսինքն՝ ունի իր նախադասութիւնը։

Հայ ազգի պատմութեան հարցերի ուսումնասիրութեան ընդթել, անխուսափելիօրէն, միշտ էլ պայմանաւորուած է եղել պետականօրէն տիրող ուժերի գաղափարաբանութեան մակընթացութիւններով ու անդատութիւններով։ Կոմունիստական իշխանութեան համախորհրդային ազգային քաղաքականութիւնը իր դրոշմն է դրել այն կամ այն ժամանակաշրջանում Հայ ազգի պատմութիւնն ուսումնասիրելու գործի դրուածքի վերայ։

Երբ աչքի առջնւ ենք բերում խորհրդային իշխանութեան զբեթէ քառասուն տարուայ պատմութիւնը Հայաստանում, նկատում ենք մի հետաքրքրական երևոյթ։ Մեծ յաւակնութիւններով պատմութեան ասպարէզ մտած հակադրային ուժերը աստիճանաբար ստիպուած եղան գաղափարապէս ու գործնապէս տեղի տալ ազգային իրականութեան թելադրած պահանջների առջեւ։ Նրանք ք-

տիպուած եղան հաշուի առնել ազգային դոյութեան եւ նրա յարատեւելու ճիշդութի փաստը։

Կոմունիստական իշխանութեան ըսկրդնական ժամանակաշրջանում ամէն ուղղութեամբ ծաւալուող եւ ազգերի վերացման ու ձուլման նպատակը հետապնդող շարժումը աստիճանաբար իր թափը կորցրեց՝ հանդիպելով յարաճուն քնդդիմութեան։ Ուրացուող ազգերը, հակառակ իշխողների կամքի, ընթացան իրենց ինքնութիւնը աւելի ցայտուն դարձրեւ ճանապարհով։ Դրան համընթաց, օրակարգի խնդիր դարձաւ այդ ազգերի ոչ միայն ախօրուայ կեանքի, այլեւ պատմութեան ուսումնասիրութիւնը։

Անշուշտ, խորհրդային իշխանութեան պատմութեան ամբողջ ընթացքում միշտ էլ խօսուել ու գրուել է ազգերի եւ նրանց պայքարի մասին։ Այդ արտայայտութիւնները առերեւոյթ միշտ էլ բխել են կոմունիստական գաղափարաբանութիւնից։ Բայց դրանք իրենց ներքին բընոյթով, նպատակային ուղղութեամբ եւ դրսեւորման եղանակով՝ կրել են նշանակալից փոփոխութիւններ, որոշ հետեւողականութեամբ։

Կարելի է արձանագրել, որ ազգային հարցի վերաբերեալ գրականութեան մէջ սկզբնական շրջանի գերիշխող քաղաքական տարրը վերջին տասը տարում դուգակցւում է նաեւ գիտական տարրի հետ։ Ազգային հարցի ուսումնասիրութեան գործում գիտական մօտեցումը նը-

կատելի է մանաւանդ վերջին մի քանի տարում: Գիտական տարրի երեւան գալը նշանակում է արգելք, թէ կոմունիստական քարոզչական մտայնութիւնը ինքնալուծարքի է ենթարկւում կամ գէթ ժամանակաւորապէս իր տեղը զիջում է մի այլ մտայնութեան: Անտարակոյս՝ ոչ:

Պարզապէս կոմունիստական քարոզչութիւնը իր գէնքերը յարմարեցնում է այսօրուայ միջազգային եւ ներքին պայմաններին: Քարոզչութիւնը զգեստաւորւում է պիտութեան հրապարհի խայծերով: Քարոզչութիւնը ջանում է կոմունիստական գաղափարաբանութեան ելակետային դրոյթները հրամցնել, դրանք պիտականորէն փաստարկելու գործը ընդունելով: Բայց այդ պարագան իր հերթին իրստ ուշադրաւ է իրերի ու երեւոյթների մշակումը գիտելու եւ ուսումնասիրելու համար:

Այդպիսին հարցի ուսումնասիրման գիտական տարրի երեւան գալը միայն կոմունիստական իշխանութեան գործողութիւնը քարոզչութեան յարմարեցնողական հիգիերի արդիւնք է: Դա միաժամանակ նաեւ ազգային հարցի գիտական ուսումնասիրութեան սահմանափակում է վկայութիւնն է եւ ազգային գործոն ուժերի բարոյական յաղթանակի լաւագոյն արագացրը: Եթէ կոմունիստական իշխանութեանը յաջողութեամբ լինէր ազգերը զանցառելի ուժ դարձնել, այժմ կարիք չէր լինի այդ ազգերի դոյութեան իրաւունքի համար դիմել գիտական փաստարկումներին, այլ կը տեսնուէր հակառակ երեւոյթը:

Որոշորային Միութեան բաղկացուցիչ ազգերից մէկին՝ հայ ազգի կազմաւորման ու արդի վիճակի ուսումնասիրութիւնը Որոշորային Հայաստանում փաստորէն սկսուել է վերջին 15 տարում: Այդ ուսումնասիրութիւնը կատարւում է կոմունիստական աշխարհայեացքի համաձայն՝ «մարքսիզմ-լենինիզմի կլասիկներին» սահմանած սխեմաների շրջանակում: Այդուհանդերձ, առաջին անգամ լինելով, Որոշորային Հայաստան

նի հայ մտաւորականները ձեռնամուխ են լինում հայոց պատմութեան փաստական տուեալները ինքնուրոյնորէն համադրելու, ամբողջական շարադրանքի ներքէն դարձնելու եւ բազմաթիւ էական ընդհանրացումներ կատարելու գործին:

Եթէ հայ ազգի պատմութեան ուսումնասիրութիւնը լիովին ինքնուրոյն չէ, ոչ էլ լիովին գիտական, այլ պարզապէս առաջնորդւում է «մարքսիզմ-լենինիզմի» մեթոդականական սկզբունքներով, ապա նրա փաստական հումքը հայկական է, իսկ ուսումնասիրողներն իրենք պատկանում են հայ ընդհանրութեանը եւ ինքնաբերաբար այդ կէտից են տեսնում աշխարհը: Հէնց այդ պարագան է, որ արժանի է ուշադրութեան: Վերջի վերջոյ կարեւորն այն է, թէ որեւէ ազգ ինչ է ներկայացնում իրենից եւ ինչպէս է պատկերացնում իր դոյութիւնը, այլ ոչ թէ այն, թէ ինչ են ծրագրում կողմնակի ուժերը:

Եթէ հայ ազգի պատմութեան բուն ուսումնասիրութիւնը խորհրդահայ պատմագիտութեան մէջ սկսւում է 1950-ական թուականներից, ապա ընդհանուր առմամբ հայոց պատմութիւնը այս կամ այն չափով միշտ էլ եղել է հայ պատմաբանների ուշադրութեան առարկան նոյնիսկ խորհրդային ժամանակաշրջանում: Հարցը նրանումն է, որ ընդհանրապէս հայոց պատմութիւնն ուսումնասիրողները միշտ էլ նկատի են ունեցել միաժամանակ նաեւ «հայ ազգի պատմութիւնը», առանց անպայմանորէն այդ ձեւակերպումը գործածելու: Նրանք այդ արեւ են «հայ ժողովրդի պատմութիւն» անուան տակ, ոչ թէ նրա համար, որ հետապնդել են լուսնութեան մաքսանենգութիւն, այլ որովհետեւ այդ ձեւն է ընդունուած եղել ամբողջ Որոշորային Միութիւնում: Այժմ կացութիւնը չի փոխուել: «Հայ ժողովրդի պատմութիւնը» մնում է որպէս այդպիսին: Բայց այժմ դրան աւելացել է «հայ ազգի պատմութիւնը»՝ որպէս հայ ժողովրդի վերջին մէկ դարի պատմութիւն: Այդ տարբազարումը ինքնըստինքեան արհեստա-

կան է, բայց բխում է կոմունիստական ըմբռնումներից:

Այս վերջին՝ «Հայ ազգի պատմութեան» ուսումնասիրութիւնն էլ Հանգիստանում է տուեալ յօդուածի քննութեան առարկան: Սակայն «Հայ ազգի պատմութեան» ուսումնասիրութեան բնագաւառում վերջին տասը տարուած կատարուած աշխատանքները ինքնին քիչ բան են բացատրում, եթէ դրանք չներկայացնենք երևոյթների յաջորդական շղթայաւորման մէջ: Քանի որ նախորդող տասնամեակների իրադարձութիւնները նախապատրաստել են այսօրը: Ազգային հարցի վերաբերեալ կոմունիստական իշխանութեան վարած քաղաքականութիւնը իր արտայայտութիւնն է գտել նաեւ ազգային հարցի դանդաղ մեկնաբանութիւնների մէջ, որոնք երկար ժամանակ բացառապէս կրել են քարոզչական բնուոյթ՝ յենուելով «մարքեդմ-լենինիզմի» այսպէս կոչուած գիտական դրոյթների վրայ:

Հայ ազգի պատմութեան վերաբերող ուղղակի կամ անուղղակի ուսումնասիրութիւնները խորհրդային ժամանակաշրջանում թէեւ միշտ էլ կաշկանդուած են եղել մարքս-լենինեան սխեմայով, այնուամենայնիւ տարբեր դրեւերում են ունեցել տարբեր ժամանակ: Հայ ազգի պատմագիտութեան զանազան փուլերը պարբերացնելով՝ կարելի է ընդունել երկու հիմնական ժամանակաշրջան: Առաջինը ընդգրկում է 1920-1950 թուականները: Իսկ երկրորդը՝ 1950 թուականներից մինչեւ մեր օրերը:

Առաջին ժամանակաշրջանի համար բնորոշ է այն, որ բոլորովին անտեսուած էր Հայ ազգի բուն պատմութեան ուսումնասիրութիւնը՝ որպէս ինքնուրոյն նիւթ: Բացառապէս իշխում էր «ազգային-գաղութային հարցի մարքս-լենինեան ըմբռնման» քարոզչութիւնը ընդհանուր առումով, եւ խորհրդային պետութեան ներսում «լենինեան-ստալինեան ազգային քաղաքականութեան» գործադրման առօրեայ հարցերի պետական բացատրութիւնը, Գիտական հետազո-

տութիւնները բացակայում էին ոչ միայն Հայ ազգի, այլեւ խորհրդային Միութեան մէջ գտնուող միւս ազգերի վերաբերմամբ: Եթէ ընդհանուր, կոմունիստական-ընկրդրութեային քարոզչութեան գերակշռութիւնը յատուկ է ամբողջ առաջին ժամանակաշրջանին, այնուամենայնիւ, կարելի է որոշ տարբերութիւն դնել 1920-1930 եւ 1930-1950 թուականների միջեւ: 1920-30 թուականները լի են զանազան երանգի կամ հակոտնեայ տեսակէտների բախումով, ընթացիկ գործօն պայքարի ցայտուն երևոյթներով, իսկ 1930-50 թուականներին տեսակէտների արտայայտումը նուազում է անհամեմատ շարժում, ընթացիկ պայքարը մղւում է օստիկանական ճնշման պայմաններում՝ կարծես թէ ընդլայնակ անցնելով: Այդ ժամանակաշրջանի իմաստը ըմբռնելու համար պէտք է աւհասարակ ծանօթ լինել կոմունիստական ուսմունքին՝ ազգային հարցի նկատմամբ:

Երկրորդ ժամանակաշրջանի համար բնորոշ է այն, որ Հայ ազգի պատմութեան ուսումնասիրութիւնը դառնում է օրուայ հարցերից մէկը՝ որպէս ինքնուրոյն նիւթ: Երեւան եւ գալիս լրագրական ու գիտական յօդուածներ, որոնց նպատակն է փաստել, առաջին հերթին, «սոցիալիստական Հայ ազգին» գոյութիւնը, նրա ստեղծման «օրինաւորութիւնը» եւայլն: «Հայ ազգի» եւ «սոցիալիստական Հայ ազգի» գատորոշուած ուսումնասիրութիւնը որքան էլ յատուկ է երկրորդ ժամանակաշրջանին, այնուամենայնիւ որոշ տարբերութիւն կայ 1950-56 եւ 1956-59 թուականների միջեւ՝ հարցի դրուածքի եւ լուսարանման տեսակէտից: 1950-56 թուականներին գրուած ուսումնասիրութիւնները բացառապէս յենում են Ստալինի ասոյթների վրայ, կուրօրէն հետեւում են նրա սահմանած սխեմային, իսկ 1956 թուից յետոյ գրուած ուսումնասիրութիւնները շեշտը դնում են Լենինի ասոյթներին վրայ եւ երբեմն ինքնուրոյն երկրորդ հարցադրումներով «հարստացնում» են ազգագիտական միտքը:

1950 թուականներին սկսած, ազգերի եւ, առաւելագէտ, «սոցիալիստական ազգերի» նկատմամբ ցուցաբերուած աղուշադրութիւնը սերտորէն առնչուած է խորհրդային Միութիւնում կատարուող տեղաշարժերի եւ աշխարհի ընդհանուր կացութեան հետ։ Այդ ուղղութիւնը հետապնդում է քաղաքական նպատակներ եւ բոլորովին հեռու է իսկապէս գիտական մտահոգութիւններից։ Խորհրդային Միութեան կոմունիստական ղեկավարութիւնը դէմ դիմաց գտնուելով ինչպէս խորհրդային Միութիւնում, այնպէս էլ արտաքին աշխարհում օրաուր անող ազգային շարժումներին՝ ջանում է աւելի եւս լարել իր քաղաքութիւնը բոլոր հնարաւոր եղանակներով, որպէսզի կարողանայ համոզել երեսփոխների մակերեսով դահացող մարդկանց, թէ արդի կոմունիզմը ազգերի ազատ գոյութեան ու բարգաւաճման միակ պաշտպանն է։ Այդ կապակցութեամբ էլ նա ինքն իրեն միշտ հակադրում է արեւմտեան դեմոկրատական պետութիւններին, մանաւանդ Միացեալ Նահանգներին, վերջիններս ներկայացնելով որպէս ազգերի գոյութեան եւ ազատութեան թշնամի։ Կոմունիստական քաղաքութիւնը միտումնաւոր կերպով շրջում է աշխարհում գործող ուժերի բնոյթն ու դերերը։ Հիմնականում դրանով կարելի է բացատրել այն «գործողութեանը», որը այժմ խօսքով ցուցաբերում է կոմունիստական ղեկավարութիւնը հին ու նոր ազգերի նկատմամբ։ Այդ ձեւով էլ բացատրում է հայ ազգի պատմութեան ուսումնասիրման անհրաժեշտութիւնը խորհրդային Հայաստանում։ Հարցի դրուածքը ըմբռնելու համար աւելորդ չէ մէջբերել Հայաստանում 1954 թուին տպուած գրքոյկներից մէկի հետեւեալ պարբերութիւնները, որոնք, առանց մեկնաբանութեան, ցոյց են տալիս, թէ ի՞նչ նպատակով ինչպիսի միջոցաւ հրահրում է խորհրդային Միութիւնում՝ կոմունիստների «ազգապաշտպան» դիրքը ընդգծելու համար։

«Առանձնապէս ներկայումս, երբ մարդկութեան ապագայի համար պայքար է լինում երկու լազերի՝ ՄԱՌՄ-ի գլխաւորութեամբ խաղաղութեան ու սոցիալիզմի լազերի եւ ԱՄՆ-ի իմպերիալիստների գլխաւորութեամբ պատերազմի հրձիգների ու ռեակցիայի լազերի միջեւ, ազգային հարցը բացառիկ կարեւորութիւն է ստանում։

«Ամերիկեան մազնատները, բոլոր ազգերի ու ժողովուրդների այդ կատաղի թշնամիները, ժառանգելով Ֆրանսական իդէոլոգիան, իրենց համաշխարհային տիրապետութիւնը հաստատելու ձգտումով տարուած, ներկայումս մոլեգին կերպով նոր պատերազմ են հրահարում աշխարհի ժողովուրդների միջեւ, պատերազմ, որը առաջին հերթին ուղղուած է յաղթանակած սոցիալիզմի երկրի՝ մեր հզոր Սովետական Հայրենիքի դէմ, ժողովրդական դեմոկրատիայի երկրների դէմ։

«...Այդ զաւթողական քաղաքականութիւնը քողարկելու եւ այն արդարացւելու նպատակով ամերիկեան իմպերիալիստները իրենց ռեակցիոն գիտնականների օգնութեամբ մոլեգին կերպով քարոզում են այն «թէոթիան», ըստ որի իւր թէ ազգ, ազգային ինքնութիւնութիւն, ազգային սահմաններ, հայրենիք հասկացողութիւնները հնացել են։ Դրա փոխարէն նրանք առաջ են քաշում կոսմոպոլիտիզմի իդէոլոգիան, որով կամենում են բթացնել ժողովուրդների զգոնութիւնը, թուլացնել եւ կազմալուծել նրանց պայքարը ընդդէմ ամերիկեան էքսպանսիայի, յանուն ազատութեան եւ դեմոկրատիայի։ Ռեակցիոն բուրժուազիայի հետ միասին այդ «թէոթիան» ակտիւ կերպով քարոզում են նրա հլու ծառաները՝ բուրժուական նացիոնալիստները եւ ալ սոցիալիստները։

Ազգային հարցի բացառիկ կարեւորութիւնը ընդունում է միայն այդ տղերում յիշուած նպատակներին հասնելու դիտաւորութեամբ։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1920-30 թուականները բնորոշ են մարքսիզմ-լենինիզմի ինչպէս ընդհանուր, այնպէս էլ ազգային հարցի վերաբերեալ դրոյթների տարբեր մեկնարանութիւնների առատութեամբ: Այդ մեկնարանութիւնները ելակէտ ունէին նախաորհրդային եւ հետագայ տարիների ընթացքում Լենինի ու նրա գաղափարակիցների առաջադրած դրոյթները: Իսկ Լենինը եւ իւրաքանչեւ իրենց տեսակէտները միշտ էլ ձեւակերպում էին՝ անպայման վերաբերելով մարքսիզմը: Ոչ ոքի համար գաղափար չէ, որ Մարքսի ուսմունքը հիմնականում նկատի էր առնում զայն սոցիալական յեղափոխութեան հեռանկարի համար, իսկ ազգային հարցը, որպէս այդպիսին, նրան չէր հետաքրքրում: Այդ առթիւ Լենինը իր ժամանակ գրում էր, թէ՝

«Մարքսը եւ Լենինը ազգային հարցին ընդհանրապէս քննադատորէն էին վերաբերում, դնաւստելով նրա պայմանական-պատմական նշանակութիւնը:

... «Բանուորական հարցի» համեմատութեամբ ազգային հարցի ստորագիտ նշանակութիւնը Մարքսի համար կասկածից վեր էր: Բայց ազգային շարժումներն անտեսելուց նրա թէորեան այնպէս հեռու էր, ինչպէս երկինքը երկրից»:

Արդէն «պրոլետարները հայրենիք չունեն» հռչակաւոր նշանաւորը միաժամանակ նշանակում էր, որ նաեւ՝ «պրոլետարները ազգութիւն չունեն»: Ահա այդ ուղղութեամբ էլ մշակուել էր Լենինեան գրականութիւնը ազգային հարցի վերաբերեալ նախադրադրական ժամանակաշրջանում: Այդ կապակցութեամբ ուշադրաւ է Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական կուսակցութեան ծրագրի շուրջը իր ժամանակ մղուած բուռն բանակութիւնը: Յենուելով Ներսիսի Մատենացիոնայի 1896 թուի Լոնդոնի Կոնգրեսի որոշման վերայ՝ այդ կուսակցութեան 1903 թուի

ծրագրի Ծրագրի կէտը երաշխաւորում էր ապահովել «պրոլետարեան կազմի մէջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրաւունքը»: Այդ կէտը, հետագայում վերանայնուած նոյն կուսակցութեան 1919 թուի Ծրագրում, յարմարեցուելով նոր պայմաններին, աւելի մանրամասնութեամբ է շարադրուած «Ազգային յարաբերութիւնների բնագիտութեամբ բաժնի մէջ, բաւական տարբերուելով նախկինից: Մի կողմ գրած ազգային հարցի առթիւ այդ ծրագրի շուրջ եղած վիճարանութեան մանրամասնութիւնները, հարկաւոր է բնորոշել, որ դա յանգում էր կուսակցութեան մէջ կամ նրա շուրջը տարբեր ազգերի բանուորներին առանձին-առանձին, թէ խառը կազմակերպելու հարցին: Այդ առնչութեամբ արտայայտուած տեսանկէտները բացայայտում են նաեւ պայքարող կողմերի ընդհանուր տեսակէտները ազգերի դոյութեան ու նրանց ապագայի վերաբերեալ:

Ազգային հարցի ծրագրային մեկնարանութիւնը իր արտայայտումն էր գրում Սոցիալ-Դեմոկրատական եւ հայկական սոցիալ-դեմոկրատական ժամուրում: Մէկը միւսի յատկէց յայտնանող յոգեւածներում ու գրեթէ յենցում կաղապարում էին Լենինեան-հակազգային (թէեւ՝ անկանօրէն ապառնի ինքնորոշում պաշտպանող) եւ պանաղան ազգային սոցիալ-դեմոկրատական ըմբռնումները: Լենինի, Ստալինի, Ծաւումեանի եւ այլոց գրութիւններում ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն շօշափում էին նաեւ հայ իրականութեան մէջ գրեւորուող երեւուոյթները:

Լենինը իր «Ազգային հարցը մեր ծրագրում» յոգեւածի մէջ գրում էր.՝

«Սոցիալ-դեմոկրատիան միշտ պիտի պայքարի բուռնութեան կամ որեւէ անարդարութեան ուղիով ազգային ինքնորոշման վրայ դրախդ ազգելու ամէն մի վերածի դէմ: Բայց ինքնորոշման ապառաւութեան համար մղուող պայքարի անպայ-

ման ճանաչումը բնաւ մեզ չի պարտաւորեցնում պաշտպանել ազգային ինքնորոշման ամէն մի պահանջ: Սոցիալ-դեմոկրատիան, որպէս պրոլետարիատի կուսակցութիւն, իր գրական եւ գլխաւոր ինքիւրն է համարում աշակցել ոչ թէ ժողովուրդների ու ազգերի ինքնորոշմանը, այլ պրոլետարիատի ինքնորոշմանը ամէն մի ազգութեան մէջ:

Նոյն ժամանակ ՎիՍՍՐԱՅՅում տըպուած իր «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին» յօդուածում՝ Լենինը ճշգրտեց ձեռնարկը, հանդէս գալով որոշ հայ սոցիալ-դեմոկրատների մօտ նկատուող «Ֆեդերալիստական» հակումների դէմ:

Անդրկովկասեան պայմաններում ազգային հարցը լուծելու առթիւ բաւական յօդուածներ է գրել նաեւ Ստալինը: 1904 թուին տպուած իր «Ինչպէ՞ս է հասկանում սոցիալ-դեմոկրատական քանուորական կազմակերպութիւնը», որը խիստ կերպով է հանդէս էր դալիս քանուորական շարժման մէջ առանձին ազգերի իւրաքանչեւ շահերը հաշուի չառնելու եւ արհամարհելու դէմ: Այդ յօդուածում Ստալինն այսպէս էր ամփոփում իր տեսակէտները ազգային հարցի քննադատում՝ յետեւելով կուսակցական ծրագրի վրայ:

«Ամէնից առաջ անհրաժեշտ է յիշել, որ Ռուսաստանում գործող սոցիալ-դեմոկրատական պարտիան իրեն անուանել է Ռուսաստանի, (եւ ոչ ռուսական): Ըստ երեւոյթի, դրանով նա կամեցել է մեզ ցոյց տալ, որ նա իր դրօշի տակ է ժողովելու ոչ միայն ռուս պրոլետարներին, այլ նաեւ Ռուսաստանի քաղաքացիները ազգային հարցի քննադատում, հետեւապէս, նա բոլոր միջոցները ձեռք կ'առնէր նրանց միջեւ կանգնեցրած ազգային միջնորդները ոչնչացնելու համար:

«Այնուհետեւ, մեր պարտիան «ազգային հարցը» մաքրեց նրան պարտաւոր այն մշտնջի, որը նրան խորհրդաւոր տեսք էր տալիս, այդ հարցը բաժանեց մի քան

նի առանձին տարրերի, նրանցից իւրաքանչիւրին դասակարգային պահանջի բնոյթ տուեց եւ դրանք ծրագրի մէջ շարադրեց առանձին յօդուածների ձեւով: Դրանով նա պարզ ցոյց տուեց մեզ, որ Իմ.Ֆն.Ս. վերցրած՝ «այսպէս կոչուող «ազգային շահերը» եւ «ազգային պահանջները» առանձին արժէք չունեն, որ այդ «շահերն» ու «պահանջները» ուշադրութեան արժանի են լիկ այնքան, որքան դրանք առաջ են շարժում կամ կարող են են առաջ շարժել պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցութիւնը, նրա դասակարգային զարգացումը»:

Ազգային հարցի վերաբերեալ զազափարտկան պայքարը շարունակուեց եւ բուռն բնոյթ ստացաւ մանաւանդ 1912-1914 թուականներին, երբ աւստրիական սոցիալ-դեմոկրատների եւ Ռուսաստանի մենչեւիկների ու զանազան ազգային բանուորական կուսակցութիւնների կողմից առաջադրուեց եւ պաշտպանուեց «ազգային-կուլտուրական աւտոնոմիայի» դրոյթը՝ որպէս ազգային հարցը բազմազգ պետութիւններում լուծելու լուստգոյն եւ աւելի նպատակայարմար միջոց: Այդ կապակցութեամբ Ռուսաստանում եւ արտասահմանում, սոցիալ-դեմոկրատական շրջանակներում, աշխուժացաւ ազգային հարցի քննարկումը: Լենինը դրեց իր «Քննադատական գիտություններից ազգային հարցի մասին», «Ազգերի ինքնորոշման իրաւունքի մասին», «Ինքնորոշման մասին վիճաբանութեան արդիւնքները» հւն. յօդուածները: Ստալինը դրեց «Մարքսիզմը եւ ազգային հարցը» ուսումնասիրութիւնը, որի ճիշդ գլուխը նուիրուած էր այս նիւթին, — «Կովկասցիները, լիւրդատորների կոնֆերանցիան»: Այդ բոլոր գրութիւններում նպատակ էր գրուած անաւարկելիօրէն պաշտպանել «պատմա-էկոնոմիական թէորիան» ազգային հարցում եւ դա հակադրել ազգային-կուլտուրական ինքնավարութիւն պահանջողների «հոգեբանական թէորիային»: Այսինքն՝ ազգային հարցը դարձնել ուսկ տեքստուրիալ հարց: Լենինը եւ իր կողմնակից-

ները դնում էին «ազգերի ինքնորոշման» պահանջը, բայց թէ ինչպէ՞ս եւ ի՞նչ նըպատակով էր արւում այդ, կարելի է տեսնել նրանց զրուցութիւնների ամէն մի տողի մէջ: Լենինը ընդունելով, որ Ռուսաստանում ինքնորոշին եւ անկախ ազգային պետութիւն ստեղծելը դեռեւս մնում է որպէս միմիայն վերականգնող ազգի արտոնութիւն, գրում էր—

«Ազգերի ինքնորոշում ասելով հասկացւում է նրանց պետական անջատումն օտարազգի կողմերէն, հասկացւում է ինքնորոշին ազգային պետութեան գոյացումը»: Կամ՝ «Մարքսիստների ծրարում «ազգերի ինքնորոշումը» պատմա-էկոնոմիկական հայեցակէտից չի կարող այլ նշանակութիւն ունենալ, բացի քաղաքական ինքնորոշումից, պետական ինքնորոշութիւնից, ազգային պետութիւն կազմելուց»: Կամ՝ «Եթէ մենք չառաջարկենք եւ ազդեցիկ մէջ չանցնենք անջատման իրաւունքի լոգոնդը, մենք ջուր անձեռք կը լինենք ոչ միայն ճնշող ազգի բուրժուազիայի ջրաղացին, այլեւ այդ ազգի ֆեոդալների ու արտոնիւղի միջոցով: Բայց՝ «Ազգերի անջատման իրաւունքի ընդունումը ամբողջ Ռուսաստանի մարքսիստների եւ, առաջին հերթին, վերականգնող կողմից ամենեւին չի բացատրւում այս կամ այն ճնշում ազգի մարքսիստների ազդեցիկ անջատման դէմ, ինչպէս ապահարգանքի իրաւունքի ընդունումը չի բացատրւում այս կամ այն դէպքում ազգային ապահարգանքի դէմ»:

Այդի առջեւ ունենալով «ազգային-կուլտուրական ինքնավարութեան» եւ «ազգերի ինքնորոշման» սկզբունքները, առաջին հայեցողից այն տպաւորութիւնը կարելի է ստանալ, թէ առաջինը սահմանափակ կարելիութիւններ է խոստումնաւորում ազգերին, իսկ երկրորդը առատաձեռնորէն երաշխաւորում է ազգերի առաւելագոյն իրաւունքները՝ ընդհուպ մինչեւ նրանց պետական անկախութեան, անջատման ճանաչումը: Այդ ազգային է թուում, որովհետեւ մինչդեռ ազգային-մշակութային ինքնավարու-

թեան կողմնակիցները նկատի ունէին ազգերի հիմնական եւ մնայուն հոգեբանական պահանջները, Լենինը նկատի ունէր ազգերի գոյութեան պատմա-տնտեսական ժամանակաւոր հանգամանքները, ուստի էր յիսկատար «ինքնորոշման իրաւունք» խոստանալով՝ միաժամանակ ազատութիւնը նրանց հետագայ միացումը եւ ձուլումը, ելնելով միասնական կոմունիստական կազմակերպութեան ընձեռնած տուեալներից:

Այդ հակադիր տեսակէտների բախումը իր արտացոլումը գտաւ նաեւ հայկական իրականութեան մէջ: 1913 թուին յայտնի մտաւորական Գալիթ Անանուել հանդէս եկաւ մի յօդուածաշարով՝ «Ազգային հարցը եւ դեմոկրատիան» վերնագրով, որտեղ նա պաշտպանում էր ազգային-մշակութային ինքնավարութեան դրոյթը: Անշուշտ, նա մենակ չէր: Այդ դրոյթը պաշտպանում էին նաեւ ուրիշները այն ժամանակ: Սակայն Անանուելի դրոյթները անելի մեծ արձագանք ունեցան՝ Հեղինակի տեսական պատրաստակներին եւ հարցը հայ հասարակութեան համար հարազատ ձեւով դնելու շնորհիւ: Ի պատասխան այդ յօդուածաշարի, հայ մարքսիստ Ստեփան Ծաւումեանը հանդէս եկաւ մի գրքոյկով՝ «Ազգային-կուլտուրական աւտոնոմիայի մասին» վերնագրով: Գրքոյկում հանգամանորէն քննելով Անանուելի արտայայտած տեսակէտները՝ Ծաւումեանը ջանում էր հերքել ազգային-մշակութային ինքնավարութեան դրոյթը եւ պաշտպանում էր «ազգերի ինքնորոշման» Լենինի տեսակէտը: Սակայն նա ծաղրելով Անանուելի յօդուածաշարի համար գրքուած էպիլոգը, թէ՛ «Այն բանուր դասակարգը, որ հաշտւում է ստորին ցեղի վիճակի հետ, չի ըմբոստանար եւ ստորին դասակարգի վիճակի դէմ», իր գրքոյկի վերջում գրում էր—

«Եթէ մենք ուզենայինք մի էպիլոգ ընտրել մեր յօդուածի համար, Գ. Ա. Նի այդ տողերին կը հակադրէինք դերձանական մարքսիստների վերջեւում

Լիբրերիստի հետեւեալ գեղեցիկ խօսքերը՝

«Մեզ, սոցիալիստներին համար գոյութիւն չունի ազգութիւնների խնդիրը։ Մենք ճանաչում ենք միայն երկու ազգութիւն՝ մի կողմից՝ կապիտալիստներին, բուրժուազիային, իշխող դասակարգի ազգութիւնը, իսկ միւս կողմից՝ պարտաւորների, բախտից հալածուածների, բանուոր դասակարգի ազգութիւնը... Բոլոր երկրների բանուորները կազմում են մի ազգութիւն՝ հակառակ միւս ազգութեան, որը նոյնպէս մի է բոլոր երկրներում»։

Ահաւասիկ ազգերի վերաբերեալ այսպիսի մտայնութիւն ունեցող բուլղերիկներն էին առատաձեռնօրէն խոստանում «ազգերի ինքնորոշում», որպէսզի ճանաչարհէր յայն բացուի հետագայ բռնի միացման համար։

Սակայն, նոյնիսկ խորհրդային իւլիստութիւն հաստատուելուց յետոյ, Լենինը, հեռաւոր նպատակ ունենալով հանդերձ ազգերի վերջնական ձուլումը, նրկատի ունէր առկայ եւ հնարաւոր բոլորն դիմադրութիւնը եւ ստիպուած էր ընդունել, որ՝

«Քանի զեռ գոյութիւն ունեն ազգային ու պետական տարբերութիւններ ժողովուրդներին ու երկրներին միջեւ, — իսկ այդ տարբերութիւնները պահպանուելու են տակաւին շատ ու շատ երկար ժամանակ՝ նոյնիսկ համաշխարհային մասըտարով պրոլետարիատի դիկտատուրան իրաւաւորուելուց յետոյ, — բոլոր երկրներին կոմունիստական շարժման միջազգայնական դործելակերպի միասնութիւնը պահանջում է ոչ թէ բազմապատկերան վերացում, ոչ թէ ազգային տարբերութիւնների ոչնչացում (զոանհեթեթ ցնորք է ներկայ ժամանակի համար, այլ կոմունիզմի այն եխմակամ սկզբունքների դործադրում (Խորհրդային իշխանութիւն եւ պրոլետարիատի դիկտատուրա), որը Յիշդ կերպարամաւփոխէր այդ սկզբունքները մասնաւոր հարցերում, ճիշդ յարմարեցնէր, զործածէր դրանք աղջային ու աղջայինպետական տարբերութիւնների նկատմամբ»։

1920-30 թուականներին Հայաստանում եւս այդ կարգի մարքուլենինան դրականութեան ուսումնասիրութեամբ էին դրադուած կուսակցական մտաւորականները։ Այդ ժամանակ տեղ չկար յայտարարելու հայ ազգի պատմութեան ուսումնասիրման համար, քանի որ դա աւելորդ մտահոգութիւն էր համարում՝ համաշխարհային պատմական հարցերի լուծման համեմատութեամբ։ Բաւական էր համարում, որ ազգը օրօրում է իր գոյութեան ազատ պատրանքով, որ հանդուրժում էր նրա անուանական ինքնավարութիւնը՝ կոմունիզմի ուղին մտնելու պայմանով։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

